

Երևանի պետական համալսարան

Ստեփանյան Լիլիթ Սամուելի

**Հասարակական
կազմակերպությունների դերը ՀՀ-
ում քաղաքացիական հասարակության
կայացման գործընթացում**

**ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման արեւախոսություն**

Գիտական ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Ս.

Ալեքսանյան

Երևան – 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ.....
....3

ԳԼՈՒԽ 1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒ ԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ.....14

1.1. Քաղաքացիական հասարակության կայացման հիմնահարցերը քաղաքական մտքի պատմության մեջ14

1.2. Քաղաքացիական հասարակության քաղաքագիտական հիմնական սահմանումները38

1.3. Պետություն և քաղաքացիական հասարակության փոխհարաբերություն քաղաքական ընթացակարգերը46

ԳԼՈՒԽ 2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒ Մ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒ ԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ.....62

2.1. Հասարակական կազմակերպությունների սահմանումներն ու կայացման հիմքերը62

2.2. Հասարակական կազմակերպությունները որպես միջնորդ պետական կառավարման մարմինների և հասարակության միջև.....77

2.3. Հասարակական կազմակերպությունների կառուցվածքային-գործառնական առանձնահատկությունները96

2.4. ՀՀ-ում հասարակական կազմակերպությունների կայացման մարտահրավերները114

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ.....137

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ.....142

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Ուսու մնասիրվող թեմայի արդիականությունը: Ժամանակակից ժողովրդավարական քաղաքական համակարգերի ուսու մնասիրությունները սերտորեն կապված են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավական պետության հիմնահարցերի հետազոտման հետ: Ժողովրդավարության մեկնությունների ներկայիս համատեքստում կարևորվում են քաղաքացիական հասարակության հաստատությունների, մասնավորապես՝ հասարակական կազմակերպությունների ազատ գործունեության հնարավորությունները, պետական կառույցների հետդրանց փոխգործակցության մոդելները:

Քաղաքացիական հասարակության համակարգում հասարակական կազմակերպությունների տեղին ու դերին վերաբերող հարցադրումները համեմատական քաղաքագիտության տեսական և գործնական նշանակություն ունեցող և արդիական կարևորություն ներկայացնող հիմնախնդիրներից են: Տևական ժամանակ «պետություն» և «քաղաքացիական հասարակություն» հասկացությունները չէին տարբերակվում, ավելին՝ հանդես էին գալիս որպես համարժեք իրողություններ: Այդ հասկացությունների իմաստային սահմանները հստակեցվեցին, երբ տարանջատվեցին դրանց գործառույթները: Քաղաքացիական հասարակության ձևավորումը սահմանազատեց պետության հասարակական և քաղաքական ենթահամակարգերը:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը, պետական իշխանության կառույցների հետ համագործակցությունը, դրանց ստեղծման և զարգացման մեխանիզմները, դերն ու նշանակությունը իրավական պետության և ժողովրդավարության կայացման գործընթացում դարձել են գիտական ուսու մնասիրությունների և հետազոտությունների առանցքային թեմաներից մեկը:

Քաղաքացիական հասարակության, ինչպես նաև իրավական պետության կայացման խնդիրն այսօր ՀՀ-ում դարձել է ժամանակի հրամայական:

Պետության և հասարակության միջև առկա խնդիրները լուծելու գործում էական դերակատարություն է վերապահված քաղաքացիական հասարակության կառույցներին, որոնցից ակտիվ և ազդեցիկ են հատկապես հասարակական կազմակերպությունները: Վերջիններս պետության կառավարման գործընթացներն արդիականացնելու, ժողովրդավարական ինստիտուտները զարգացնելու անփոխարինելի գործիքներ են:

Քաղաքացիական հասարակության ձևավորման և դրա հաստատությունների հզորացման ճանապարհին առկա խնդիրների լուծման առումով էապես կարևոր է այդ հաստատությունների ձևավորման ու զարգացման առանձնահատկությունների, այդ առումով միջազգային փորձի և ազգային յուրահատկությունների, դրանց ազդեցությունն ավելացման եղանակների ու հեռանկարների վերհանմանն ուղղված գիտական հետազոտությունների դերը:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը: Ժամանակակից հասարակության պահանջմունքները և շահերը իրենց ազդեցությունն են թողնում ոչ միայն դարեր շարունակ հայ հասարակությանը բնորոշ միջանձնային, միջխմբային հարաբերությունների, այլև կենսակերպի, արժեհամակարգի, ազգային մտածողության, վարքի նորմերի, ինչպես նաև պետական կառույցների հետ փոխհարաբերությունների, սպասելիքների և ակնկալիքների, հաղորդակցման մեխանիզմների վրա: Քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերության մոդելների հիմնախնդիրը կարևորվում է հատկապես անցումային հասարակություններում: Մասնագիտական գրականության մեջ հիմնախնդրի ուսումնասիրությունը անդրադարձել են տարբեր հեղինակներ¹: Քաղաքացիական հասարակության գոյության ողջ

¹ Տե՛ս Ալեքսանյան Ա. Ս., Քաղաքացիական հասարակություն // Քաղաքագիտություն (խմբ. Յ. Մանուչարյան և ուրիշներ), Եր., 2006, էջ 311-324, **Հովհաննիսյան Հ.**, Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները, Եր., 2003, **Մկրտչյան Ա.**, Արևմտյան մոդելի երրորդ սեկտորի հարմարման գործընթացները հետխորհրդային հասարակություններում // 21-րդ դար, թիվ 3 (55), 2014, էջ 107-132, **Խուրշուդյան Ռ.**, Արդի հասարակության զարգացման ուղիները // Հանրապետական, թիվ 6 (15), 2004, **Александр А. С.**, Цивилиархические основы демократизации политического режима в Армении // Центральная

տրամաբանությունը ենթադրում է ավելի «նեղ ու սահմանափակ իշխանություն» պետություն: Որքան այդ իշխանությունը «նեղ» է, այնքան ավելի նպաստավոր են պայմանները քաղաքացիների կամավոր միությունների ստեղծման և ազատգործունեության համար:

Քաղաքագիտության մեջ այս գործընթացը սահմանվում է որպես պետական ուղղաձիգ իշխանության և հասարակական հորիզոնական կապերի հակադարձ հարաբերակցություն: Հնարավոր է երկրում իրականացնել քաղաքական արդիականացում առանց հորիզոնական ակտիվ «ալիքների»: Այս «ալիքները» հնարավորինս ճկուն ու քիչ ռեսուրսներով իրականացնում է քաղաքացիական հասարակությունն իրակտիվ ինստիտուտների՝ հասարակական կազմակերպությունների միջոցով: Ի դեմս հասարակական կազմակերպությունների՝ աշխարհը թևակոխում է սկզբունքորեն նոր հասարակական-քաղաքական հարաբերությունների փուլ, օրինակ՝ փոխվում է երկրի քաղաքական օրակարգը, իսկ ազգային անվտանգության հիմնախնդիրը դադարում է միայն պետության հոգսը լինելուց²:

21-րդ դարն աչքի է ընկնում քաղաքական կյանքում նոր սուբյեկտների ձևավորմամբ և գործունեությամբ. մարդկության ռազմավարական ռեսուրսներից է դառնում սոցիալական գործընկերությունը վերազգային կազմակերպությունների գլխավորությամբ՝ փոխարինելով հանրային կառավարման ավանդական ձևերին:

Քաղաքացիական հասարակություն-պետություն, հասարակական կազմակերպություններ-պետական իշխանության կառույցներ համագործակցության վերաբերյալ աշխատությունները³

Азия и Кавказ // Журнал социально - политических исследований, Том 14, вып. 3, 2011, стр. 132-145, **Луман Н.**, Общество общества, Часть IV. Дифференциация. М., Логос, 2004, **Погосян Г.**, Армянское общество в трансформации, Лусабац, 2003, **Козн Д. Л., Арато Э.** Гражданское общество и политическая теория. М., 2003, **Sampson S.**, Too much Civil Society?, Denmark, Danish Institute for Human Rights, 2004, pp. 197 – 220.

² Տե՛ս **Андреева О. С.**, Неправительственные организации и политические изменения в мировом сообществе, Известия Алтайского государственного университета, № 4-3 // Политология, 2010, стр. 243-247:

³ Տե՛ս **Ալեքսանյան Ա. Ս.**, Սոցիալական գործընկերությունը քաղաքացիավարական սոցիալական պատասխանատվության համակարգում, // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2010, № 132.6, էջ 24-36, **Ալեքսանյան Ա. Ս.**, Սոցիալական գործընկերության հարցի շուրջ // «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, տնտեսագիտություն», 2010, № 132.5, էջ 5-14, **Соловьев А. И.**, Политология, Политическая теория, политические технологии. М.: Аспект Пресс, 2014, **Грудцына Л. Ю.**, Возможен ли диалог между ГО и государством // http://www.ni-journal.ru/archive/14928136/n_3_2009/7b5c5d88/b5f73515/-print=1.htm (վերջին դիտում՝ 14.03.2016թ.), **Абакумов С. А.**, Гражданское общество и власть: противники или партнеры? М.: Галерея, 2005, **Дробязко С. Г.**, Соотношение социального правового государства и правового Гражданского общества // Конституционно-

բազմավաթիվ են, առկա են ոչ որտեղ համակարգող մի շարք իրավական ակտեր⁴, տեսական վերլուծություններ⁵, պաշտոնական փաստաթղթեր⁶:

Աշխատանքի համար սկզբնաղբյուր են հանդիսացել միջազգային կազմակերպությունների կամ դրանց տեղական գրասենյակների հրապարակումները և գեկոլյցները⁷:

Յետագոտու թյան մեջ կարևորվող հիմնախնդիրների հնարավոր լուծման համար տեսական հիմք են դարձել հայ և օտարերկրյա տեսաբանների գիտական աշխատանքները և հոդվածները⁸,

правовые проблемы формирования социального правового государства: Материалы межд. науч.- практ. конф/, 30-31 марта. Минск, 2000, стр. 386-390, **Хоконов А. А.**, Правовое Государство и Гражданское Общество: Некоторые аспекты взаимодействия, Вестник Военного университета, 2009, N 3/19, стр. 87-90:

⁴ Տե՛ս «Հանրային խորհուրդ, Փաստաթղթեր, Հայաստանի Հանրապետության նույն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգ (նախագիծ)», Եր., 2013 // <http://www.publiccouncil.am/hy/documents/item/2012/10/22/program1> (վերջին դիտում՝ 14.03.2016թ.), «Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտե, թիվ 2006(2) հանձնարարական, ԵՄ հանձնարարական, Հիմնական սկզբունքներ, 1-ին մաս», Եվրոպայի խորհուրդ, 11.01.2006 թ., 952-րդ նիստ, Երևան:

⁵ Տե՛ս **Ishkanian A.**, Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia. Routledge, 2008; **Мерсиянова И. В., Якобсон Л. И.**, Сотрудничество государства и структур гражданского Общества в решении социальных проблем, Вопросы государственного и муниципального управления. 2011. № 2, стр. 5-24 // <http://www.civisbook.ru/files/File/vgimu.pdf> (վերջին դիտում՝ 14.03.2016թ.), **Грум Дж.**, Растущее многообразие международных акторов // Международные отношения: социологические подходы / Под ред. проф. **П. А. Цыганкова**. М., 1998, с. 222-239, **Beigbeder Y.**, The role and status of international Humanitarian volunteers and organizations. The Right and Duty to Humanitarian Assistance. Brill: Nijhoff, 1991:

⁶ Տե՛ս ԶՀ-ում Հանրային Ցանցի պաշտոնական կայք՝ <http://hanraincanc.ucoz.org> (վերջին դիտում՝ 20.05.2016թ.), «Քաղաքացիական հասարակությանը և համագործակցությանը պետական կառույցների հետ խորհրդատվական փաստաթուղթ» // ԵՄ խորհրդատվական խումբ ՀՀ-ում: Եր., 2012, Հանրային խորհրդի կանոնադրությունը հաստատելու և Հանրային խորհրդի անդամներ նշանակելու մասին՝

<http://publiccouncil.am/hy/documents/item/2013/12/09/198>, <http://syunik.gov.am/files/legislation/320.pdf> (վերջին դիտում՝ 10.05.2016), Ազգային ժողովն ու Հանրային ցանցը կհամագործակցեն // Հայաստանի Հանրապետության չորրորդ գումարման Ազգային ժողովի և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միավորում հանդիսացող Հանրային ցանցի միջև համագործակցության հոլշագիր (02.12.2010)՝ <http://www.lragir.am/index/arm/0/country/view/41437> (վերջին դիտում՝ 10.05.2016):

⁷ Տե՛ս «Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում. Համեմատական հետազոտություն», Եր., 2001, «CIVICUS, Քաղաքացիական հասարակության ինդեքս, Հայաստանի քաղաքացիական հասարակությունը. Անցումային փուլից դեպի համախմբում», Եր., 2010, «Տարեկան հաշվետվություն - 2013, «Թրանսփարենսի ինտերնեյշնլ» 2013թ. տարեկան գեկոլյցը», Եր., 2013, «ԶԿ կայունության ցուցանիշ – Հայաստան-2013», ԶՀՀ/ԱՄՆ ՍԶԳ, հունիս, Եր., 2014, «Կրոնական հանդուրժողականությունը ՀՀ-ում», Եր., ՀՀԺԿ, 2014, **Բլու Ռ., Ղազարյան Յ.**, Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում, համեմատական հետազոտություն, Եր., ՀՈՒՅՍԶ ՀԿ Հայաստան, 2004, «Հասարակություն և հասարակական կազմակերպություններ. փոխարարություններ ինդիքսներ և բարելավման ուղիներ», Եր., ԵՊՀ, ԲՀՀ, 2014, «ԶԿ-ների ներգրավվածությունը քաղաքականության մշակման և իրականացման մոնիթորինգի գործում: Կարիքներ և կարողություններ: Հայաստան», Եր., 2015 և այլն:

⁸ Տե՛ս **Hovhannisyan H.**, The Factor of Human Rights Protection as Criteria for the Development in the Social System, in: **A. Mihr, A. Mkrtichyan, C. Mahler, R. Toivanen** (Eds.), Armenia: A Human Rights Perspective for Peace and Democracy (Human Rights, Human Rights Education and Minorities). Potsdam, 2005, pp. 23-30, **Бляхман Б. Я.**, Гражданское общество: теоретическая конструкция или практическая реальность?, Ползуновский вестник, 2005, N 1, стр. 233-240, **Тодер И.**, Что такое гражданское общество, стр. 156-167//

համաշխարհային պրակտիկայում տեղ գտած հասարակական համակարգի գործակցության մեխանիզմների առանձնահատկությունները վերաբերյալ հայեցակարգերը⁹ և այլն:

Հետազոտության համար օգտագործվել են ՀՀ օրենքները և իրավական ակտերը¹⁰, քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպությունների վերաբերյալ տպագիր և էլեկտրոնային քաղաքացիական աշխատությունները¹¹, ինչպես նաև մի շարք ինտերնետային պաշտոնական կայքեր և աղբյուրներ¹², ամսագրեր, պարբերական մամուլի հրատարակումներ¹³ և այլն:

http://www.russianscientist.org/files/archive/Philos/2006_TODER_1.pdf (վերջին դիտում՝ 14.03.2016թ.), **Гаджиев К. С.**, Проблема гражданского общества: Идеиные истоки и основные вехи формирования // Вопросы философии. 1991. № 7 // http://files.school-collection.edu.ru/dlrstore/f9bf0a1e-f6db-493b-b34a-524f30849375/%5BCIVSal1011_10-11%5D_%5BTS_52%5D.html (վերջին դիտում՝ 14.03.2016թ.), **Парсонс Т.**, Система современных обществ / Пер. с англ. Л. А. Седова и А. Д. Ковалева. Под ред. М. С. Ковалевой, М.: Аспект Пресс, 1998:

⁹ Տե՛ս «Հանրային խորհուրդ, Փաստադրեր, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարություն հայեցակարգ (նախագիծ)», Եր., 2013, «ՀՀ ՀԿ զարգացման ռազմավարական հայեցակարգ», Եր., 2012, «Հայեցակարգ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների /նախագիծ/», Եր., 2013:

¹⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով) // <http://www.parliament.am/parliament.php?id=constitution> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 04.12.2001թ.) // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1295&lang=arm> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), «Կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 14.04.1999թ.) // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1494&lang=arm> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.):

¹¹ Տե՛ս **Հովհաննիսյան Ջ.**, Քաղաքացիական հասարակություն. Քաղաքական ինստիտուտների և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը համակարգի ներդաշնակ զարգացման ու անվտանգության տեսանկյունից // Իմաստասիրական անդրադարձներ, գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ, Երևան, 2004, էջ 30-50; **Վարդանյան Թ., Ավետիսյան Կ.**, Երիտասարդական հասարակական կազմակերպությունների դերը ՀՀ-ում, Եր., 2005; **Кальной И. И.** и др., Гражданское общество: истоки и современность / Науч. ред. проф. И. И. Кальной, доц. И. Н. Лопушанский, /3-е изд./, изд. Р. Асланова «Юридический центр Пресс», 2006, **Грин Д.**, Возвращение в гражданское общество: Социальное обеспечение без участия государства / пер. с англ. М. Карабочкина, под ред. А.Гусев/, Москва: Новое издательство, 2009, **Зубов А.**, Современное русское общество и civil society: границы наложения // Pro et Contra, том 2, 1997, № 4, стр. 22-37:

¹² Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ՝ <http://www.arlis.am>, Հանրային Ցանցի պաշտոնական կայք՝ <http://hanraincanc.ucoz.org> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), ՀՀ Հանրային խորհրդի պաշտոնական կայք՝ <http://www.publiccouncil.am/hy> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), Կարմիր խաչի միջազգային կազմակերպության պաշտոնական կայք՝ <https://www.icrc.org/en> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), Հանրային Ցանցի պաշտոնական կայք՝ <http://hanraincanc.ucoz.org> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), «ՀՀ-ում գրանցված կրոնականական կազմակերպությունների ցանկ», Երևան // http://www.gov.am/u_files/file/kron/Tsutsak2-%20herakhos-new.pdf (վերջին դիտում՝ 26.06.2016թ.):

¹³ Տե՛ս «Կրոնի հարցերով լիազորված պետական մարմնի գործառնությունները խիստ սահմանափակ են, 31 մայիսի, 2010թ.» // <http://armenpress.am/arm/print/605451> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), «ՀՀ Հանրային խորհրդի արձագանքը ՀՀ-ում ՌԴ դեսպան Ի.Վոլինկինի հայտարարության վերաբերյալ», 13.05.2014 // <http://www.aravot.am/2014/05/13/459851> (վերջին դիտում՝ 10.05.2016թ.), «Հայաստանում քաղաքացիական հասարակությունը զարգացում է ապրում», 27.12.2012 //

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է վեր հանել հասարակական կազմակերպությունների դերը քաղաքացիական հասարակության կայացման, մասնակցային ժողովրդավարության, ժողովրդավարական կառույցների զարգացման և ամրապնդման գործում, դրանց դերակատարությունը հանրային և քաղաքական կառավարման արդիականացման գործընթացներում, բացահայտել դրանց գործունեությունը խոչընդոտող ինստիտուցիոնալ և օրենսդրական բացերը, սոցիալ-հոգեբանական, սոցիոմշակութային գործոնները:

Այս նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրվել են «քաղաքացիական հասարակություն» հասկացության տեսական հիմքերը, ձևավորման պատմությունն ու զարգացման առանձնահատկությունները տարբեր երկրներում ու պատմական ժամանակահատվածներում,
- Որոշակիացվել են քաղաքացիական հասարակությունն դատողության իմաստային բովանդակությունն ու դերը ժամանակակից քաղաքագիտության մեջ,
- Ուսումնասիրվել են քաղաքագիտական գրականության մեջ քաղաքացիական հասարակություն-պետություն համագործակցության մեխանիզմների հնարավոր մոդելները,
- Դասակարգվել են քաղաքացիական հասարակության սահմանումները լայն և նեղ իմաստներով՝ տրված տարբեր մտածողների կողմից տարբեր դարերում,
- Լուսաբանվել են քաղաքացիական հասարակության գործառույթներն ու իշխանության օղակների հետ նրա ինստիտուտների գործընկերային հարաբերությունները արևմուտքում և քաղաքական ցածր մշակութային հետխորհրդային երկրներում, մասնավորապես ՀՀ-ում,
- Որոշակիացվել է ՀՀ-ում գործող հասարակական կառույցների և պետական կառույցներ համագործակցության տիպը,

<http://vazgenmanukyan.am/index.php?id=1627&menu1=175&menu2=175> (վերջին դիտում՝ 10.05.2016թ.), «Послание Президента РФ Федеральному Собранию» // <http://pravaya.ru/expertopinion/116/594> (վերջին դիտում՝ 10.05.2016թ.), «ԱՄՆ ՄԶԳ ներկայացուցիչ. Չավեշտալի է, որ շատերը քննադատում են ՀԿ-ներին որպես գրանտակերների», 16.09.2014 // <http://www.panorama.am/am/news/2014/09/16/report/207585> (վերջին դիտում՝ 20.05.2016թ.):

- Ուսուցման ախրվել են քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպությունների հատվածի ոլորտները համակարգող ՀՀ օրենքները, միջազգային և միջկառավարական պայմանագրերը, իրավական փաստաթղթերը,
- Վերլուծվել և ներկայացվել են ՀՀ հասարակական հատվածը համակարգող օրենքի բացթողումներն ու առաջարկվել հնարավոր լուծումների տարբերակներ,
- Կարևորվել է ՀՀ-ում Հանրային խորհրդի դերը՝ որպես հասարակական և քաղաքական երկխոսությունների հարթակ:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Ուսուցման ախրման օբյեկտը ՀՀ-ում հասարակական կազմակերպությունների միջոցով քաղաքացիական հասարակության կայացմանն ու զարգացմանն ուղղված և պետական կառավարման համակարգում ձևավորվող հասարակական-քաղաքական երկխոսության ամրապնդման գործընթացն է: Ուսուցման ախրության առարկան է քաղաքացիական հասարակության կառույցների և իշխանության տարբեր թևերի միջև համագործակցության ընթացակարգերը, քաղաքացիական հասարակության ձևավորման նախադրյալները ՀՀ-ում, ինչպես նաև հասարակական կազմակերպության ձևավորման կառուցվածքային-գործառնական առանձնահատկությունները, Հանրային խորհրդի դերն ու նշանակությունը երկրի հասարակական համակարգում, հասարակական կազմակերպությունների ոլորտի կայացմանը նպաստող և, հակառակը, խոչընդոտող միտումները, դրանց շրջանակներում իրականացվող օրենսդրական բարեփոխումները և ազդեցությունը ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման վրա:

Ուսուցման ախրվող թեմայի տեսամեթոդական հիմքերը:

Հետազոտության իրականացման համար օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ քաղաքագիտական և միջառարկայական մեթոդաբանություն և մեթոդիկա: Մասնավորապես, ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել են ինդուկցիայի, դեդուկցիայի, համանմանության, ինչպես նաև քաղաքագիտության համեմատական մեթոդները: Որպես հատուկ գիտական մեթոդ օգտագործվել է փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը: Հետազոտության մեջ վերլուծվել են այնպիսի

փաստաթղթեր, ինչպիսիք են ՀՀ ՀԿ մասին օրենքը, քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների ռազմավարական փաստաթղթերը, ՀՀ Հանրային խորհրդի կանոնակարգը և այլն: Համեմատական մեթոդի կիրառմամբ համեմատվել են հետխորհրդային պետության ներքին պետության և քաղաքացիական հասարակության գործակցության ընթացակարգերը, առկա մարտահրավերներն ու ձեռքբերումները: Աշխատանքում կիրառվել են նաև վիճակագրական, համակարգման և դասակարգման մեթոդները: Վերջինիս կիրառմամբ դասակարգվել են քաղաքացիական հասարակության լայն և նեղ սահմանումները, եզրահանգումները: Աշխատանքում վիճակագրական, քանակական և որակական վերլուծության միջոցով ուսումնասիրվել է ՀՀ-ում մարդ-ՀԿ հարաբերակցությունը, ըստ քանակի՝ դրանց որակական ազդեցությունը երկրի ներսում ընթացող հասարակական-քաղաքական գործընթացների վրա:

Ուսումնասիրության նորույթը: Հետազոտության առջև դրված խնդիրների իրագործման ընթացքում ձեռք են բերվել տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ հատկապես կարևորվում են հետևյալները.

- ՀՀ-ում ժողովրդավարության ամրապնդման գործընթացներում 3-րդ հատվածի դերի կարևորմամբ տրվել է «քաղաքացիական հասարակություն» հասկացության նոր սահմանում. «**ԲՀ-ն հանրային բարիքի պաշտպանությանը միտված հասարակական ոլորտի ինստիտուտների համակարգ է, որը, ձևավորվելով պետությանից հարաբերականորեն անկախ քաղաքացիական ինքնագիտակցության հիման վրա, երբեմն պետական իշխանության մարմինների փոխհամագործակցության, երբեմն դրանց հետ հակակշիռ դառնալով, հաճախ այլ ընտրանքային, ոչ ստանդարտ որոշումների՝ քաղաքացիական անհնազանդությունների, նախաձեռնությունների կամ կազմակերպությունների գործունեության միջոցով հնարավորություն է ստանում հասնել ու մասնավոր-անհատական և կոլեկտիվ շահերի իրացմանը՝ գործելով տվյալ երկրի սահմանադրական դրույթների, օրենքների շրջանակներում՝**

սահմանելով հասարակական համերաշխության, համակեցության ու սարու մակցման ձևաչափերը»:

- Հիմնավորվել է քաղաքացիական հասարակության զարգացման և կայացման գործընթացներում իրազեկ, օրինապատ և ակտիվ քաղաքացու դաստիարակության կարևորությունը: Վերհանվել է այդ գործում քաղաքացիական կրթության անհրաժեշտությունը: Առաջարկվել է ՀՀ առջև ծառայած արդի խնդիրների համատեքստում քաղաքացիական կրթության հայեցակարգի հիմնադրույթներն արտացոլող նոր սահմանում. **«Քաղաքացիական կրթությունը անձի ձևավորմանը միտված ուսումնական գործընթաց է, որը կոչված է նպատելու քաղաքականության մասին գիտելիքների և սովորողի սոցիալական որակների ձևավորմանը՝ հիմքում ունենալով ժողովրդավարության հիմնարար արժեքների և ազգային գաղափարախոսության բաղադրատարրերի միածուլումը»:**
- ՀՀ-ում հասարակական կազմակերպությունների ոլորտն ու գործունեությունը կարգավորող իրավական դաշտի ուսումնասիրման և վերլուծության արդյունքում վեր են հանվել ՀՀ օրենսդրական բացերն ու թերությունները, որոնք առկա են մասնավորապես ՀԿ-ների գրանցման, գործունեության թափանցիկության ապահովման, ներքին ժողովրդավարության ընդլայնման, ֆինանսական կայունության ամրապնդման, լուծարման, գույքի տնօրինման գործընթացներում: Չարգացած երկրներում արդեն քննությունն բռնած ոլորտը կանոնակարգող օրենսդրական նորմերի ուսումնասիրության հիման վրա տրվել են հնարավոր լուծումներ և երաշխավորություններ՝ նշված բացթողումների հետևանքով առաջացող խնդիրներից ապագայում խուսափելու համար:
- Ուսումնասիրել են քաղաքացիական հասարակության ինստիտուտների և պետական կառույցների միջև գործակցության միջազգային փորձն ու մեխանիզմները: Առաջարկվել են մեր երկրի համար առավել արդյունավետ ու հեռանկարային մոդելներ: Մասնավորապես, ցույց է տրվել քաղաքացիական հասարակության բախումնային և էտատիստական մոդելների անհեռանկարայնությունը և հիմնավորվել է գործակցային մոդելի նպատակահարմարությունը հայաստանյան հասարակության անցնցում և կայուն զարգացման տեսանկյունից:

- Առաջարկել է ստեղծել ՀՀ հասարակական կազմակերպությունների էլեկտրոնային բազա, որտեղ կստեղծվի և կպահպանվի հասարակական կազմակերպությունների գործունեության, իրականացրած ծրագրերի, ինչպես նաև ՀԿ-ՀԿ համատեղ գործակցության, գործընկերության մասին տեղեկատվություն:
- Առաջնորդելով միջազգային փորձով և ՀՀ հասարակական կազմակերպությունների մասին օրենքով՝ առանձնացվել են ՀՀ-ում գործող հասարակական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները՝ միաժամանակ դիտարկվել դրանց դրական և բացասական միտումները՝ թե՛ ձեռքբերումների և թե՛ բացթողումների տեսանկյունից:
- Մատնանշվել է քաղաքացիական հասարակության կառույցների և հասարակական կազմակերպությունների ոլորտի զարգացման հնարավորություններն ու հեռանկարները մասնավորապես՝ հասարակական կարծիքի ուսումնասիրման, օրենքների և իրավական այլ փաստաթղթերի ու դրանց նախագծերի փորձաքննության, պետական կառույցների կողմից իրականացվող ծրագրերի մշտադիտարկման, հետազոտական և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման, հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության բարձրացման, սոցիալական քաղաքականության նպատակով բյուջեի ծախսերը նվազեցնելու և առավել արդյունավետ դարձնելու առումներով:
- Վերհանվել են ՀՀ-ում պետական (նաև տեղական ինքնակառավարման և տարածքային) կառավարման մարմիններ – հասարակական հատված գործակցության ոլորտում առկա արևմտյան, ռուսական և հայկական քաղաքական մշակույթներին բնորոշ տարրերը, դրանց դրական և բացասական կողմերը:
- Ներկայացվել են առաջարկություններ հասարակության և իշխանության միջև երկխոսության յուրօրինակ հարթակ հանդիսացող և ՀՀ-ում ու տարածաշրջանում իր տեսակի մեջ դեռևս միակ խորհրդակցական մարմնի՝ Հանրային խորհրդի գործունեության բարելավման և դերակատարության ավելացման վերաբերյալ:
- Ուսումնասիրվել է Հանրային խորհրդի քաղաքացիական հասարակության կայացման հանձնաժողովի հետ համագործակցող

թվով 163 ՅԿ-ի և հասարակական այլ միավորումների գործունեությունը՝ ըստ մշակված 8 չափորոշիչների (դրանք կարելի է ներառել 3 հիմնական խմբում՝ ա)հանրային ներկայացվածություն և մատչելիություն, բ)հետադարձ կապի մեխանիզմների առկայություն, և գ)իրականացրած ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության և հաշվետվության առկայություն): Սույն արդյունքների ամփոփվերլուծությունը հիմք է ծառայել Յանրային Խորհրդի հանձնաժողովների ձևավորման մեխանիզմների բարելավման վերաբերյալ առաջարկությունների համար:

Յետազոտության արդյունքների գիտական և կիրառական

նշանակությունը: Ատենախոսությունը գիտական համակարգված ուսումնասիրություն է, որում վեր են հանվել արդիական հիմնախնդիրներ ոչ միայն հայեցակարգային, այլև ոլորտը կարգավորող օրենսդրական-իրավական դաշտում: Տեղ գտած վերլուծություններն ու առաջարկված հանգուցալուծումները կարող են օգտակար լինել հասարակական և քաղաքական ոլորտի մասնագետների համար՝ հասարակության առջև ծառայած հիմնախնդիրների օրակարգային առաջնահերթության, դրանց լուծմանն ուղղված ռազմավարական ծրագրերի և հայեցակարգերի, նոր երկկողմ (հասարակական կազմակերպություններ-պետություն) կամ եռակողմ (հասարակական կազմակերպություններ-պետություն-մասնավոր հատված) փաստաթղթերի մշակման, ինչպես նաև այդ քաղաքականության ոլորտային ուղղությունների հստակեցման և իրականացման փուլերում: Յետևաբար, ստացված գիտական արդյունքները կարող են օգտագործվել Ազգային ժողովի, կառավարության, Յանրային Խորհրդի և հասարակական կազմակերպությունների կողմից:

Յետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է արդի փուլում պետության հասարակական և քաղաքական համակարգում ժողովրդավարության ինստիտուցիոնալ կառույցների կայացման և զարգացման, հասարակության-իշխանության միջև առկա և խորացման միտում ունեցող անջրպետի չեզոքացման, օրենսդրական դաշտի հետագա կատարելագործման անհրաժեշտությամբ: Աշխատանքում ընդգրկված նյութերը, գիտական արդյունքները և գործնական առաջարկությունները կարող են

օգտագործվել քաղաքագիտության, պետության և իրավունքի, քաղաքացիական կրթության դասընթացներում, ինչպես նաև գիտական հետազոտություններում: Հետազոտության մեջ կատարված առաջարկություններն ու եզրակացությունները կարող են օգտագործվել 3-րդ հատվածի հետ համագործակցության ռազմավարական նոր փաստաթղթեր ու ծրագրեր մշակելիս, օրենսդրական բարեփոխումներ իրականացնելիս, որն էապես կնպաստի ՀՀ-ում քաղաքացիական հասարակության զարգացմանն ու կայացմանը:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ համապատասխանաբար երեք և չորս ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Տեքստի ծավալը՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը՝ կազմում է 157 էջ:

ԳԼՈՒԽ 1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Քաղաքացիական հասարակության կայացման հիմնահարցերը քաղաքական մտքի պատմության մեջ

20-րդ դարի վերջին և 21-րդ դարասկզբին աշխարհում տեղի ունեցող արմատական փոխակերպումներն ու իրադարձությունները գրավեցին տարբեր ոլորտների մասնագետների ու շաղրությունը՝ դառնալով քաղաքագիտական վերլուծությունների թեմա:

20-րդ դարի 60-ական թթ.-ին խորհրդային հասարակագիտության մեջ մուտք գործեց մի տերմին՝ քաղաքացիական հասարակություն, որը համաշխարհային քաղաքագիտության պատմության մեջ վաղուց ուսումնասիրված էր: Սակայն այն չկարևորվեց և լուրջ ուսումնասիրությունների չենթարկվեց՝ որակվելով «արևմտյան արժեք» և «հեգեմոնիան հնոտի»: Եվ միայն 80-ական թթ.-ին գրավեց խորհրդային գիտնականների ու շաղրությունը¹⁴:

¹⁴ См. у Зеленков М. Ю., Политология для юристов. М., Юридический институт МИИТа, 2003, էջ 74:

Խորհրդային Միության անդամ երկրներում քաղաքացիական հասարակության (այսուհետ՝ ՔՀ) մասին պատկերացումներն աղոտ էին և ծանոթ միայն արևմտյան մասնագիտական գրականությանից: Այդ իսկ պատճառով անցումային փուլում գտնվող հասարակությունների ժամանակակից ընկալումներն այս կատեգորիայի վերաբերյալ կարծես շոշափելի չեն: Հստակ չընկալելով դրա կարևորությունը հասարակության և պետության կայացման գործընթացում՝ այն հասարակության մեծ մասի կողմից չընդունվեց և մերժվեց նրա դերը՝ որպես պետական իշխանական համակարգին հակակշիռ կամ նրա գործընկեր:

Այսօր քաղաքագիտական, իրավագիտական, սոցիոլոգիական, փիլիսոփայական գրականության մեջ մեծ կարևորություն է տրվում «քաղաքացիական հասարակություն» հասկացությանը, նրա էությունը, կառավարման այս կամ այն ձևն ունեցող երկրում նրա զարգացման ու կայացման գործընթացի առանձնահատկություններին: Քաղաքացիական հասարակության հիմնախնդիրը ժամանակակից քաղաքագիտական մտքի առանցքային ոլորտներից է՝ պայմանավորված արդի հասարակությունների կյանքում անընդհատ խորացող և տարածվող ժողովրդավարության գործընթացներով: Պետության ինստիտուտի «ներսից» կերպափոխման առանցքային միտումը իշխանության ապակենտրոնացումն է, որը համարժեք ուղեկցվում է ապագանգվածայնացմամբ, սոցիալ-տնտեսական բազմազանության աճով և սեգմենտացմամբ: Իշխանության կենտրոնացումն այլևս չի աշխատում, քանի որ կենտրոնացված իշխանությունն անկարող է համարժեք և օպերատիվ արձագանքել մասնավոր, խմբային և տեղական շահերի աճող ծավալների ու բազմազանությամբ¹⁵:

Այն նպաստում է ՔՀ և պետության գործառույթների հստակ տարանջատմանը, քաղաքացիների դերի բարձրացմանը, կամավորական միություններն է ստեղծում հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտներում:

¹⁵ Տե՛ս **Մարգարյան Մ.**, Պետության ինստիտուտի կերպափոխումը հետարդիականության անցման գործընթացում, 16.07.2014 // <https://mimmargaryan.wordpress.com/2014/07/16/transformation-of-state-institution-in-the-process-of-postmodern-transition/#more-91/> (վերջին դիտում՝ 18.07.2015թ.):

Մինչ հիմնական վերլուծությանն անցնելը հարկ ենք համարում նշել, որ մասնագիտական գրականության մեջ չկա միասնական կարծիք ինչպես «քաղաքացիական հասարակություն» հասկացության առաջացման ժամանակագրության, այնպես էլ դրա «հեղինակային իրավունքների» իրական սեփականատիրոջ մասին: Մի հարցում, սակայն, բոլորը կարծես համակարծիք են. «քաղաքացիական հասարակություն» հասկացությունն այնքան հին է, որքան քաղաքական գիտությունը: Այն անցել է բովանդակային հակասություններով և ի պատմական երկարատև մի ուղի¹⁶:

Ինչո՞ւ է հասարակությունը կոչվում քաղաքացիական և ոչ թե արդյունաբերական, հարուստ, բարձրաշխարհիկ, խորհրդային, հետխորհրդային և այլն: Եթե հասարակությունը պետք է քաղաքացիական կոչվի միայն այն պատճառով, որ կազմված է քաղաքացիներից, ապա այս դրույթն այնքան էլ նոր չէ. քաղաքացու վերաբերյալ միանգամայն ճշգրիտ, ինքնատիպ սահմանում արդեն կար հին աշխարհում: Իսկ եթե խոսքը քաղաքական որևէ համակարգ կամ ռեժիմ ունեցող պետության նկատմամբ քաղաքացու իրավական պատկերացումների և պարտավորությունների մասին է, խիստ ասած՝ հանրապետության նկատմամբ, ապա «քաղաքացի» և «հասարակություն» հասկացությունները դառնում են համարյա անորոշ, և բավականին լուրջ բարդություն է առաջանում միմյանցից տարբերելու, օրինակ, զարգացած եվրոպայի և 3-րդ կարգի երկրների հասարակությունները: Արդյոք այս եզրույթը հերթականը չէ՞ հասարակության մասին եղած մյուս սահմանումների շարքում¹⁷:

ՔՅ մասին տեղեկատվություն ենք ստանում 2 աղբյուրից՝ հասկացության պատմությունից ու տեսությունից և սոցիալական շարժումների ձևավորման գործընթացի ուսումնասիրությունից: ՔՅ տեսաբաններից շատերի կարծիքով (Կոզելեկ, Արենդտ, Յաբերմաս) անհասկանալի է, թե ինչու սկզբնավորվելով վաղ դարերում՝ ՔՅ հասկացությունն սկսել է կիրառվել ընդամենը 17-րդ դարից: Որոշ տեսաբաններ (Մարքս, Գրամշի, Ֆուկո, Արենդտ) այն չեն կարևորում որպես քաղաքական կամ հասարակական ոլորտի երևույթ:

¹⁶ Տե՛ս Савинков Л. Л., Некоторые подходы к осмыслению понятия «гражданское общество», // Вестник ОГУ №7 (июль) 2007, էջ 101:

¹⁷ Տե՛ս Кравченко И. И., Концепция Гражданского общества в философском развитии // Полис, N 5, 1991:

Հատկանշական է, որ դրան տրված բացասական գնահատումները, միևնույնն է, նպաստել են նրա «վերածնմանը»: Իսկ իմաստասերների մի խումբ էլ (Լոկ, Ռուսո, Կանտ, Յեգել, Պարսոնս), հակառակը, նրան տվել է առաջնահերթությունն ունյնիսկ քաղաքական ենթահամակարգի նկատմամբ՝ համարելով այն անառարկելի հետաքրքրություն ունեցող երևույթ:

Քաղաքագիտական գրականության մեջ «ՔՅ» ու «պետություն» հասկացությունները տևական ժամանակ չէին տարանջատում միմյանցից, ավելին՝ գուգակցվում և նույնականացվում էին: 18-րդ դարում, երբ եվրոպայում սկսվեց հասարակության տարբեր ոլորտների տարանջատման գործընթացը, ձևավորեցին անհատ քաղաքացիների կենսագործունեության այնպիսի ոլորտներ, որոնք հարաբերականորեն ինքնուրույն էին և դուրս պետության ու պետական կառույցների վերահսկողությունից:

Մաքիավելու, Յոբսի, Լոկի, Մոնտեսքյոյի, Ռուսոյի, Կանտի, Յեգելի, Մարքսի, Բակունինի, Կրավչենկոյի, Յաբերմասի և այլոց աշխատություններում ՔՅ վերլուծվում, սահմանվում և բնորոշվում է բավականին բազմակողմ և բազմաբնույթ, միևնույն ժամանակ՝ հստակ, որոշակի և ճշգրիտ¹⁸: Այս մտածողները տարբեր պատմական ժամանակահատվածներում իրենց աշխատություններում եզրակացրել են, որ ՔՅ-ն մի այնպիսի երևույթ է, որը գտնվում է քաղաքական իշխանությունից և շուկայից հարաբերականորեն անկախ տիրույթում՝ լինելով ու մնալով նրանց օրգանական մասը: Մի կողմից այն դուրս է «պետությունից», մյուս կողմից՝ կենսունակ է միայն իրավական պետությունում:

Քաղաքագիտական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ ՔՅ եզրույթն օգտագործվել է դեռևս հին հունական և հռոմեական մտածողների կողմից: Արիստոտելը հասարակության զարգացումը ըստ կազմակերպվածության աստիճանի բաժանում էր 2 փուլի՝ քաղաքական կամ քաղաքացիական և վայրի ու կազմակերպական առումով թույլ՝ մինչ քաղաքացիական կամ մինչ քաղաքական: Նա նշում էր, որ պետությունն ինքը

¹⁸ Ст' у Общая и прикладная политология. Учебное пособие: под ред. В. Н. Жукова, Б. И. Краснова. М., 1997, էջ 444:

քաղաքացիների հանրագումար է կամ քաղաքացիական հասարակություն¹⁹:

Որ այս տերմինն առաջինն օգտագործել է Արիստոտելը, համակարծիք է նաև Կ.Ս. Գալիևը, ով միաժամանակ նշում է մեկ այլ մտածողի՝ Կիկերոնի մասին, որը, ըստ նրա, գիտական հիմքերով է շրջանառության մեջ դրել *societas civilis*²⁰ տերմինը:

Մաքիավելին գտնում է, որ հասարակության կենսագործունեության այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են աշխատանքը, սերը, ընտանիքը, սեփական-անհատական պահանջմունքների բավարարումը, տիրակալը չպետք է միջամտի²¹: Նա իր «Տիրակալը» (1513 թ) աշխատության մեջ առաջարկում է պետության առաջացումը դիտարկել ոչ թե աստվածաբանական տեսության, այլ փորձի և բնականության շրջանակներում: Իր «համակրանքը» քաղաքացիական ոլորտի նկատմամբ նա բացատրում էր դրա բարոյական հիմքեր ունենալու փաստով, այնինչ պետության գործունեության աղբյուրը ֆիզիկական բիրտ ուժն է: ՔՅ-ի և պետության տարբերությունը Մաքիավելին համարում էր դրանց գործունեության աղբյուրները:

Ա. Օդիսցովան համոզմունք է հայտնում, որ ՔՅ հասկացությունն առաջացել է 17-րդ դարում և իր նախնական դրսևորումն է գտել Գ. Գրոցու, Ջ. Լոկի, Ժ. Ժ. Ռուսոյի, Ծ. Մոնտեսքյոյի և Թ. Յոբսի աշխատություններում²²:

Դ.Կոլան հետազոտել է ՔՅ տերմինի փոխակերպումները՝ փորձելով պարզել, թե այն ինչ իմաստներով է կիրառվել նախ փիլիսոփայական, ապա նաև քաղաքագիտական գրականության մեջ²³: Ըստ նրա՝ Յոբսը պետությունն ու ՔՅ-ն ինչ-որ առումով նույնացրել է: Յոբսը գտնում է, որ մարդիկ քաղաքացիական հասարակությունից դուրս՝ բնական վիճակում, անընդհատ պատերազմել են միմյանց դեմ: Որպեսզի նրանք վերջնականապես

¹⁹ Տե՛ս **Черниловский З. М.**, Гражданское общество: Опыт исследования // Государство и право, 1992, N 6, էջ 142:

²⁰ Տե՛ս **Гаджиев К. С.**, Концепция гражданского общества: Идеиные истоки и основные вехи формирования // Вопросы философии, 1991, N 7, էջ 12:

²¹ Տե՛ս **Мальцев В. А.**, Основы Политологии, учебник для вузов. М., ИТРК РСПП, 1998:

²² Տե՛ս **Одинцова А. В.**, Гражданское общество: Прошлое, настоящее, будущее // Социально-политические науки, 1991, N12, էջ 40-47:

²³ Տե՛ս **Кола Д.**, Политическая социология / пер. с фр., предисл. А. Б. Гофмана/, М.: Весь Мир, 2001:

չ ոչ ն չ ա ց ն ե ն ի ր ա ր , շ ա ր ու ն ա կ ու մ է Յ ո ր ք ւ ը , ա ն հ ր ա ժ ե շ տ է ր մ ի ու ժ , ո ր ը կ ա պ ա հ ո վ է ր յ ու ր ա ք ա ն չ յ ու ր ք ա ղ ա ք ա ց ու , մ ա ր դ ու ա ն վ տ ա ն գ ու թ յ ու ն ը : Ա յ ս ա փ ս ի հ ե ղ ի ն ա կ ա վ ո ր ու ժ ի դ ե ր ու մ ն ա տ ե ս ն ու մ է մ ի ա յ ն մ ա ր դ կ ա ն ց փ ո խ հ ա մ ա ճ ա յ ն ու թ յ ա ն հ ի մ ա ն վ ր ա կ ա ռ ու ց վ ա ծ ը ն դ հ ա ն ու ր ք ա ղ ա ք ա կ ա ն ի շ խ ա ն ու թ յ ու ն ը : Ա յ ս ա փ ս ո վ , հ ա մ ա ճ ա յ ն ու թ յ ա ն կ ա մ հ ա ս ա ր ա կ ա կ ա ն դ ա շ ի ն ք ի հ ի մ ք ո վ ա ռ ա ջ ա ն ու մ է պ է տ ու թ յ ու ն ը :

Կ ա փ տ ա լ ի գ մ ի դ ա ր ա շ ր ջ ա ն ը ն շ ա ն ա վ ո ր վ է ց մ ի շ ա ր ք հ ա ս ա ր ա կ ա կ ա ն -ք ա ղ ա ք ա կ ա ն գ ո ր ծ ը ն թ ա ց ն ե ր ո վ , ա յ դ թ վ ու մ ն ա ն Ք Յ հ ա ս ու ն ու թ յ ա մ ք . ա ռ ա ն ձ ն ա ց ա ն ո ր ո շ գ ո ր ծ ա ռ ու յ թ ն ե ր և բ ն ու թ ա գ ր ի չ ն ե ր : Ա յ ս ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ա ծ ու մ է ր , ո ր Ջ . Լ ո կ ը տ ա ր բ ե ր ա կ է ց պ է տ ու թ յ ու ն ն ու Ք Յ -ն : Ի դ ե ա , Վ . Մ ա ք ս ի մ ե ն կ ո ն պ ն դ ու մ է , ո ր Ք Յ տ ե ր մ ի ն ն ա ռ ա ջ ի ն ա ն գ ա մ պ է տ ու թ յ ու ն ի ց տ ա ր ա ն ջ ա տ է լ և գ ի տ ա կ ա ն շ ր ջ ա ն ա ռ ու թ յ ա ն մ ե ջ է դ ր ե լ Ջ . Լ ո կ ը , ո վ կ ի ր ա ռ է լ է ա յ ն ի ր «*Опыте о веротерпимости*» ա շ խ ա տ ու թ յ ա ն մ ե ջ` 1667թ .-ի ն , ա յ լ ո չ Ա . Ֆ ո ր գ յ ու ս ո ն ը , ի ն չ ա է ս շ ա տ ե ր ն ե ն կ ա ր ծ ու մ²⁴ (վ ե ր ջ ի ն ս ա յ ն կ ի ր ա ռ է լ է ի ր «*Очерки истории Гражданского общества*» ա շ խ ա տ ու թ յ ա ն մ ե ջ) : Ը ն դ ո ր ու մ , Ֆ ո ր գ յ ու ս ո ն ը ա յ ս ն ո ր կ ա տ ե գ ո ր ի ա ն մ ա տ ն ա ն շ է լ ի ս մ ի ա ն շ ա ն ա կ օ գ տ ա գ ո ր ծ ու մ է 2 տ ա ր բ ե ր հ ա ս կ ա ց ու թ յ ու ն ն ե ր մ ի ն ն ու յ ն ի մ ա ս տ ո վ` «*ք ա ղ ա ք ա կ ա ն հ ա ս ա ր ա կ ու թ յ ու ն*» և «*ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն հ ա ս ա ր ա կ ու թ յ ու ն*» :

Լ ո կ ի կ ա ր ծ ի ք ո վ , հ ա ս ա ր ա կ ու թ յ ու ն ը կ ա ր ո ղ է հ ա ն պ ա տ ր ա ս տ ի ց գ ո ր ծ ա ռ է լ ի ն ք ն ա կ ա ռ ա վ ա ր մ ա ն ձ ն ո վ և ն ու յ ն ի ս կ գ ո յ ու թ յ ու ն ու ն ե ն ա լ բ ն ա կ ա ն վ ի ճ ա կ ու մ : Պ է տ ու թ յ ու ն ը պ ա ր գ ա պ է ս հ ա ս ա ր ա կ ու թ յ ա ն ք ա ղ ա ք ա կ ա ն կ ա վ մ ա կ ե ր ա վ ա ծ ու թ յ ա ն բ ա ր ծ ր ա գ ու յ ն ձ ն է և ք ա ղ ա ք ա կ ա ն հ ա մ ա ճ ա յ ն ու թ յ ա ն ա ր դ յ ու ն ք : Յ ա ս ա ր ա կ ու թ յ ու ն ը` ո ր ա է ս ե ր ն ու յ թ , ն ա խ ո ր դ է լ է պ է տ ու թ յ ա ն ը և ա ռ ա ջ ա ց է լ է բ ն ա կ ա ն ճ ա ն ա պ ա ր հ ո վ : Ի ս կ պ է տ ու թ յ ու ն ը ի ր տ ե ս ա կ ո վ և է ու թ յ ա մ ք «*ն ո ր մ ա ր մ ի ն է*» : Ե թ է պ է տ ու թ յ ու ն ն ու ն ր ա կ ա ռ ու յ ց ն ե ր ը վ ե ր ա ն ա ն , ա պ ա հ ա ս ա ր ա կ ու թ յ ու ն ը կ ա պ ա հ պ ա ն ի ի ր գ ո յ ու թ յ ու ն ը բ ն ա կ ա ն բ ո լ ո ր օ ր ե ն ք ն ե ր ի , կ ա ն ո ն ն ե ր ի շ ն ո ր ի ի վ ու մ ի ջ ո ց ո վ : Ը ս տ Լ ո կ ի` պ է տ ու թ յ ու ն ը չ ա է տ ք է գ բ ա ղ վ ի ս ո ց ի ա լ ա կ ա ն ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ա մ ք ,

²⁴ Տե՛ս **Максименко В.**, Идеологема civil society и гражданская культура // Pro et Contra, 1999, № 1, Т. 4, էջ 113-128:

օրինակ՝ հավասարակշռի անձնական եկամուտները կամ օգնի աղքատներին:

Ի. Կանտը ՔՅ եզրույթի տակ հասկանում էր համընդհանուր կամ գլոբալ իրավական հասարակություն: Նա կարծում էր, որ «...միայն նման հասարակությունում է հնարավոր բնական ներուժի՝ տաղանդի առավելագույն արդյունավետ զարգացումը»²⁵:

«Նա, ով ունակ չէ մտնելու հասարակության մեջ,- գրում է Արիստոտելը,- կամ համարելով իրեն ինքնաբավ էակ՝ չի զգում որևէ պարտավորություն ոչ մի հարցում, չի կարող հանդիսանալ պետության տարր՝ դառնալով կամ կենդանի, կամ աստված»: Այսինքն, մարդը կարող է քաղաքացի դառնալ միայն պետության, պետական կառույցների հետ հարաբերվելու դեպքում և պլիսում ունենալ տեղ և դեր թե՛ մասնավոր, թե՛ պետական, թե՛ հասարակական մակարդակներում: Այս մոտեցումը գրեթե անփոփոխ պահպանվել է մինչ 17-րդ դարը:

17-րդ դարում սկզբունքային տարբերակում չէին դնում ՔՅ և պետության միջև. ՔՅ-ն չէր համարվում պետության ներսում առկա հասարակական ինստիտուտների համակարգ: Միաժամանակ նույն հարթակի վրա էին դրվում քաղաքացիական և քաղաքական հասարակությունները: Այնուամենայնիվ նրանք շատ լավ գիտակցում էին, որ պետությունը հեշտությամբ կարող է ճնշել ՔՅ-ն և նրա ինստիտուտները: Խոսքը մասնավորապես «բացարձակ միապետության» մասին էր, որը որոշ մտածողներ դիտում էին կառավարման միակ ընդունելի ձև ամբողջ աշխարհում²⁶:

18-րդ դարի կեսերից սկսած՝ ՔՅ հայեցակարգերն ու տեսությունները գործնական կիրառություն են գտնում ԱՄՆ-ի որոշ նահանգներում և եվրոպական շատ երկրների քաղաքական կյանքում: Այս ժամանակահատվածում ՔՅ գործունեության աղբյուր դարձան մի շարք իրավական փաստաթղթեր՝ Բիլլի՝ իրավունքների

²⁵ Տե՛ս **Кант И.**, «Идея всеобщей истории во всемирно-гражданском плане», М., 1994, էջ 11 // http://www.civisbook.ru/files/File/Kant_Idea.pdf (վերջին դիտում՝ 14.03.2016թ.):

²⁶ Տե՛ս **Локк Д.**, Два трактата о правлении, Соч. в 3 томах, Том 1. М.: Изд. «Мысль», 1985, էջ 36:

մասին տեսությունը Անգլիայում և ԱՄՆ-ում, մարդու և քաղաքացու իրավունքների մասին հռչակագիրը Ֆրանսիայում և այլն²⁷:

18-րդ դարում պետության և ՔՅ գործառույթները տարանջատելու, նրանց իշխանությունները որոշակի հատման կետում սահմանազատելու հստակ միտում էր նկատվում: Այս խնդրին առավել հետևողական արձագանքել է Վ. Ֆոն Յոլմբոլդը: Չուգահեռներ անցկացնելով պետության և ՔՅ միջև՝ նա առանձնացնում էր 3 հիմնական տարբերություն.

1) պետական ինստիտուտների համակարգ և ազգային, հասարակական կառույցների համակարգ, որոնք ձևավորվում են «ներքևից»՝ անհատների կողմից,

2) բնական, ընդհանուր իրավունք ՔՅ շրջանակներում և դրական իրավունք, որն իրականացվում է պետության, իշխանության շրջանակներում,

3) հասարակական համակարգ՝ մարդ և քաղաքական իշխանությունն՝ քաղաքացի²⁸:

Ըստ Յոլմբոլդի՝ պետության և ՔՅ միջև հակասությունը հանգեցնում է հետևյալ իրողության. որքան շատ ընդլայնվելու հնարավորություններ ունեն պետական իշխանության գործողությունները, այնքան քիչ ազատություն են ունենում անհատներն ու նրանց միությունները:

Ժ. Ժ. Ռուսոն ՔՅ ծագումը կապում է մասնավոր սեփականության առաջացման հետ: Այս գաղափարը նա բառացիորեն զետեղել է նաև ՔՅ վերաբերյալ իր կողմից տրված սահմանման մեջ. սեփական հողակտորը մյուսների սեփականությունից առանձնացնելու համար ցանկապատ կառուցող առաջին մարդը պարզապես ՔՅ իրական հիմնադիրն է²⁹:

ՔՅ արմատապես տարբեր, հեղափոխական բովանդակություն և ստացավ, ձեռք բերելով «ՔՅ ընդդեմ պետության անսահմանափակ իշխանության» ենթատեքստ, Թ. Սպենսի, Թ. Փեյնի աշխատություններում: Վերջինիս խորը համոզմամբ՝ ՔՅ

²⁷ Տե՛ս **Ալեքսանյան Ա. Ս.**, Քաղաքացիական հասարակություն // Քաղաքագիտություն. ուսումնական ձեռնարկ բուհերի ու սանոզների համար (խմբ. **Յ. Սանուչարյան** և ուրիշներ): Եր., 2006, էջ 406:

²⁸ Տե՛ս **Гумбольдт В. фон**, Язык и философия культуры. М., Прогресс, 1985, էջ 46:

²⁹ Տե՛ս **Rousseau J.-J.**, A Discourse Upon the Origin and the Foundation of the Inequality Among Mankind. N.Y., 2008, էջ 108:

անառարկելի բարիք է, իսկ պետությանը՝ անխուսափելի չարիք: Եվ որքան պետությանն ավելի «պակաս է», այնքան հասարակության համար ավելի լավ: Որքան կայացած է ՔՀ, այնքան այն ինքնակարգավորման ավելի մեծ հնարավորություն ունի և պետության հոգածության ավելի քիչ կարիք³⁰:

Այս մտածողները գտնում էին, որ պետական իշխանությունը պետք է սահմանափակվի ի նպաստ ՔՀ-ի: Քանզի պետական իշխանությունը «իրավունք չունի» ինքնակամ ընդարձակելու իր գործունեության շրջանակները, փոփոխելու Սահմանադրությունը կամ չարաչափելու անհատ քաղաքացիների վստահությունը: Փեյնը համոզված էր, որ պետական իշխանության լիազորությունները սահմանափակել հասցնելով նվազագույնի՝ իրական կդառնա միջազգային համադաշնությունների ձևավորումը, և հնարավոր կլինի ազգային ինքնությամբ տարբեր ՔՀ-ների միջև խաղաղ փոխարաբերությունների ստեղծումը³¹:

19-րդ դարում սկսվում են զանգվածային շարժումներ և քաղաքական գործընթացներ, դասական իմաստով ձևավորվում են քաղաքական կուսակցությունները, որոնք սկսում են պետության մեջ իրականացնել քաղաքացիների շահերն ամբողջականացնելու և քաղաքական որոշումների մակարդակով դրանք ներկայացնելու գործառնություններ: Սակայն դժվար չէր հասկանալ, որ հասարակության բոլոր անդամների շահերի, պահանջմունքների և հետաքրքրությունների ինտեգրման և դրանց իրականացման համար քաղաքական այս երկու (պետություն և քաղաքական կուսակցություններ) հիմնական ինստիտուտները բավարար չեն: Այս պատմական ժամանակահատվածում Ալ. դե Թոքվիլը առաջ է քաշվում 3-րդ հատվածի գաղափարը, որի տակ մինչ օրս էլ ենթադրվում է ՔՀ³²: Թոքվիլը հստակեցրեց հրապարակայնության վերաբերյալ քննարկումները և կամավոր միությունների ու միավորումների մեջ նկատեց հեգելյան կոորպորացիաների ժամանակակից այլ ընտրանքները: Նա կարողացավ հիմնավորել և

³⁰ Տե՛ս **Бляхман Б. Я.**, Гражданское общество: Теоретическая конструкция или практическая Реальность?, Ползуновский вестник, N 1, 2005, էջ 233-234:

³¹ Տե՛ս **Гаджиев К. С.**, Проблема гражданского общества: Идеиные истоки и основные вехи формирования // Вопросы философии. 1991. № 7// http://files.school-collection.edu.ru/dlrstore/f9bf0a1e-f6db-493b-b34a-524f30849375/%5BCIVS%1011_10-11%5D_%5BTS_52%5D.html (վերջին դիտում՝ 14.03.2016թ):

³² Տե՛ս **Токвиль А. де**, Демократия в Америке. М.: Прогресс, 1992, էջ 265:

ապացուցել, որ ՔՅ Լ ընդհանուր համահունչ է դեմոկրատիային: Ճիշտ է, նման եզրակացության նահանգել է ԱՄՆ-ի օրինակի հիման վրա, որը ոչ տիպական երկիր է նաև ժամանակակից աշխարհում:

Քաղաքագիտական գրականության մեջ ՔՅ հայեցակարգերի մասին մինչ այդ հայտնի բոլոր մտածողներից այս կատեգորիային առավել հանգամանակից անդրադարձել է Յեգելը, ով իրավամբ համարվում է ՔՅ տեսության դասական հիմնադիրը: Նա առանձնացրել է ՔՅ և պետության գործառույթները: Ֆրանսիական, բրիտանական, գերմանական քաղաքագիտական, իրավական և փիլիսոփայական մտքի համակարգված քննությամբ Յեգելը հանգել է այն եզրակացության, որ ՔՅ մի առանձին տարածք է ընտանիքից դեպի պետություն և ընկած դիպեկտիկական շարժման մեջ՝ անցնելով պատմական երկար ու բարդ գործընթաց: Ըստ Յեգելի՝ ՔՅ-ն մասնավոր մարդկանց, դասակարգերի, խմբերի և ինստիտուտների համալիր միություն է, որոնց միջև փոխհարաբերությունները համակարգվում են քաղաքացիական օրենսգրքով, և որոնք՝ որպես այդպիսիք, ուղղակիորեն կապված չեն քաղաքական իշխանության հետ³³:

Ի տարբերություն այլ մտածողների, որոնք ՔՅ առաջացումն ու զարգացումը պայմանավորում էին պետության, սեփականության սկզբնավորմամբ, Յեգելը կարծում էր, որ ՔՅ սերտորեն կապված է ընտանիքի տարանջատման հետ: Ժամանակի ընթացքում ընտանիքները մեծանում և բաժանվում են, և գալիս է մի փուլ, երբ դրանց միջև հարաբերությունները կարգավորվում են ոչ թե ներքին միասնության, այլ ինչ-որ արտաքին երևույթի միջոցով: Ահա այս գործընթացը Յեգելն անվանում է անցում ընտանիքից քաղաքացիական հասարակության: «ՔՅ տարանջատում է, որը հանդես է գալիս պետության և ընտանիքի միջև, չնայած ՔՅ զարգացումն սկսում է ավելի ուշ, քան պետության առաջացումն ու զարգացումը, այնուամենայնիվ տարանջատման գործընթացը ենթադրում է պետության առկայություն, ինչն անհրաժեշտ է ՔՅ ունենալու համար»³⁴:

Յեգելը ՔՅ համար առանձնացնում էր 3 բաղկացուցիչ տարր՝

- 1) պահանջմունքների համակարգ,

³³ Տե՛ս Гегель Г. В. Ф., Философия права. Москва: Мысль, 1990, էջ 228:

³⁴ Տե՛ս Гегель Г. В. Ф., նշվ. աշխ., էջ 233:

2) մասնավոր սեփականության պաշտպանությունն դատարանների միջոցով,

3) ոստիկանությունն և միավորումներ (մասնատիրությունն):

ՔՅ հիմքը ընտանիքն ու միավորումներն են. այն, ինչը չի կարող պետությունը տալ անհատին, պետք է անի միավորումը: Հասարակությունը դառնում է քաղաքացիական այն ժամանակ, երբ ղեկավարվում է պետության կողմից: ՔՅ քաղաքացու անձնական կյանքի ոլորտն է: Սակայն պետությունն ամբողջական է դառնում իր ՔՅ-ով: Իդեալական իրականության տեսլականը, ըստ Յեգելի, ոչ թե բնական վիճակի հավերժական պայքարի արմատական հերքումն է (Թ.Յոբս, Բ. Սպինոզա) կամ հասարակության բնական վիճակի զարգացումն ու պահպանությունը (Ջ.Լոկ), այլ ՔՅ առկայությունը ընդունելի համարող, սակայն նրան ենթակայի վիճակում պահող պետությունը: Միայն այս դեպքում վերջինս կարող է ՔՅ համար ազատությունն ապահովել: Քաղաքական ենթահամակարգի առաջնահերթությունը մյուսներից միշտ էլ ավելի ընդունելի է եղել Յեգելի համար:

Մարքսը ՔՅ համարում էր ոչ թե սոցիալական, այլ պատմական երևույթ: Ըստ նրա՝ՔՅ-ն պատմական զարգացման արդյունք է և հետևանք: ՔՅ-ի մարքսյան տեսությունը արտահայտում էր քաղաքացու մասնավոր շահերն ու պահանջմունքները: «Կատարյալ քաղաքական պետությունը,-գրում է Մարքսն իր «Հրեական հարցի մասին» աշխատության մեջ,- իր էությունամբ մարդու բնական կյանքի հակադրությունն է նրա նյութական կյանքին: Այս եսասիրական կյանքի բոլոր նախադրյալները շարունակում են գոյություն ունենալ ոչ թե պետական ոլորտում, այլ քաղաքացիական հասարակության մեջ»³⁵: Մարքսն ընդգծում է, որ ՔՅ սոցիալական կառույցներն այնքան էլ ինքնուրույն միություններ չեն: Դրանք ստեղծում են միջավայր, որտեղ կարող է առաջանալ բուրժուական հասարակություն:

Դժվար չէ հասկանալ, որ Մարքսը ՔՅ հասկացության տակ նկատի ունի բուրժուական հասարակություն, այսինքն՝ հասարակություն, ուր պետք է տարբերել բուրժուա՝ (bourgeois), քաղհասարակության

³⁵ Маркс К., Энгельс Ф., Сочинения, Том 1. М.: Гос. изд. полит. лит., 1955, էջ 390-391:

անդամին և citoyen` պետության քաղաքացուն: Ընդ որում, բուրժուային, որը ՔՅ ներկայացուցիչ է, երբեք չպետք է շփոթել այն բուրժուայի հետ, որ շահագործում է մեկ ուրիշին: Ոչ կառավարական, կամ ինչպես նշում է Մարքսը, ոչ պաշտոնական կառույցները կարող են ստեղծվել հասարակության կողմից և ձևավորել հասարակական կարծիք: Որոշ դեպքերում նրանց հետպետք է հաշվի նստեն պետական իշխանական օղակները: Այսպիսի հասարակությունն էլ կոչվում է քաղաքացիական, քանզի պետության բոլոր քաղաքացիները կարող են դրսևորել իրենց, ազատ արտահայտել իրենց կարծիքը կառավարության այս կամ այն որոշման մասին³⁶:

«Վերցրե՛ք զարգացած արտադրության որոշակի աստիճան, _գրում է Մարքսն Աննենկովին ուղղված իր նամակում,-և Դուք կստանաք հասարակության որոշակի շերտ, վերցրե՛ք որոշակի կազմակերպվածության դասակարգ և Դուք կստանաք որոշակի քաղաքացիական հասարակություն, վերցրե՛ք որոշակի քաղաքացիական հասարակություն, և Դուք կստանաք որոշակի քաղաքական կառույց, որը ՔՅ պաշտոնական դրսևորում է»³⁷:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ Մարքսն իսկապես մեծ հետք է թողել ՔՅ ուսումնասիրման մեջ. նա ՔՅ հեգելյան մոդելը ուղղել է դեպի արտադրություն, արտադրողական հարաբերություններ և ապրանքաշրջանառություն:

20-րդ դարի քաղաքագիտական միտքը հեգելյան ՔՅ տեսությունը համարում է չկայացած: Սակայն այնտեղ տեղ գտած համակարգային, առանցքային դրույթների ձախողումը չնշանակեց ՔՅ տեսությունների կամ ուսումնասիրությունների վերջ: 20-րդ դարի ՔՅ տեսաբանները գերադասում են ուսումնասիրել հեգելյան հայեցակարգի մասնավոր ասպեկտները:

Այս ժամանակահատվածում Մ. Վեբերը, Ա. Գրամշին, Յու. Յաթերմասը, Յ. Արենդտը, Կ. Շմիդտը, Ռ. Կոզելլեկը, Մ. Տուկոն, Ն. Լումանը, Թ. Պարսոնսը և այլք վերաիմաստավորեցին ՔՅ`

³⁶ Տե՛ս Маркс К., Энгельс Ф., նշվ. աշխ., էջ 324:

³⁷ Տե՛ս Письмо Маркса П. В. Анненкову от 28 декабря 1846 г. // http://www.ganjin.narod.ru/Pismo_Annenkovu.htm (վերջին դիտում` 20.03.2016թ.):

ներկայացնելով այն այլ լույսի ներքո՝ մեկ ընդհանրապես մերժելով, մեկ տալով առաջնահերթությունն պետության նկատմամբ:

Թ. Պարսոնսը շատ քիչ է օգտվում ՔՅ հասկացությունից: Նա որոշակի դիսկուրսների համար այն համարում է արդեն հնացած, իսկ մարդկանց գործունեության համար՝ անպետք եզրույթ, որը մինչև սոցիալական գիտությունների ծագումը գուցե արդիական էր համարվում: Առավել հետաքրքիր է ՔՅ հասկացության վերածնունդը Նրա աշխատություններում: Հայեցակարգը, որտեղ նա ՔՅ հասկացությունը ընկալում է տնտեսությունից, պետական համակարգից և մշակութային ոլորտից զատիչ -որ բան, ՔՅ լիբերալ հայեցակարգի և սոցիալական ինտեգրացիայի համարությունն է: Այսինքն, Պարսոնսն իր գիտական ուսումնասիրությունների կենտրոնում դնում է սոցիալական ինտեգրացիայի գաղափարը: Նա մատնանշում է սոցիալական ինստիտուտների միամբողջ շարք, որոնք կազմում են այն համակարգը, ինչը նա անվանում է սոցիալական միությունն՝ «социальная общность»³⁸: Պարսոնսը կարծում է՝ ՔՅ-ն հասարակության ինտեգրատիվ ենթահամակարգ է: Նրա գործառույթը սոցիալական համակարգի տարանջատումը մշակութային արժեքների ինստիտուցիոնալացման միջոցով ինտեգրելն է՝ դարձնելով դրանք սոցիալապես ընդունելի և կիրառելի նորմեր: ՔՅ տարանջատումը մշակութային, տնտեսական և քաղաքական ենթահակարգերից, ըստ Պարսոնսի, իրականացվում է ժամանակակից Յիեղափոխությունների միջոցով՝

- 1) արտադրական,
- 2) դեմոկրատական,
- 3) կրթական:

Նրանցից յուրաքանչյուրը ևս մեկ քայլ է այլ ենթահակարգերից դեպի «դեկլարատիվ ՔՅ, դեպի անկախություն, ինքնուրույնություն»³⁹: Պետությունից ՔՅ-ի տարանջատման գործընթացի ձևավորման համար իրական սկիզբ են դարձել

³⁸ Parsons T., The Social System // <http://home.ku.edu.tr/~mbaker/CSHS503/TalcottParsonsSocialSystem.pdf> (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

³⁹ Տե՛ս Parsons T., The Understanding The Structure of Social Action, Cambridge University Press // http://assets.cambridge.org/97805211/74589/excerpt/9780521174589_excerpt.pdf (վերջին դիտում՝ 24.03.2016թ.):

Անգլիայում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ, հատկապես 3 հեղափոխությունները՝

1) կրոնի և հավատի մեջ պլյուրիալիզմի ներմուծումը, որը վերջապես տարանջատեց եկեղեցին ու պետությունը,

2) շուկայական տնտեսության կառուցումը միայն տնտեսական հարաբերություններով՝ գերծքադաբական մոտեցումներին,

3) արիստոկրատական ներկայացուցչական ղեկավարման վերականգնումը⁴⁰:

Հատկանշական է, որ Պարսոնսը ենթադրում է, թե առանց այդ 3 հեղափոխությունների ՔՅ տարանջատման գործընթացը պետությունից չէր հասնի իր տրամաբանական ավարտին:

«Սոցիետալ հասարակությունը պետք է տարանջատվի, զանազանվի իշխանությունը որպես առավել բարձրատյան, սակայն ունենալով օրինական իշխանություն՝ պետությունը կարող է այն կառավարել»⁴¹, - նշում է նա:

Պարսոնսը համոզված է, որ ժամանակակից ՔՅ պարտական է դեմոկրատական հեղափոխությունների դարաշրջանին, չնայած նա ենթադրում է, որ շնորհիվ Արևմուտքի զարգացած երկրների այն այլևս «նախագիծ» չէ, այլ իրողություն⁴²:

Ըստ Յ. Արենդտի՝ ՔՅ հանդես է գալիս ոչ թե որպես միջնորդի դեր կատարող ինստիտուտ, այլ «տարածք», որտեղ մասնավոր շահերը, գործողություններն ու պահանջմունքները ստանում են հրապարակային բնույթ: Այս ամենի հետևանքով՝ մասնավոր ոլորտի ինստիտուտները, որոնք նման են հեգելյան տնտեսության միավորումներին կամ նրանց նմանակն են, չեն կայունացնում և համակարգում հրապարակայինի և մասնավորի փոխհարաբերությունները: Ավելին, հստակ սահմաններ դնելով իրենց գործառույթների միջև, վտանգում են թե՛ մեկի, թե՛ մյուսի՝ որպես համակարգի ամբողջականությունը:

⁴⁰ Տե՛ս **Փարսոնս Կ.**, Система современных обществ / Пер. с англ. Л. А. Седова и А. Д. Ковалева. Под ред. М. С. Ковалевой, М.: Аспект Пресс, 1998:

⁴¹ Տե՛ս **Փարսոնս Կ.**, նշվ. աշխ.:

⁴² Տե՛ս **Փարսոնս Կ.**, The Social System // <http://home.ku.edu.tr/~mbaker/CSHS503/TalcottParsonsSocialSystem.pdf> (վերջին դիտում՝ 14.04.2016թ):

Արեւնդտի քննադատական հայացքները հիմնականում նորմատիվային են և հիմնված դասական հասարակությունների արժեքների և պատկերացումների վրա՝ քաղաքական իրավահավասարություն, քաղաքացիական վարք ու բարք, հրապարակային դիսկուրս և այլն: Արեւնդտը մասնավորի ազդեցությունը հրապարակայինի վրա որակում է որպես «անընդհատ վտանգ»: Այս իրողությունը նա համեմատում է անտիկ աշխարհի իրականության հետ, ուր «հրապարակային իշխանությունը անընդհատ էքսպանսիայի էր ենթարկում և ոտնահարում մասնավոր շահերը»⁴³:

Պետությունը, ըստ Արեւնդտի, իր վրա է վերցնում հասարակության «տնտեսական մասը կամ նյութական արտադրության գործառույթը» այն ժամանակ, երբ համայնքը՝ որպես արդեն ձևավորված ազգ, պատասխանատու է վերընտանեկան կառույցների կամ ձևերի համար: Պետության ներսում առկա այս ինստիտուտների համակարգը կամ ամբողջությունը քաղաքական ենթահամակարգից վերածվում է սոցիալականի: Ահա այս ոլորտում է դրսևորվում փոխերձեցումը⁴⁴: Եվ դա անխուսափելի է, քանզի հրապարակայինի և մասնավորի միջև չկան քանոնով գծված հստակ սահմաններ⁴⁵: Միաձուլումը պարունակում է իրական վտանգներ, ծնում բոլորովին նոր խառնածին կառույցներ, որոնց վիճակված է լինել ակտիվ, դինամիկ գործընթացների կենտրոններ: Սա ի վերջո կհանգեցնի ինչպես հրապարակայինի, այնպես էլ մասնավորի վերացմանը:

4. Ծմիդտն իր աշխատություններում ՔՅ ուսումնասիրում է մասնակի և միայն պաշլամենտարիզմի շրջանակներում: Այդ իսկ պատճառով նա հասարակական կյանքը և հասարակական համակարգի ինստիտուտները, դրանց հնարավոր փոխարաբերությունները պետական իշխանության օղակների հետ գրեթե չի քննարկում: Նման մոտեցումը խնդիր է առաջացնում ՔՅ ներկայության հարցը տեսանելի, իսկ գործունեությունը շոշափելի դարձնել տեսության մեջ: Որպես ՔՅ-ին համարժեք տերմին նա օգտագործում է

⁴³ Arendt H., On Revolution. N.Y.: Penguin Books, 1977, էջ 252:

⁴⁴ Տե՛ս Арендт Х., Условия бытия человека // <http://berkovich-zametki.com/2007/Starina/Nomer1/Hejfec1.htm/> (վերջին դիտում՝ 14.03.2016թ):

⁴⁵ Տե՛ս նույն տեղը:

«հասարակական կարծիք» կամ «սոցիետալ միոլոթյուն» հասկացողությունները⁴⁶: Կ. Շմիդտը համոզված է, որ ո՛չ քաղաքականությունը, ո՛չ էլ պետությունը որևէ կերպ չեն վերանում լիբերալ հասարակության շրջանակներից: Սակայն բոլորովին պարտադիր չէ, որ այդ սկզբունքը լիովին համապատասխանի իրականությանը (իրականությունն ասելով՝ Շմիդտը նկատի ունի գործնական քաղաքականությունը)⁴⁷: Ըստ նրա լիբերալ իզմի գլխավոր նպատակը գոնե տեսության մեջ ենթադրում է պետության վերածումը հասարակության (կա՛մ տնտեսական կա՛մ մշակութային իմաստով): Նա, ի տարբերություն Յեգելի, որն իր ամբողջ տեսությունը կառուցել է այդ հիմքի վրա, բոլորովին չի անդրադառնում իրավունքներին: Իրականում, սակայն, չկա որևէ գաղափարական հոսանք կամ ազգային գաղափարախոսություն, այդ թվում նաև լիբերալ իզմը, որը չենթադրի պետության առկայություն: Ի տարբերություն Յեգելի՝ Շմիդտը գանազանություն չի դնում պահանջմունքների համակարգի և ՔՅ այլ մակարդակների միջև: Նա բացարձակ չի ընդունում նաև հասարակության և պետության միջև որևէ միջանկյալ կամ թեկուզ նրանից հարաբերականորեն անկախ ինչ-որ տարածք կամ ինստիտուտ: Ըստ նրա՝ այդ միջանկյալ հատվածը պառլամենտն է, որը՝ որպես օրինաստեղծ մարմին, ձևավորվում է ազգային ներկայացուցչական սկզբունքով: Պառլամենտի զբաղեցրած միջանկյալ տարածքը նա կոչում է «արենա»՝ «հարթակ», որտեղ իրականություն է դառնում հասարակության և պետության ուղղակի, առանց միջնորդների հանդիպումը⁴⁸: Այս հարթակում պետությունն ու հասարակությունն ինտեգրվում են: Պառլամենտական պետությունը նա համարում է հասարակության ինքնակազմակերպման իդեալական տարբերակ, որն ամբողջացնում է պետական համակարգը: Շմիդտը համոզված է, որ պառլամենտականության հրապարակայնությունը ենթադրում է հասարակական կյանքի ազատություն պառլամենտից դուրս: Այսինքն, որքան պակաս լինի «պետության դերը», այնքան

⁴⁶ Տե՛ս **Афанасьев В. В.**, Карл Шмитт: Из истории политической мысли, 2014, էջ 69-75 // http://socis.isras.ru/files/File/2014/2014_6/Afanasev.pdf // (վերջին դիտում՝ 14.03.2016թ):

⁴⁷ Տե՛ս **Schmitt C.**, The Crisis of Parliamentary Democracy. Cambridge, MIT Press, 1985, էջ 2-5:

⁴⁸ Տե՛ս **Шмитт К.**, Понятие политического // Вопросы социологии. 1992. № 1, стр. 37-67:

հասարակությունն ավելի ազատ գործելու ու ինքնակազմակերպվելու հնարավորություն կունենա⁴⁹:

4. Շմիդտի գիտական ժառանգորդը, հայացքներով ու մոտեցումներով նրան ամենամոտը Ռ.Կոզելեկն է: Նրա հիմնական աշխատությունը «Kritik und Krime»-ն է: Քաղաքականության և բարոյականության տարանջատման, ինչպես նաև պետության կողմից անհատի մասնավոր և նույնիսկ անձնային տիրույթ (Կոզելեկն օտագործում է «մարդու խղճի տիրույթ») արտահայտությունը) անընդհատ աճող հետաքրքրությունն ցուցաբերելու պատճառով ստեղծում է մի նոր իրողություն, ուր ձևավորվում է հասարակության նոր տեսակ: Այն սկզբնական շրջանում պետությունից անկախ էր, իսկ հետագայում վերածվում է պետությանը ընդդիմադիր զանգվածի: Անկախացման այս գործընթացը հասարակության ամենատարբեր կառույցների համար հիմք է ստեղծում գործադրելու բարոյական ճնշում իշխանության վրա (ի դեպ, հասարակության կողմից ցանկացած ճնշում Կոզելեկը որակում է բարոյական): Իր գործունեության հիմքում դնելով բարոյականությունը՝ հասարակությունը ոչ կառավարական կազմակերպությունների շնորհիվ շատ հաճախ վերածվում է յուրատեսակ քաղաքական ուժի: Այն բարոյապես և էությանմբ ապաքաղաքական է և հենց այս պատճառով կարող է հարցականի տակ դնել անբարո քաղաքական իշխանության գոյությունը⁵⁰:

Ըստ Կոզելեկի՝ ինքնակազմակերպման հատկությունով կարող են օժտված լինել միայն Լուսավորության դարաշրջանի հասարակություններ (ըստ ամենայնի հաշվի առնելով ավանդույթների և կրոնական դաստիարակության նորմերը՝ բնական և քաղաքացիական իրավունքներին զիջելու հանգամանքը): Կոզելեկը նաև նշում է նման հասարակությունների ինքնակազմակերպման արդյունքում ձևավորված միությունների՝ մասնավոր սրահների, սրճարանների, ակումբների, գրադարանների և անգամ մասոնական օթյակների մասին: Այս կազմակերպությունները, ըստ նրա, ապաքաղաքական կամ սոցիետալ

⁴⁹ Տե՛ս նույն տեղը:

⁵⁰ Տե՛ս **Koselleck R.**, Critique and Crisis: Enlightenment and the Pathogenesis of Modern Society. Cambridge: MIT Press, 1958, էջ 33-53:

միություններ են, որտեղ քաղաքացիներն իրացնում են իրենց ապաքաղաքական շահերն ու պահանջմունքները: Լինելով ապաքաղաքական՝ նրանք, միևնույնն է, օգտվում են պետության հովանավորությունից:

Չավատարիմ մնալով իր՝ «ընդդեմ պետության ձևավորված հասարակություն» դրույթին՝ նա նշում է, որ 18-րդ դարում վերը նշված կազմակերպությունները որդեգրեցին հակապետական ուղղություն: Ժամանակակից կամ նոր դարաշրջանի հասարակությունը, որը համարժեք է նրա կողմից հաճախ կիրառվող «լուսավորյալ հասարակություն» եզրին, ունի լուրջ թշնամիներ՝ ի դեմս եկեղեցական, ազնվական կառույցների և իր ավանդույթներով բարդույթավորված հասարակության: Ըստ Կոզելեկի՝ հենց այսպիսի հասարակությունը կարող է վտանգ ստեղծել պետության համար, քանի որ այն ավելի շատ ավանդական է, քան ապաքաղաքական:

Ի տարբերություն Շմիդտի ու Կոզելեկի, ովքեր նեղացնում են ՔՅ շրջանակները՝ նրանից խլելով շատ գործառույթներ, Յու. Չաբերմասն իր տեսության մեջ ամրագրում է ճիշտ հակառակ մոտեցում: Նա ընդլայնում է հասարակության և պետության միջև ընկած տարածությունը՝ այնտեղ ընդգրկելով նաև հրապարակային ոլորտի նորմատիվային պահանջներ:

Չաբերմասը, ի տարբերություն Շմիդտի, դժվարանում է գծել հրապարակային և լիբերալ ոլորտների սահմանագիծը՝ ենթադրելով, որ դրանք առկա են դրանց մեջ և մեծ առումով տարբեր ոլորտներ չեն: Լիբերալ ոլորտի կայացման համար անհրաժեշտ են մի շարք ազատություններ, օրինակ՝ մասնավոր սեփականության և անձնական կյանքի ազատությունը: Այս ազատությունները պետք է գերակշռեն ՔՅ շրջանակներում և միաժամանակ լինեն պատվար իշխանության անհարկի միջամտության դեմ իրենց մասնավոր և ինչ-որ առումով հրապարակային կյանքի:

Չաբերմասի տրամաբանությամբ ՔՅ-ն որոշակի ազատությունների շրջանակներում ձևավորվող ինքնուրույն հասարակություն է, նոր ոլորտ հասարակական կյանքում: Այն իր էությամբ ու բովանդակությամբ ժողովրդավար է: Չատկանշական է, որ նա, ինչպես Գրամշին, ՔՅ ոլորտը նույնպես համարում է իշխանության նոր

տեսակ: Դա ժամանակակից պետության տեսակ է, որն ունի ճշգրտման համակարգ, պաշտպանության և նույնիսկ վերահսկման անհրաժեշտություն՝ ոչ միայն պետության սկզբունքներից ելնելով, այլև գործընկեր ունենալով 2-րդ՝ քաղաքական-հրապարակային ոլորտը: Ըստ նրա, նոր տիպի հասարակության կյանքում ինստիտուտների ձևավորման գործընթացը պետք է հակադրել ինչպես բացարձակ իշխանությանը, այնպես էլ ավանդույթներով առաջնորդվող հասարակությանը: Անհատի և պետության միջև նա առանձնացնում էր 3 միջանկյալ օղակ՝ ընտանիք, գրական-հրապարակախոսական ոլորտ և հրապարակային քաղաքականություն: Ի տարբերություն Յեգելի՝ նա ընտանիքը համարում է ոչ թե ՔՅ նախատիպ և ՔՅ ձևավորման ելակետ, այլ ինստիտուտ, որն անբաժան է հասարակությունից: Ընտանիքը տարբերվում է համայնավարության մյուս ձևերից⁵¹: Պետության ներսում գործող մասնավոր կազմակերպությունները որքան էլ որ ազատ լինեն և իրենց թույլ տան հակադրվելու իշխանությանը, միևնույնն է, իրենց նպատակների իրականացման համար պարտավոր են համագործակցել պետության հետ՝ փորձելով հասնել «հրապարակային» ճանաչման՝ թեկուզ մանիպուլյացիոն, հիերարխիկ միջոցներով⁵²: Պետության ներսում սուբյեկտ կամ հիմնական դերակատարներ դառնալու համար անհրաժեշտ են հասարակության օժանդակությունը (սոցիալական հենարան) և պետության երաշխավորությունը (օրենսդրություն և ռազամավարական փաստաթղթեր), իսկ ազատ գործունեության համար՝ իրավունքներ և ազատություններ:

Յաբերմասը հասարակության և պետության միջև փոխհամաձայնության հնարավորությունը պայմանավորում է այդ երկու մոդելների ժողովրդարացմամբ՝ միաձուլման միտումով՝ «հասարակության էտատիզացում» (պետության ներգործություն) և «պետության սոցիալիզացում» (նեոկոորպորատիվ)⁵³:

⁵¹ Տե՛ս **Cohen Jean L.**, Class and Civil Society, The Limits of Marxian Critical Theory, Aniherst, University of Massachusetts Press, 1982, էջ 304-308:

⁵² Տե՛ս **Вербиллович О.**, Теория коммуникативного действия: ключевые категории и познавательный потенциал // <http://www.hse.ru/data/2014/03/04/1333203494/8F.pdf> (վերջին դիտում՝ 14.03.2016թ.):

⁵³ **Хабермас Ю.**, Демократия. Разум. Нравственность (Московские лекции и интервью). М., Изд. центр Academia, 1995:

20-րդ դարի ՔՅ տեսությունների շարքում իր արմատական մոտեցումներով առանձնանում է Ա. Գրամշին: Նա քաղաքական մտածող է, և ՔՅ տեսությունը նրան հետաքրքրում էր միայն որպես քաղաքականության մեջ կողմնորոշվելու միջոց: Այդ ճանապարհին նա փորձել է վերլուծել երկու քաղաքական իրար ծոթողություններ, որոնք նրա հայացքների ձևավորման հարցում ունեցել են որոշիչ նշանակություն: Խոսքը վերաբերում է Արևմուտքում հեղափոխության տապալմանն ու Ռուսաստանում դրա հաջողությանը⁵⁴: Կոմունիստական հայացքները նրան թույլ չեն տվել լրջորեն տեսնել դեմոկրատական հասարակության առավելությունները: Եթե Պարսոնսը սոցիալական տեսության ենթատեսքում վերակենդանացնում է հեգելյան «Sittlichkeit» գաղափարը, ապա Գրամշին ՔՅ վերածննդի ժամանակակից քննադատության արմատական հիմնադիրն է: Յեգելի ու Մարքսի պատկերացումներից Գրամշիի հայացքների տարբերությունը դրսևորվում է եռամաս սխեմայում: Գրամշին, ի տարբերություն Յեգելի, արմատական սխալ է համարում ընտանիքն ու քաղաքական մշակույթը ՔՅ ոլորտին դասելը:

Խորհրդային միությունում, որտեղ «պետությունն ամեն ինչ էր», իսկ ՔՅ առանձնանում էր իր կրավորականությամբ, պետական կառավարման ձևի փոփոխության միակ տարբերակը հեղափոխությունն է: Սակայն այն պայմաններում, երբ իշխանությունը թելադրում է պետության «պաշտամունք», ազատ հասարակությունն ստեղծելու հնարավորությունը կասկածելի է դառնում: Իր ժամանակի «մատերիալիզմի ալիքը» Գրամշին բացատրում է իշխանության ճգնաժամով. «ճգնաժամն այն է, որ հինը մեռնում է, իսկ նորը չի ծնվում»⁵⁵: Գրամշին ՔՅ սահմանում է տարբեր կերպ՝ որպես պետության գործընկեր, որպես պետության բաղկացուցիչ տարր, որպես պետությանը նույնական ինչ-որ կառույց: Սահմանումներ տալու այդ բոլոր փորձերի ենթատեսքում այն միտքն է, որ գործող համակարգի վերարտադրությունը՝ բացառությամբ տնտեսականի, իրականացվում է հասարակության ու պետության (գերիշխանության)

⁵⁴ Տե՛ս Коэн Д. Л., Арато Э., Гражданское общество и политическая теория. М., Весь мир, 2003, էջ 146:
⁵⁵ Տե՛ս Коэн Д. Л., Арато Э., նշվ. աշխ. էջ 156:

գործակցության 2 բանաձևերի՝ համաձայնության կամ ստիպելու քաղաքականության միջոցով: Դրանք իրականացնում են 2 ոլորտի ինստիտուտներ՝ սոցիալ-քաղաքական կազմակերպությունները, ՔՀ մշակութային ինստիտուտները և պետության իրավական, բյուրոկրատական, ռազմական կառույցները⁵⁶:

ՔՀ մասին իր ուսմունքը Գրամշին ձևակերպում է «անկախություն հռչակագրի» տեսքով՝ անկախություն տնտեսությունից, պետությունից, մշակույթից⁵⁷: ՔՀ բնույթն ու էությունը Գրամշին համարում է դասակարգային պայքարի նպատակն ու արդյունքը՝ հարստացնելով ՔՀ իր հայեցակարգը սոցիալական շարժումների մասին պատկերացումներով: Սա ապահովել է այդ հայեցակարգի դիսամիզմը: Սակայն մի ձեռքով տալով՝ նամյունով վերցնում է, քանի որ ՔՀ դիսամիզմը՝ որպես սոցիալական շարժումների հարթակ, իրատեսական չէ, քանի դեռ «բանվոր դասակարգը ընդդիմություն է»⁵⁸:

Փաստորեն Ֆոկուլի աշխատություններում առավել ընդգծված է ՔՀ մասին պաթետիկ վերաբերմունքը. նառչ դեմ է և ոչ էլ կողմ այդ քաղաքագիտական երևույթին⁵⁹: Ֆոկուն գտնում է, որ ՔՀ վերաբերյալ նորմատիվ սկզբունքներն ու կատեգորիաները վաղուց կորցրել են իրենց կապը իրականության հետ: Ի տարբերություն Յաթերմասի՝ Ֆոկուն ժամանակակից ՔՀ առաջացումն ու զարգացումը դիտում է ակնհայտ բացասական երևույթ: Ըստ նրա՝ ՔՀ-ն ընդամենը իշխանության ժամանակակից տեխնոլոգիաների արդյունք է: Եթե Պարսոնսի և Յեգելի տեսություններն ավելի շատ ընդհանուրություններ ունեն, քան տարբերություններ, ապա Ֆոկուլի՝ ՔՀ ծագումնաբանական տեսությունը հիմնականում ազդվել է Մարքսից: Սակայն պնդել, թե դրանք ընդամենը սահմանափակվել են մարքսիստական դիսկուրսային պատկերացումներով, ճիշտ չի լինի: Մասնավորի, քաղաքականի և տնտեսականի փոխհարաբերությունների մասին խոսելիս Ֆոկուն

⁵⁶ Տե՛ս Գրամշի Ա., Тюремные тетради // http://royallib.com/read/gramshi_antonio/tyuremnie_tetradi_izbrannoe.html#0 (վերջին դիտում՝ 14.03.2016թ.):

⁵⁷ Տե՛ս Adamson W. L., Gramsci and the Politics of Civil Society, // Praxis International 7, No. 3-4, 1987-1988, էջ 322:

⁵⁸ Տե՛ս Գրամշի Ա., Тюремные тетради // http://royallib.com/read/gramshi_antonio/tyuremnie_tetradi_izbrannoe.html#0 (վերջին դիտում՝ 14.03.2016թ.):

⁵⁹ Տե՛ս Коэн Д.Л., Арато Э., նշվ. աշխ., էջ 178:

շատ հաճախ նույնիսկ ի ցույց է դնում Մարքսի և իր մոտեցումների տարբերությունները: Նա պարզապես ընդգծում է իր՝ ՔՅ արդի ձեռքբերումները՝ իշխանական հարաբերությունների նոր մեխանիզմներն ու տեսակները, որոնք ավելի մեծ չափերով ու ավելի խորն են ներխուժում հասարակության կյանք: Ի տարբերություն Մարքսի՝ նա հասարակությունը չի իջեցնում տնտեսական բազիսի աստիճանի և միջդասակարգային հարաբերությունները չի համարում իշխանության ձգտելու պայքար: Սրա փոխարեն նա զարգացնում է Մարքսի «ՔՅ անատոմիան», այդ իսկ պատճառով մասնագիտական գրականության մեջ Ֆուկոն առանձնանում է որպես ՔՅ ծագումնաբանության քննադատ⁶⁰:

Ֆուկոն իր «Դիսցիպլին և պատիժ» էսսեում, «Իշխանություն: Գիտելիքներ» հոդվածների ժողովածուում իշխանությունը որակում է որպես ցանց կամ ցանցային համակարգ: Նա թերևս առաջիններից է, որ փորձում է իշխանության գործունեության արձագանքները տեսնել ՔՅ մյուս կարևոր կառույցների՝ հիվանդանոցների, բանտերի, ընտանիքի, բանակի, մանկատների և դպրոցների ներսում, որոնց ոչ մի տեսաբան չի անդրադարձել: Իշխանության մոդելը, ըստ նրա, իր էությունամբ հետադիմական է: Յետևաբար այն գնալով դառնում է «զարմանալիորեն սահմանափակ»՝ աղքատ ռեսուրսներով, ժլատ մեթոդներով, միօրինակ մարտավարությամբ: Միակ ուժը, որ այն ունի և կարող է կիրառել հասարակության դեմ, մերժումն է: Այսպիսի իշխանության խորհրդանիշը նա համարում է սուրը՝ ուղղված սեփական հասարակության դեմ⁶¹: ՔՅ նորմատիվ սկզբունքները չեն կարող ծառայել որպես գերիշխանության համար քննադատություն կամ, որ ավելի կարևոր է, ապահովել սոցիալական շարժումների համար զգալի ուղղություն:

Ըստ նրա՝ իշխանությունը երբեք չի կենտրոնանում ինչ-որ մեկի ձեռքում, պետության որևէ հատվածում՝ այստեղ կամ այնտեղ: Այն հավասարապես բախշված է սոցիալական օրգանիզմում: Իր գործունեությամբ նման լինելով ցանցի՝ իշխանությունը թելերի արանքներում է պահում անհատներին, որոնք, միշտ գտնվելով այդ

⁶⁰ Տե՛ս **Jean L. Cohen**, նշվ. աշխ., էջ 304-308:

⁶¹ **Foucault M.**, «Power/Knowledge. New York: Pantheon books, 1972, էջ 92-93:

ցանցում, ենթարկվում են իշխանության ազդեցությանը և, որքան էլ զարմանալի է, իրականացնում են իշխանությունն⁶²:

Այս հարաբերությունները, որոնք առաջին հայացքից իշխանական են, միախառնվելով հասարակական համակարգի այլ ինստիտուտների գործունեությանը, ներառում են արտադրությունը, ընտանիքը, դպրոցը, գիտելիքները, հիվանդանոցները և այլն: Իշխանությունն ամենուր է, բայց ոչ այնպես՝ առավել, որ կլանել է ամեն բան, այլ որ գալիս է ամեն տեղից⁶³:

Ժամանակակից ՔՅ նա ներկայացնում է պետության ներսում ինչ-որ գաղութացված տարածք, որի վրանախկին համերաշխությունը փոխարինվել է նոր՝ սոցիալական վերահսկողության տեսքով: Չնայած Ֆուկոյն կարծես կարոտ ունի «հին ռեժիմի» նկատմամբ, այնուամենայնիվ գտնում է, որ երբ վերլուծվում են հասարակության առանձին անդամների շահերն ու պահանջմունքները, անմիջապես աչքի են զարնում քաղաքական և ոչ քաղաքական՝ սոցիետալ բնույթի պահանջմունքներ: Այս գործընթացը նա բնորոշում է որպես «իրապարակային ինտրոյեկցիա», երբ մարդը տեսանելի է դառնում անտեսանելի իշխանության դիտակետից: Մինչև վերջ չհերքելով տարանջատման գործընթացի կարևորությունը արդիականացման հարցում՝ նա ՔՅ-ին վերագրում է նորմատիվ և խորհրդանշական սկզբունք: Պետությունը՝ որպես ոչ սուվերեն ինստիտուտ, այլ «որպես կառավարման տեսակ»,⁶⁴ սողոսկում է հասարակության մեջ: Չնայած «սխալ է մտածել, որ կարգավորված գործառույթները մեկընդմիջ տկլանված են պետական իշխանության վարչակարգի կողմից»⁶⁵: Ֆուկոյն սրանով փորձում է ևս մեկ անգամ շեշտել, որ պետությունը չի կարող զավթվել իշխանական հարաբերությունների ողջ համակարգը, այլ այն հասարակության կյանքի ընդամենը մի ոլորտն է ընտանիքի, արտադրության հետմիասին:

ՔՅ-ին անցումը Ֆուկոյն հնարավոր է համարում անհատականացման գործընթացի միջոցով՝ որպես վերջնական

⁶² Տե՛ս Foucault M., նշվ. աշխ., էջ 98:

⁶³ Տե՛ս Foucault M., The History of Sexuality, vol. 1, New York: Pantheon Books, 1978, էջ 90-92:

⁶⁴ Տե՛ս Smart B., Foucault, Marxism and Critique, London: Routledge, 1983, էջ 116:

⁶⁵ Տե՛ս Foucault M., Discipline and Punish: The Birth of the Prison. New York: Pantheon Books, 1977, էջ 215:

արդյունք ու հետևանք հրապարակային նոր տեսակի, որը բնորոշ և արդիական է նաև մեր օրերի համար: Իր ժամանակի հասարակության և նաև ՔՀ անկատարությանը նա անվանել է «общество карцерного типа»՝ «պատժախցային հասարակություն»⁶⁶:

Ժամանակակից ՔՀ կազմված է անհատականացված մարտավարության ներքին: Ֆուկույի քննադատության ողջ թիրախն ուղղված է պետական համակարգի ինստիտուտների և ՔՀ փոխհարաբերությանը, որտեղ տեսել է միայն բացասականը⁶⁷: Նա բացառում է նման միության ներքին առկայությունը հասարակության մեջ, որովհետև դրանք համահարթեցնող հատկություն ունեն և ստեղծվում են վարչական ապարատի օգնությամբ ու հրահանգով:

Լումանի աշխատատեսություններում «հասարակություն» տերմինը շատ հաճախ նույնական է գլոբալ հասարակությանը⁶⁸: Նա պոզիտիվ իրավունքը դիտում էր որպես ոչ նորմատիվային հասկացություն, ասոցիացիան՝ բյուրոկրատական կազմակերպություն, իսկ հասարակական կարծիքը միտում ունի ընկալվելու որպես մանիպուլյացիա⁶⁹: ՔՀ համակարգվում է «...հարաբերականորեն ունիվերսալ կանոններով՝ միմյանց հանդեպ մարդկանց հարգանքի և փոխըմբռնման» ինստիտուտի միջոցով⁷⁰: Լումանը որպես ՔՀ հոմանիշ է օգտագործում «տնտեսական հասարակություն» տերմինը: Սակայն փորձում է նաև ապացուցել, որ դրանք տարբեր են անգամ կառուցվածքներով: Օրինակ, ըստ նրա՝ տնտեսական համակարգը չի կարող լինել կոլեկտիվ, չի կարելի որպես այդպիսին դիտարկել նաև հասարակությունը, ուր վերջինս առաջնային դեր ունի: Հասարակություն ներխուժող բազմաթիվ կազմակերպություններ ինտեգրվում են ոչ թե բարձրագույն կազմակերպության, այլ համակարգային միջնորդների գործունեության շնորհիվ, ինչպիսիք իշխանությունն ու նյութական միջոցներն են, մասնավորապես՝ փողը: Լումանն արդեն

⁶⁶ Տե՛ս Коэн Д.Л., Арато Э., նշվ. աշխ., էջ 291:

⁶⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 293:

⁶⁸ Տե՛ս Stichweh R., Science in the system of world society // https://www.fiw.uni-bonn.de/demokratieforschung/personen/stichweh/pdfs/5_43stwsocietysoc.pdf (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

⁶⁹ Տե՛ս Луман Н., Общество как социальная система /пер. с нем. А. Антоновский/. М: Изд. "Логос", 2004:

⁷⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 78-80:

հնացած է համարում ոչ միայն «քաղաքական» կամ «քաղաքացիական հասարակություն» հասկացությունները, այլև դրանց փոխարինելու եկած «տնտեսական հասարակությունը»⁷¹: Այս հարցում Լումանը մոտենում է Մարքսի տեսությանը: Յասարակության առաջխաղացման և զարգացման միակերպ խիբը Լումանը պայմանավորում է տնտեսական համակարգի ամբողջության պահպանմամբ, ինչպես դա պատահում է գրեթե բոլոր հասարակությունների մոտ քաղաքական ենթահամակարգի առավելության դեպքում⁷²: Յասարակությունը ենթադրում է քաղաքական չեզոքությունն ոչ կառավարական ոլորտներում, չնայած որ քաղաքական հիմնախնդիրներն ու քաղաքական իշխանությունը ծնվում են հենց հասարակության մեջ: Ըստ Լումանի՝ չի կարելի նորմերն ու ինստիտուտները որպես միևնույն կամ իրար մոտ հասկացություններ օգտագործել. ոչ բոլոր ինստիտուտներն են «արարում» նորմեր, և ոչ բոլոր նորմերն են ի վերջո ինստիտուցիոնալ իզացվում:

ՔՅ հիմքում ընկած են ոչ բռնի պայքարի սկզբունքը, բազմակարծությունը, խորականության մերժումը, իրավատիրության ու իրավագիտակցության զգացումը, որոնք պետք ամրագրվեն ողջ հասարակությանն արժեքային համակարգի շրջանակներում: Սրանք ոչ թե նորածն, այլ բովանդակային վարքագծի նորմեր են:

Մինչ այսօր էլ ՔՅ եզրույթի ձևակերպման ու սահմանման համար բազում վերլուծություններ են կատարվում: ՔՅ ընկած է պետական կառավարման և բիզնես միջավայրի միջև և ըստ էության պետք է զուգակշռի երկուսն էլ: Նրագոյությունը պայմանավորված է իրավունքի գերակայությամբ, մասնակցային ժողովրդավարությամբ, որոշ դեպքերում՝ քաղաքացիական անհնազանդության առկայությամբ: ՔՅ կայացման համար պետության ներսում կարևոր նախապայման է գաղափարական քաղաքական ընդդիմության առկայությունը:

⁷¹ Տե՛ս Коэн Д.Л., Арато Э., նշվ. աշխ., էջ 314:

⁷² Տե՛ս Луман Н., Дифференциация /пер. с нем. Б. Скуратов/. М., Изд. Логос, 2006, էջ 225:

1.2. Քաղաքացիական հասարակության քաղաքացիական հիմնական սահմանումները

Քաղաքացիական ուսումնասիրություններում հաճախ են հանդիպում ՔՀ հոմանիշ եզրույթներ: Նշենք դրանցից մի քանիսը՝ քաղաքակիրթ հասարակություն⁷³, քաղաքակիրթ քաղաքացիների հասարակություն⁷⁴, իրավական հասարակություն⁷⁵, սոցիետալ

⁷³ Տե՛ս **Резник Ю. М.**, Введение в социальную теорию//Социальная онтология, Т.2. М., Институт востоковедения РАН, 1999, էջ 304:

⁷⁴ Տե՛ս **Кравченко И.И.**, Концепция гражданского общества в философском развитии. Полис, N 5, 1991:

⁷⁵ Տե՛ս **Кант И.**, Сочинение в 6-ти томах: том 5. М., Мысль, 1966, էջ 465:

մի ու թյ ու ն⁷⁶, ազատ և փոխօգնության հասարակություն⁷⁷, զանգվածային հասարակություն, ժամանակակից հասարակություն, դեմոկրատական հասարակություն⁷⁸, իրավական քաղաքացիական հասարակություն⁷⁹, տնտեսական հասարակություն⁸⁰:

Տարբեր ժամանակներում շատ մտածողներ փորձել են սահմանել կամ բնութագրել ՔՅ հասկացությունը: Սակայն մինչ օրս համաշխարհային քաղաքագիտական, իրավագիտական, սոցիոլոգիական և փիլիսոփայական միտքը որպես համընդհանուր ընդունելի տնտեսական շուկայի ՔՅ սահմանման շերտեր հիմնական մոտեցում⁸¹:

Մասնագիտական գրականության մեջ ՔՅ սահմանումները գործառնության և գործառական հիմքերով կարելի է բաժանել 2 խմբի: Առաջին խմբում ՔՅ սահմանվում է որպես մտահասունության, իրավատիրության, քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակով օժտված հասարակություն, ուր իրականություն են դարձել սոցիալիականացման, մասնակցային ժողովրդավարության մասին գաղափարները:

Յ. Արենդտը քաղաքացիական հասարակության հիմնախնդրին է նվիրել մի շարք մենագրություններ և գիտական հոդվածներ: Նա ՔՅ սահմանում է որպես հրապարակային ոլորտ, որտեղ ձևավորվում է փոխգործունեության որոշակի մոդել՝ բնութագրվելով որպես քաղաքացիների միջև ոչ բռնի դիսկուրս, ուր մարդիկ իրավունք ունեն ազատորեն արտահայտելու ամենատարբեր կարծիքներ⁸²: Յետագայում այս միտքը զարգացնում է Ռ. Կոզելեկը: Նա գտնում է, որ Լուսավորության դարաշրջանում հասարակությունն արդեն կազմակերպված էր, և նրա դրսևորման հիմնական ձևերն էին

⁷⁶ Տե՛ս **Козн Д. Л., Арато Э.**, նշվ. աշխ., էջ 129:

⁷⁷ Տե՛ս **Грин Д.**, Возвращение в гражданское общество. Социальное обеспечение без участия государства / пер. с англ. М. Карабочкина, под. ред. А. Гусев/. М., 2009, էջ 8:

⁷⁸ Տե՛ս **Политология** /под. ред. **Г. В. Полуниной**/: учебник для студентов юридических и гуманитарных факультетов, М., ЭКМОС, 1996, էջ 155:

⁷⁹ Տե՛ս **Дробязко С. Г.**, Соотношение социального правового государства и правового Гражданского общества, Конституционно-правовые проблемы формирования социального правового государства / Материалы междунауч.- практ. конф. / Минск, 2000, էջ 386-388:

⁸⁰ Ավելի մանրամասն տես՝ **Foucault M.**, Discipline and Punish:

⁸¹ Տե՛ս **Белокурова Е. В.**, Концепция гражданского общества в российском прочтении: обзор публикации последних лет: Граждане и власть: проблемы и подходы / под. ред. Г. Михалевой, С. Рыженкова (при участии Е. В. Белокуровой), М., 2001, էջ 29:

⁸² Տե՛ս **Арендт Х.**, Традиции и современная эпоха, // Вестн. Моск. ун-та. Философия, Сер.7, № 1, 1992, էջ 80-95:

մասնավոր սրահները, սրճարանները, ակումբները, գրադարանները, անգամ՝ մասոնական օթյակները, իսկ ավելի ուշ՝ գաղտնի միությաններն ու կազմակերպությունները:

Ա. Պանարինը ՔՅ ասելով հասկանում է քաղաքացիների և նրանց միավորումների ոչ քաղաքական (տնտեսական, բարոյահոգեբանական, կրոնական, մշակութային) հարաբերությունների ամբողջություն՝ հիմնված պետության նկատմամբ ինքնագործունեության, ինքնավարության սկզբունքների վրա⁸³:

Վ. ժուկովն ու Վ. Կրասնովը ՔՅ սահմանման հիմքում դրել են ոչ քաղաքական մոտեցումը: Պարադոքսն այն է, գտնում են հեղինակները, որ առանց քաղաքական ենթատեքստի հասարակական ու քաղաքացիականը ձևավորվել չեն կարող. «ՔՅ մարդկանց գոյակցության ոչ քաղաքական ձև է, որն ուղղակիորեն վերաբերում է քաղաքական իշխանության ոլորտին և նրա հետ ունի սերտորեն շփման եզրեր: Միաժամանակ այն պաշտպանված է իր տիրույթ քաղաքական իշխանության անմիջական և ուղղակիորեն ներխուժումից, ինչն ամրագրված է անհրաժեշտ նորմատիվ ակտերում»⁸⁴:

Գ. Պալուսինը ՔՅ ձևավորման և զարգացման համար նախևառաջ կարևոր է համարում պետության դեմոկրատական լինելու պայմանը: Ըստ նրա՝ ՔՅ մարդկանց հանրույթ է, որը պետության ներսում՝ հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում, ներկայացված է կամավորության սկզբունքով կազմակերպված ոչ կառավարական կառույցների ցանցով (միություններ, կազմակերպություններ, ասոցիացիաներ, միավորումներ, կենտրոններ, ֆոնդեր...), ինչպես նաև տնտեսական, քաղաքացիական, սոցիալական, հոգևոր, կրոնական ոչ կառավարական հարաբերությունների համախմբով⁸⁵:

Ըստ Մ. Չելենկովի՝ ՔՅ ինքնուրույն և պետությունից անկախ գործող ինստիտուտների և հարաբերությունների համակարգ է, որը կոչված է ապահովելու առանձին անհատների և կոլեկտիվների

⁸³ Տե՛ս **Панарин А. С.**, Политология: о мере политики на Востоке и на Западе: Учебник для вузов книжный дом, М., «Университет», 2000, էջ 5:

⁸⁴ Տե՛ս **Общая и прикладная политология: Учебное пособие / под ред. В. И. Жукова, В. Н. Краснова.** М., МГСУ, Изд. «Союз», 1997, էջ 12-19:

⁸⁵ Տե՛ս **Г. В. Полунина**, նշվ. աշխ., էջ 156:

ինքնաիրացման պայմանները՝ սեփական շահերին և պահանջմունքներին համահունչ⁸⁶:

Գ. Օսիպովը գտնում է, որ ՔՅ մարդկանց սոցիալական գործունեության համակարգ է, որը պատմականորեն վերածվել է հասարակական միավորումների: Դրանք միջնորդավորված են տնտեսական փոխարարություններով:

Վ. Բիբլերը ՔՅ-ն սահմանում է որպես ժամանակակից արդյունաբերական քաղաքակրթության շրջանակներում աշխատողների կամ պարզապես մարդկանց շփման մեխանիզմ, որոնք՝ որպես քաղաքացիներ քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքում հանդես են գալիս իբրև առանձին սուբյեկտներ և մասնակիցներ:

Ա. Միրոնովն ու Ռ. Ռուդենկոն ՔՅ էությունն ու կայացման նախադրյալները տեսնում են այն հասարակությունում, որտեղ առկա են սեփականության իրավունքով օժտված ու սեփականություն ունեցող սոցիալական շերտեր: ՔՅ պետք է ունենա պետությունից անկախ միջոցներ, ուստի պետք է ձևավորի ինքնակազմակերպվող ու ինքնաֆինանսավորվող հասարակական տարբեր միություններ⁸⁷:

Ըստ Ի. Կրավչենկոյի՝ ՔՅ հասարակության այն զարգացած տեսակն է, ուր քաղաքացիները հարաբերվում են և համագործակցում տնտեսական, քաղաքական, մշակութային և իրավական ոլորտներում՝ առանց պետության միջամտության:

Ա. Ալեքսանյանը ՔՅ սահմանում է որպես ինքնակառավարվող ցիվիլ իրախիկ ինստիտուտների և հարաբերությունների միություն, որը, համագործակցելով հասարակության համակարգի մյուս տարրերի հետ, պետք է ապահովի մարդու իրավունքների և ազատությունների գերակայությունը⁸⁸:

⁸⁶ Տե՛ս Зеленков М. Ю., նշվ. աշխ., էջ 71:

⁸⁷ Տե՛ս Социология: Практикум / Сост. и отв. ред. Миронов А. В., Руденко Р. И./, М., Соц.-полит. журнал, 1993, էջ 133:

⁸⁸ Տե՛ս Ալեքսանյան Ա. Ս., Քաղաքացիական հասարակություն // Քաղաքացիություն. ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար (խմբ. Յ. Մանուչարյան և ուրիշներ), Եր., ԵՊՅ հրատարակչություն, 2006, էջ 312:

Ա. Լեդենովան ՔՅ սահմանում է հետևյալ կերպ. «ՔՅ բարոյական և տնտեսական հորիզոնական կապերի հանրագումար է, որը չի ուղղորդվում և չի նախաձեռնվում պետության կողմից»⁸⁹:

Փիլիսոփայական բառարանում ՔՅ վերաբերյալ կարելի է հանդիպել հետևյալ սահմանմանը. «...դրա ձևավորումը բացատրում են մարդու բնական հատկություններով, քաղաքական խնդիրներով, կառավարման կամ օրենսդրության ձևերով, բարոյականությամբ և այլն: Այսինքն՝ հասարակական կապերի ամբողջությունը դիտվում էր իբրև «միջավայր», որտեղ ծավալվում է նրա գործունեությունը»⁹⁰:

ՔՅ ասպարեզ է, որը ընտանիքից, պետությունից և շուկայից դուրս է և ստեղծվում է անհատական և հավաքական գործողությունների, կազմակերպությունների և հաստատությունների կողմից՝ ընդհանուր շահերն առաջ տանելու նպատակով⁹¹:

Եթե փորձենք ընդհանրացնել վերը նշված սահմանումները, կարող ենք նշել, որ գրեթե չի հիշատակվում պետության կամ իշխանության մասնակցությունը ՔՅ ձևավորման, նրա ինստիտուտների ստեղծման կամ նրանց հետ որևէ փոխարաբերության մասին: Այն իսկապես պետությունից, շուկայից և ընտանիքից դուրս գտնվող միջանկյալ օղակ է:

ՔՅ մեկ այլ սահմանման մեջ այն որակվում է որպես սոցիոլոմի հատուկ ոլորտ, որն անպայման պետք է հակադրվի պետությանը իր ինստիտուտների, ներկայացուցիչների միջոցով կամ համագործակցի իշխանության օղակների հետ՝ սեփական շահերն ու նպատակներն իրականացնելու համար: ՔՅ և պետությունն այս դեպքում հասարակության քաղաքական և ոչ քաղաքական համակարգի ամբողջությունն են մեկ ընդհանուրի երկու անբաժան մասեր (այսպես էր կարծում նաև Կ.Մարքսը): Որքան էլ ՔՅ հակադրվի պետությանը, միևնույնն է, այն պետության օրգանական մասն է: Այս մոտեցումն է ընկած նաև մի շարք սահմանումների հիմքում:

⁸⁹ Տե՛ս Լեդենևա **Ա.Յ.**, Неформальная сфера и блат: гражданское общество или (пост)советская корпоративность? // Pro et Contra, 1997, Т. 2, № 4, էջ 113:

⁹⁰ Տե՛ս Փիլիսոփայական բառարան /խմբ.՝ **Մ. Մ. Ռոզենսոլի** /, Եր., 1975, էջ 438:

⁹¹ Տե՛ս «CIVICUS, Քաղաքացիական հասարակության ինդեքս, Հայաստանի քաղաքացիական հասարակությունը. Անցումային փուլից դեպի համախմբում», Եր., 2010, էջ 22:

Համաձայն Դեյվիդ Իսթոնի դասական սխեմայի՝ ՔՀ հանդես է գալիս որպես հասարակության պահանջմունքների ֆիլտր և քաղաքական համակարգի հենարան⁹²: Իսկ ըստ Ֆուկոյի՝ ՔՀ հավասարազոր է իշխանական հարաբերությունների նեգատիվ դրսևորումների հանրագումարին: Իր ուժն ու իշխանությունը ցուցադրող հասարակության փոխարեն, գրում է նա, մենք այժմ ունենք «պատժախցային հասարակություն» (общество карцерного типа)⁹³:

Շատ տեսաբաններ, քննադատելով կամ հերքելով ՔՀ դերն ու նշանակությունը պետության և հասարակության կյանքում, այն ներկայացնում են միայն բացասական կողմերով, սակայն, միևնույնն է, չեն կարողանում թաքցնել իրենց հետաքրքրությունը ուսումնասիրվող գիտակարգի հանդեպ: Ն. Լումանը նրանցից մեկն է: Նա իր աշխատություններում, ինչպես Պարսոնսն ու Վեբերը, բազմաթիվ բնութագրությունների ու մեկնաբանությունների կողքին երբեք չի կիրառել ՔՀ տերմինը կամ գոնե դրա հավասարազոր նմանակը: Լումանի՝ ՔՀ նկատմամբ հետաքրքրությունն առաջացել է Պարսոնսի աշխատություններին ծանոթանալիս, և շատ հարցերում նրանց տեսակետները համընկնում են. Լումանը համարվում է Պարսոնսի հայացքների մերձավոր տեսաբանը: Նա հնացած համարում ոչ միայն քաղաքական և քաղաքացիական հասարակությունը, այլ նաև այն, ինչը եկել է փոխարինելու դրանց: Այս առումով նրա տեսակետները բավականին մերձենում են Մարքսի պատկերացումներին:

Ի. Շապիրոն ՔՀ գոյությունը համարում է հասարակության բազմաթիվ սահմանազատումների ու տարանջատումների հետևանք: Այն տարաբնույթ խմբերի, միավորումների միագումար է, որը պաշտպանիչ դեր է ստանձնում պետության և քաղաքացու միջև⁹⁴:

«Կանտից է սկսվում արդիականացման շրջանը (modernity)»- խոսքերի հեղինակը Յոն. Հաբերմասն է՝ 20-րդ դարի ՔՀ հայեցակարգի տեսաբաններից մեկը, ով ընդգծում է դեմոկրատական ինստիտուտների համընդհանուր կարևորությունը:

⁹² Տե՛ս Easton D. A., Framework for Political Analysis, Englewood Cliffs, N.J.: Prentice-Hall, Inc., 1965:

⁹³ Տե՛ս Коэн Д. Л., Арато Э., նշվ. աշխ., էջ 291:

⁹⁴ Տե՛ս Шапиро И., Демократия и Гражданское общество, // Полис: Политические исследования, 1992, №4, էջ 9-10:

Ամենաարդյունավետ «մեթոդը» ՔՅ-ն հզորացնելու և զարգացնելու, ըստ նրա, սահմարարական փոփոխության ներքին և հասարակական ինստիտուտների զարգացումը: Նա իր տեսության մեջ ոչ միայն տարբերակում է ՔՅ և պետությանը, այլ նաև կարողանում է սահմանազատել մասնավորի և հրապարակայինի առանձնահատկությունները.

- *մասնավոր – անձնական ոլորտ (ընտանիք), մասնավոր տնտեսություն,*
- *հրապարակային – հրապարակային ոլորտ, հրապարակային իշխանություն՝ պետություն,*
- *մասնավոր-մարդ (home), բուրժուազ,*
- *հրապարակային – քաղաքացի, ենթակա:*

Հաբերմանը հայտնվել է ուսումնասիրողների հետաքրքրության շրջանում իր եզրահանգման պատճառով: Պարադոքսն այն է, որ նա, կատարելով լուրջ վերլուծություններ նորմատիվային գաղափարի նույնականացման մակարդակում, ՔՅ և պետության տարանջատման գործընթացը բնութագրելիս, հանգում է այն եզրակացության, որ այս իդեալը կարելի է փրկել միայն այն դեպքում, եթե կավարտվեն (ինչպես արդեն տեղի ունեցել) անկախ ՔՅ առանձնացումն ու ոչնչացումը⁹⁵:

Դ.Կոենն ու Է.Արատոն նշում են, որ ՔՅ գտնվում է լեգալության և լեգիտիմության արանքում: Հասարակության ինքնագործունեության եներգիան, ըստ նրանց, ընդլայնելով կենսական հարցերի և պահանջմունքների բազմազանությունը, տեղաշարժում է լեգիտիմության սահմանները, դրդում պետությանը արձագանքելու իրեն, ընդունելու օրենքներ կամ վերանայելու դրանք, տալու սահմանադրական դրույթերին ճկունություն և առաձգականություն՝ մեծացնելով լեգալության շրջանակները⁹⁶:

⁹⁵ Տե՛ս **Хабермас Ю.**, Философский дискурс о модерне / пер. с нем. М. М. Беляева и др./, М., изд. Весь мир, 2003:

⁹⁶ Տե՛ս **Молокова М. А.**, Гражданское общество как фактор политической модернизации: проблемы и вызовы, Политические науки // Теория и практика общественного развития, № 5, М., 2011, էջ 173-175:

Ա. Չուբովի մեկնաբանությամբ՝ ՔՅ հասարակության այն տեսակն է, որը կազմակերպված դեմ է կանգնում պետական իշխանությանը⁹⁷:

Յամացանցի «Վիքիպեդիա» կայքում ՔՅ ներկայացված է որպես հասարակական կազմակերպությունների և կառույցների համակարգ, որը ձևավորում է հասարակության գործունեության հիմքը՝ ի հակադրություն պետության որևէ ուժային կառույցի՝ անկախ այդ պետության քաղաքական և տնտեսական համակարգի ինչպիսին էլ ինքնուրույն:

ՔՅ-ն տնտեսության, մշակույթի և ոչ քաղաքական այլ ոլորտներում քաղաքացիների հարաբերությունների հանրագումար է, որը առաջ է գալիս դեմոկրատական հասարակության և անկախ, ինքնիշխան պետության շրջանակներում:

Օրհուսի կոնվենցիայում ՔՅ (III հատված) սահմանվում է որպես գիտակից հանրություն, որը դուրս է պետական (I հատված) և մասնավոր (II հատված) հատվածներից և իր ակտիվ մասնակցությամբ հակակշռում ու հավասարակշռում է պետական մեքենան⁹⁸:

Ամփոփելով կարող ենք նշել, որ ՔՅ հանրային տարածությունն է պետության, շուկայի և շարքային քաղաքացիների միջև, որտեղ մարդիկ կարող են ծավալել քննարկումներ և նախաձեռնել հասարակական միջոցառումներ: Այլ խոսքերով, ՔՅ կամավորական կուլեկտիվ գործառույթ է, որի շուրջ համախմբվում են մարդիկ՝ քաղաքացիներ՝ լուծում տալու կամ իշխանությունների և պատկան մարմինների ու շարժումները հրավիրելու որևէ հասարակական հնչեղություն ունեցող խնդրի կամ խնդիրների վրա: Պետության ներսում ունենալ կայացած և հզոր ՔՅ նշանակում է նվազեցնել պետական իշխանական կառույցների ուղղահայաց ազդեցությունը ազատ շուկայի, մասնավոր սեփականության ընդլայնման և անհատի ազատությունների, պահանջների, շահերի բավարարման գործընթացում՝ ուժեղացնելով հորիզոնական կապերը:

⁹⁷ St' u Зубов А., Современное русское общество и civil society: границы наложения/ Pro et Contra, том 2, 1997, № 4, էջ 22:

⁹⁸ St' u «ՄԱՆԻՖԵՍՏ. Յանուն ժողովրդի ինքնիշխանության, ՅՅ Սահմանադրությամբ ամրագրված Մարդու իրավունքների պաշտպանության, իրավունքի գերակայության», էջ 1-3 // https://hetq.am/static/content/pdf/Teghut_Manifesto_armenian_final.pdf (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

Յետևաբար կարելի է նշել, որ ժամանակակից ՔՀ պետության նից հարաբերականորեն ինքնուրույն առանձին միություն է, քաղաքացիների բազմազան մասնավոր շահերի և պահանջմունքների գործունեության ոլորտ: ՔՀ իրավաւեր, ազատ, ակտիվ, պատասախանատու քաղաքացիների և պետության նից անկախ կամովին ձևավորված կազմակերպությունների, միությունների, միավորումների, փոխագնության խմբերի ինքնակառավարման և ինքնահամակարգման վրա հիմնված սոցիալական, տնտեսական և հոգևոր-մշակութային հարաբերությունների համակարգ է, որը կոչված է իրացնելու նրանցից յուրաքաչյուրի և բոլորի շահերն ու պահանջմունքները: ՔՀ պետության հասարակական-քաղաքական թատերաբեմում գործող ոչ կառավարական կազմակերպությունների և կառույցերի համակարգ է, քաղաքացիների մասնավոր և հասարակական շահերի, պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված միավորման յուրահատուկ ձև, որի միջոցով քաղաքացին ակտիվ մասնակցություն է ունենում հանրային քաղաքականության ձևավորման գործընթացում՝ դրան տալով սոցիալական շեշտադրում:

Այսպիսով, ՔՀ կարող է սահմանվել նաև հետևյալ կերպ՝

ՔՀ-ն հանրային բարիքի պարտականությանը միտված հասարակական ոլորտի ինստիտուտների համակարգ է, որը, ձևավորվելով պետության նից հարաբերականորեն անկախ քաղաքացիական ինքնագիտակցության հիման վրա, երբեմն պետական իշխանության մարմինների փոխհամագործակցության, երբեմն նրան հակակշիռ դառնալու արդյունքում, հաճախ այլ յուրաքաչյուրի, ոչ ստանդարտորոշումների՝ քաղաքացիական անհնազանդությունների, նախաձեռնությունների կամ կազմակերպությունների գործունեության միջոցով հնարավորություն է ստանում հասնելու մասնավոր-անհատական և կոլեկտիվ շահերի իրագրմանը՝ գործելով տվյալ երկրի սահմանադրական դրույթների, օրենքների շրջանակներում՝ պահպանելով հասարակական համերախությունն ու համախմբվածությունը, փոխդրամման ապրումնական ձևաչափը:

1.3. Պետություն և քաղաքացիական հասարակություն փոխհարաբերության քաղաքական ընթացակարգերը

Պետություն և քաղաքացիական հասարակություն, նրանց ինստիտուտների փոխհարաբերության հարցերը համարվում են քաղաքագիտության (տեսություն) ու քաղաքականության (պրակտիկա) կարևոր խնդիրներից մեկը: Խնդիրն օբյեկտիվորեն առաջացել է այն ժամանակ, երբ ՔՅ սկսել է ձևավորվել և իր գործառույթներով տարանջատվել հասարակության քաղաքական համակարգում: ՔՅ սկզբնավոր յուրօրինակ ջրբաժան է դարձել մարդու և քաղաքացու իրավունքների սահմանազատման գործընթացում: Իշխանության տարանջատման և մասնավոր սեփականության ձևավորման արդյունքում հասարակության կյանքի բոլոր ոլորտները տնօրինող պետությունը ստիպված է սահմանափակել իշխանական գործառույթները և վերադասավորել սեփական որոշ կառույցներ:

ՔՅ և պետությունն ինքնուրույն ինստիտուտներ են, սակայն նրանց կառույցներն ու անդամները մշտապես փոխադարձ շփման մեջ են: ՔՅ կառույց է, որը սոցիոլոմի մեջ առաջացել է որպես պետության հետհամագործակցող կողմ և կոչված է վերահսկել ու պետությունը:

Բազմաթիվ մտածողներ տարբեր ժամանակներում փորձել են հիմնավորել այս կամ այն կողմի կարևորությունը՝ հիմքում ունենալով այն երկրի քաղաքական ռեժիմն ու կառավարման ձևը, որտեղ ապրել են: ՔՅ և պետության հարաբերությունների խնդիրն են անդրադարձել Արիստոտելը, Ջ. Լոկը, Թ. Յոբսոնը, Ծ. Մոնտեսքյուն, Ի. Կանտը, Յեզեկը, Կ. Մարքսը, Ա. Գրամշին, Յու. Յաբերմասը և այլք: Յիմնախնդրի հետահայաց քննությունը ցույց է տալիս, որ ՔՅ գրեթե միշտ ուսումնասիրվել է պետության և նրա կառույցների հետ ունեցած հարաբերությունների դիտանկյունից:

Ո՞ր կողմը պետք է իշխի՝ պետությունը ՔՅ-ին, թե՞ ՔՅ-ն պետությանը: Սկսած Լոկից մինչ օրս՝ այս խնդիրը մնում է ոլորտի ամենաքննարկվողներից մեկը: Յուրաքանչյուր կողմ ունի համակիրների իր բանակը, որոնք հիմնավորում ու փաստարկում են

իրենց մոտեցումների ու դիրքորոշումների իրավացիությանը⁹⁹: Պետության և ՔՅ հարաբերության ներքին խնդրին ժամանակակից պատկերացումներով մոտենալու դեպքում պատասխանն ակնհայտ է. պետք է իշխի այն կողմը կամ, ինչպես տեսաբաններն են նշում, այն ենթահամակարգը, որի ձեռքում է քաղաքական իշխանությանը՝ լեգիտիմ իշխանությանը: Մյուս կողմից, ՔՅ իր թիկունքում ունի հասարակական հզոր ուժ, որի հետ պետությանն ու քաղաքական իշխանությանը հաշվի չնստել չեն կարող:

Ցանկացած պետության ու նենալ կայացած ՔՅ նշանակում է ու նենալ հասարակական և քաղաքական հարաբերության ներքին գործառույթների հստակ սահմանազատում: Իշխանության գործառույթներից, ըստ Ի. Կրալչենկոյի, կարելի է առանձնացնել ռազմավարության մշակումը, բնակչության կենսագործունեության բոլոր ոլորտների դեմոկրատացումը, պետական սահմանների պաշտպանությանը, ՔՅ արդյունավետ գործունեության համար իրավական և ինստիտուցիոնալ դաշտի ապահովումը, նրա յուրաքանչյուր անդամի իրավունքի, սեփականության, արժանապատվության պաշտպանությանը և այլն: Ըստ Ա. Միհրանյանի՝ պետության գործն է ռազմավարության մշակումը, քաղաքացիների հասարակական գործունեության արդյունավետության ապահովումը, նրանց իրավունքների, սեփականության և արժանապատվության պաշտպանությանը, հասարակության կենսագործունեության համար բոլոր բնագավառների դեմոկրատացումը, սահմանների պաշտպանությանն ու ներքին կարգուկանոնի ապահովումը: Իսկ մնացած հիմնախնդիրներով, որոնք կարող են առաջանալ հասարակության մեջ, կզբաղվի ՔՅ: Ինչպես նշում է Ն.Բերդյանը. «Միամտությանն է կարծել, թե պետությանն ստեղծված է և շնչում է հումանիզմի և բարության պաթոսով. այն ուժի, էքսպանսիայի, կարգուկանոնի հաստատման մեխանիզմ է բարության նվազագույն չափաբաժինը նաստիպված է պահել ինքնապահպանման բնագոյից դրդված»¹⁰⁰:

⁹⁹ Տե՛ս **Полунина Г.В.**, նշվ. աշխ., էջ 156:

¹⁰⁰ Տե՛ս **Hovhannisyan H.**, The Factor of Human Rights Protection as Criteria for the Development in the Social System, in: **A. Mihr, A. Mkrtichyan, C. Mahler, R. Toivanen** (Eds.), Armenia: A Human Rights Perspective for Peace and Democracy (Human Rights, Human Rights Education and Minorities). Potsdam, 2005, pp. 23-30:

Պետության ներսում այն, ինչը քաղաքական չէ, ներառվում է ՔՀ շրջանակներում:

Պետության և ՔՀ համագործակցությունն անընդհատ փոփոխվում է և ծնում հակասություններ՝ պայմանավորված քաղաքացիական ոլորտում առկա բազմակարծությամբ, ինքիշխանությամբ: Այս իրողությունը նպաստում է նաև ոչ ստանդարտ, միակողմանի, կարծրատիպային, ինչ-որ առումով նաև ոչ ճիշտ մոտեցումների առաջ գալուն, այն է՝ ՔՀ միշտ պետք է ընդդիմադիր կեցվածք ունենա պետության նկատմամբ: Հասարակությունն իր ներկայացուցիչների միջոցով պետք է պարբերաբար բացահայտ հակասությունն ապահովի 3-րդ հատվածի և պետության միջև՝ իրեն վերապահելու որոշակի քաղաքական իրավունքներ¹⁰¹: Իրադարձությունների նման ընթացքը լիովին հնարավոր է, եթե պետության և ՔՀ առանցքային կառույցների շահերը չունենան ընդհանուր եզրեր: Սակայն արդեն ձևավորված դոմինանտ այս կարծիքն ինչ-որ առումով հակասում է ՔՀ տեսական գաղափարին ու եությանը, քանի որ ՔՀ գործառույթները և գործունեության շրջանակներն իրականում ավելի ընդգրկուն են: ՔՀ պետք է և կարող է աջակցել պետությանը, իսկ ավելի ցանկալի է, որ գուգակշռի նրան: Հակառակ դեպքում հակասությունը որպես հետևանք միշտ ենթադրում է ամենատարբեր կոնֆլիկտների առաջացում, որոնք կարող են ներկայացված լինել կամ «փաթեթավորված» վիճակում (առանց սրացման բարձր աստիճանի) կամ հակառակը՝ իրենց ամբողջական տեսքով՝ չշրջանցելով քաղաքացիական անհնազանդությունը, միտինգները, հացադուլները, գործադուլները և այլն: Դեմոկրատական կառավարման համակարգը սովորաբար ստեղծում է ազատ տարածություն քաղաքացիական անհնազանդության լեզու ձևերի համար և մշակում դրանց արձագանքները կառուցողական քայլեր՝ հնարավոր ճգնաժամերից խուսափելու համար:

ՔՀ և պետության փոխհարաբերությունները տարբեր ռեժիմներում ունենում են դրական կամ բացասական հետևանքներ: Դրանց ոչ կառուցողական հարաբերությունները կամ

¹⁰¹ Տե՛ս «**Ինչ է քաղաքացիական հասարակությունը**» // «Հայացք ամսագիր», թիվ 16 (33), 29 ապրիլի 2011թ., Եր., էջ 6:

փոխարարությունը իշխանության կողմից միակողմանի ազդեցության վերածելու պատճառով, հասարակության կյանքի առանձին ոլորտներում հաճախ արձանագրվում են ամենատարբեր հետևանքներ, ինչպես օրինակ՝ ԽՍՀՄ անդամ պետությունների պարագայում եղավ: Չնայած այս երկրների զարգացած տնտեսությանը, արդյունաբերությանը, խեղաթյուրվեցին հոգևոր-մշակութային, ազգային-էթնիկ ոլորտները:

Ինչպես ցանկացած սոցիալական երևույթ, ՔՅ նույնպես անընդհատ զարգացող, դինամիկ երևույթ է: Անցնելով զարգացման որոշակի ուղի՝ այն չէր կարող պետության հետ պահպանել կայուն փոխարարությունների այն մեխանիզմը, որ սովորաբար լինում է ՔՅ ձևավորման գործընթացի սկզբում: Բնականաբար դա չէր կարող ընդունելի և արդիական լինել տարբեր ժամանակներում տարբեր պետություններում. ՔՅ և պետության փոխարարությունների մեխանիզմներն ու գործակցության մոդելները տարբեր են և չեն տեղավորվում կառուցվածքային մոտեցման շրջանակներում:

Մասնագիտական գրականության մեջ, որպես կանոն, ՔՅ գաղափարի, հասարակական և քաղաքական համակարգերում դրատեղի ու դերի մասին ուսումնասիրությունները նախորդում են «Քաղաքական ռեժիմ» թեմային: Այս մոտեցումն ունի իր օբյեկտիվ հիմքերը: Եվրոպական, ամերիկյան և սկանդինավյան երկրների փորձը ցույց է տալիս, որ որքան պետության ներսում այս երկու թևերը համագործակցության եզրեր են փնտրում և ամրապնդում հասարակական-քաղաքական երկխոսության հիմքերը, այնքան հասարակության մեջ առկա խնդիրները առավել ազույնս արդյունավետ լուծում են ստանում: Հարց է առաջանում. եթե այնպիսի հզոր գերտերություն, ինչպիսին ԽՍՀՄ էր, տասնամյակներ շարունակ գոյություն է ունեցել գրեթե առանց ՔՅ (մասնագիտական գրականության մեջ խորհրդային երկրների ՔՅ բնութագրվում է որպես ամորֆ), կարելի՞ է արդյոք ենթադրել, որ պետության զարգացման ու առաջընթացի, հասարակության բարեկեցության ապահովման համար առանձնապես չկա դրա գոյության անհրաժեշտությունը: Կա պետություն, որը կոչված է կառավարել երկիրն ու հասարակությունը, մշակել դրա տնտեսական և քաղաքական կայությանն ու արտաքին քաղաքականության

ռազմավարությունը, հոգ տանել ազգաբնակչության բարեկեցության մասին, պաշտպանել երկրի սահմանները և այլն: Սակայն այլ է մոտեցումը ժողովրդավարական քաղաքական համակարգ ունեցող երկրներում, որտեղ կարևոր նախապայման և գործոն են ՔՀ առկայությունն ու գոյությունը: Ժողովրդավարական պետություններում ՔՀ բնութագրվում է որպես բնակչության սոցիալական ակտիվության բազմաբնույթ ձևերի միագումար, որը հարաբերականորեն անկախ է պետական մարմինների գործունեությունից և սոցիումի ինքնակարգավորման իրական մակարդակի անդրադարձն է¹⁰²: ՔՀ ինստիտուտներն ու կառույցները ոչ քաղաքական մակարդակում քաղաքացիների իրավունքների պաշտպանության, մասնավոր շահերի իրացման համար նեցուկն են և երաշխավորը: Մյուս կողմից, ձևավորվելով պետությունից հարաբերականորեն անկախ, ՔՀ ենթադրում է պետության առկայությունն՝ նախ որպես իր գոյության և գործունեության պայման, ապա՝ երաշխիք¹⁰³: Այս առումով քիչ այլ իրավիճակ է անցումային փուլում գտնվող հասարակություններում, որտեղ ճիշտ հակառակ պատկերն է. պետությունն ու ՔՀ պարբերաբար դուրս են գալիս միմյանց դեմ: Ամբողջատիրության բեռը թոթափած երկրների մասին, որոնք նոր են որդեգրել ժողովրդավարական քաղաքական ռեժիմին անցնելու կուրսը, Ա.Միհրանյանը նշում է. «Այն պայմաններում, երբ բավականաչափ զարգացած չեն տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտները, և անցումը նոր քաղաքական համակարգին սկսվում է գրոյից, նոր ձևավորված պետական կառույցները գործնականում հանդիսանում են այն միակ ուժը, որի վրա դրվում են արմատական շրջադարձային փոփոխությունների (коренная ломка) իրականացման խնդիրը և հասարակության համակարգի տնտեսական, սոցիալական, մշակութային և հոգևոր ոլորտի կյանքի վերակառուցումը: Արդյունքում տեղի է ունենում պետության և ՔՀ գործառնությունների շրջադասում (инверсия). հասարակությունը հայտնվում է այնպիսի վիճակում, երբ ինքնուրույն չի կարողանում բարձրաձայնել և

¹⁰² Տե՛ս Соловьев А. И., Политология, Политическая теория. политические технологии, М., Аспект Пресс, 2014, էջ 194:

¹⁰³ Տե՛ս Грудцына Л.Ю., Возможен ли диалог между ГО и государством http://www.ni-journal.ru/archive/14928136/n_3_2009/7b5c5d88/b5f73515/-print=1.htm (վերջին դիտում՝ 14.03.2016թ.):

օրակարգ մտցնել հրամայական խնդիրներ, իսկ պետությանն այս պայմաններում իր վրա է վերցնում ոչ միայն սեփական, այլ նաև ՔՀ գործառույթները: Այսպիսով, պետությանը կարծես «կլանում է հասարակությունը»¹⁰⁴: Մի կողմից պետությանն իր ուսերին է վերցնում սոցիալական և տնտեսական պարտավորությունների «հսկա կոճղը», իսկ մյուս կողմից՝ ստեղծում պայմաններ ՔՀ ինստիտուտների ձևավորման և գործառնության համար, որոնք ավելի մոտ են սոցիալական ծառայություններին: Այս ինստիտուտները կարող են սոցիալական օժանդակությունը դարձնել ավելի հասցեական: Լավատեսորեն մոտենալու դեպքում, ըստ ՔՀ բովանդակային տրամաբանության, նրա ինստիտուտների և կառույցների սոցիալական գործառույթների իրականացումը պետք է նպաստի պետության գերծախսերի նվազեցմանը, որը հատկապես կարևորվում է անցումային փուլում գտնվող տնտեսությունների համար¹⁰⁵: Այսպես, պետությանը՝ որպես ինստիտուտ, համակարգում է հասարակության կյանքն ու նրա քաղաքական գործունեությունը: Այս դեպքում ՔՀ-ները՝ որպես քաղաքացիների կամավոր անդամակցությամբ կազմակերպված միություններ, նրանց սոցիալական ակտիվության շնորհիվ, ձևավորում են դիպեկտիկական հակասություն. մարդիկ հանդես են գալիս 2 դիրքերից՝ քաղաքացիներ՝ կառավարվողներ, և անհատներ՝ ազատ հասարակության ներկայացուցիչներ¹⁰⁶:

Քաղաքացիական հասարակությունը բարդ կառուցվածք ունի և հասարակական կազմակերպությունների ժողովրդավարացման հիմքն է¹⁰⁷:

Մասնագիտական գրականության մեջ ՔՀ և պետության համագործակցության համար նշվում է երեք հնարավոր տարբերակ.

- 1/ ՔՀ և պետություն - 2 կոնֆլիկտային թևեր,
- 2/ ՔՀ և պետություն – 2 գործընկերներ,
- 3/ ՔՀ և պետություն - 2 չեզոք կամ անկախ թևեր¹⁰⁸:

¹⁰⁴ Տե՛ս **Миграция А.**, Гражданское общество // 50/50: Опыт словаря нового мышления / под общ. Ред. Ю. Афанасьева и М. Ферро/. М., Прогресс, 1989, էջ 447-448:

¹⁰⁵ Տե՛ս **Соснушкин С. В.**, Гражданское общество и социальное государство: проблема взаиморазвития // <http://great-sam.chat.ru/sonushkin.doc> (վերջին դիտում՝ 14.03.2016թ):

¹⁰⁶ Տե՛ս **Кальной И. И.** и др., Гражданское общество: истоки и современность / Науч. ред. проф. И. И. Кальной, доц. И. Н. Лопушанский, Санкт-Петербург: «Юридический центр Пресс», 2006, էջ 19:

¹⁰⁷ Տե՛ս **Политология, Энциклопедический словарь**, /Общ. ред. и сост. **Ю. И. Аверьянов**/. М.: изд-во Моск. коммерч. ун-та, 1993, էջ 444:

Առաջին տարբերակն ամենայն հավանականությամբ այսօրվա հետխորհրդային երկրներում ձևավորված անցումային հասարակություններին բնորոշ իրողությունն է, որն արագորեն ներթափանցում է նաև Մերձավոր Արևելքի երկրներ: Խնդրի առկայությունը մեծ չափով պայմանավորված է այս երկրների քաղաքական մշակույթի ցածր մակարդակով: Ի դեպ, ՔՀ հիմնական կառույցի՝ հասարակական կազմակերպությունների դերը երկրում քաղաքական մշակույթի զարգացման գործում հսկայական է:

2-րդ տարբերակը լավագույն մոդելն է, որը չնայած որոշ ուտոպիստական տարրեր է պարունակում, սակայն գրեթե իրականություն է դարձել եվրոպական, ամերիկյան և հատկապես սկանդինավյան երկրներում: Այս երկրների հասարակությունների կյանքում քաղաքականի և ոչ քաղաքականի չափաբաժինները հաջողությամբ միահյուսված են: Ընդ որում, ոչ քաղաքական ոլորտը բավականին ինքնուրույն է: Թե՛ տնտեսական, թե՛ հասարակական-քաղաքական, թե՛ սոցիալ-մշակութային ոլորտներում առկա ձեռքբերումները ՔՀ – պետությունն արդյունավետ համագործակցության ուղղակի ապացույց են¹⁰⁹:

Ա. Նաջալը իր հետազոտության մեջ անդրադարձնալով պետության և ՔՀ համագործակցությանը, նպատակներին ու միջոցներին, առաջարկում է այս երկու ինստիտուտների փոխհարաբերությունների մեխանիզմների հետևյալ մոդելները.

1/ համագործակցություն (cooperation), երբ պետությունն ու ՔՀ ունեն միևնույն նպատակներն ու միջոցները,

2/ բախում (confrontation), երբ պետությունն ու ՔՀ ունեն տարբեր նպատակներ ու տարբեր միջոցներ,

3/ փոխլրացում (complementarity), երբ պետությունն ու ՔՀ ունեն տարբերվող միջոցներ, բայց միևնույն նպատակները,

4/ կոոպտացիա (co-optation), երբ պետությունն ու ՔՀ ունեն տարբեր նպատակներ, սակայն գրեթե միանման միջոցներ¹¹⁰:

¹⁰⁸ Տե՛ս Мальцев В. А., նշվ. աշխ., էջ 326:

¹⁰⁹ Տե՛ս Общая и прикладная политология: Учебное пособие / Под общей редакцией В. И. Жукова, Б. И. Краснова, М., МГСУ; Изд-во “Союз”, 1997, էջ 15:

¹¹⁰ Տե՛ս Najam A., The Four Cs of Government-Third Sector Relations: Cooperation, Confrontation, Complementarity, Co-optation. Research Report Series # 25, 2000 // <https://www.sdpi.org/publications/files/R25-The%20Four%20Cs%20of%20Government-Third.pdf> (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

Պ. Բարանովը մատնանշում է պետության և ՔՀ համագործակցության 4 տարբերակ՝ նմանատիպ (իդենտիտար), չեզոք (ինդիֆերենտ), հաղորդակցական (կոմունիկատիվ) և բացառող (անտիևոմ)¹¹¹: Այս տարբերակները ձևավորում և ինչ-որ չափով սահմանափակում են լեգիտիմ իշխանության գործունեության շրջանակները ոչ քաղաքական հատվածում:

Իդենտիտար կամ նմանատիպ մոդելում պետությունն ու ՔՀ հանդես են գալիս որպես հոմանիշ կամ համարժեք հասկացություններ: Մեկ անգամ ձևավորելով պետությունը և նրան տալով սեփական իրավունքների, պարտականությունների մի մասը՝ «անհատներն անվերադարձ հայտնվում են իշխանության ցանցում, որտեղից էլ երբեք դուրս գալ չեն կարող»¹¹²: Իդենտիտար մոդելին, որում միաձուլվում են պետությունն ու հասարակությունը (այս խնդրին հանգամանակից անդրադարձել է նաև Ա.Միհրանյանը), ավելի բնորոշ է միապետական և ամբողջատիրական պետություններին: Անտիևոմ մոդելը ենթադրում է պետության և ՔՀ տարանջատում՝ տարբեր ինստիտուտներ, տարբեր ռեսուրսներ, շահերի ինտեգրման տարբեր մեխանիզմներ և մեթոդներ, արմատապես տարբեր նպատակներ և, վերջապես՝ ձևավորման տարբեր աղբյուրներ: Այս մոտեցումն ընկած է լիբերալիզմի հիմքում: Ինդիֆերենտ մոդելում, որը համընկնում է Մարքսի նշած առաջին տարբերակին, առաջ է քաշվում Թ. Փեյնի, Թ. Սպենսի, Յ. Խոջինսկու տեսություններում առանցքային համարվող «ՔՀ ընդդեմ պետության անսահմանափակ իշխանության» դրույթը: Եվ որքան «փոքր» լինի այդ իշխանությունը, որը մտնում է հասարակության «խորք», այնքան հասարակության բնականոն զարգացման և գործունեության համար կստեղծվեն ավելի նպաստավոր պայմաններ: Կոմունիկատիվ մոդելը առավել բնորոշ է 20-րդ դարի պետություններին, ուր քաղաքացիական հասարակության առանցքը համարվում է քաղաքացին: Եթե նախորդ մոդելներում անընդհատ շեշտվում կամ անտեսվում էր մարդ-քաղաքացին՝ իր

¹¹¹ Տե՛ս **Баранов П. П.**, Институты гражданского общества в правовом пространстве современной России: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата политических наук. Специальность 23.00.02 - Политические институты; Этнополитическая конфликтология; Национальные и политические процессы (юридические науки). Ростов-на-Дону, 2003, 22 с.

¹¹² Տե՛ս **Мальцев Г. В.**, Существует ли долг гражданского неповиновения? // http://www.ni-journal.ru/archive/2005/n2_05/ubilmysl2_05/maltsev2_05 (վերջին դիտում՝ 14.03.2016թ.):

պահանջմունքների ու շահերի համակարգով, ապա այս մոդելում ՔՀ ձևավորում են ոչ կառավարական կազմակերպությունները, ՏԻՄ-երը, արհմիությունները և այլն: Սրանք իրենց գործունեությունն են իրականացնում բնապահպանության, կրթության, առողջապահության և այլ ոլորտներում: Այս մոդելում առավել կարևորվում են անհատի բնական և ձեռնարկչատիրական իրավունքները, որոնք անպայման պետք է ենթադրեն սոցիալական պատասխանատվություն:

Գրականության մեջ ՔՀ-պետության փոխհարաբերությունների մեխանիզմների կամ համագործակցության մոդելների մասին խոսելիս կիրառվում է «իրավական պետություն» հասկացությունը: Ինչպես նաև նշվում է, որ անիմաստ է խոսել ՔՀ ձևավորման, առավել ևս նրա ակտիվ գործունեության մասին ոչ ժողովրդավարական երկրներում: Ժողովրդավարությունն ունենալու համար նախ պետք է ժողովրդավարեցնել հասարակությունը՝ իրականացնելով քաղաքական արդիականացում: Այս գործընթացում ՔՀ ինստիտուտները վերջին դերակատարումը չունեն: Քաղաքական արդիականացման նպատակն է ձևավորվել հասարակության և իշխանության հարաբերությունների նոր տեսակ, ուր քաղաքացիների կամավոր միություններն ու միավորումները կկարողանան իրապես ազդել իշխանության բոլոր մակարդակներում ընդունվող կառավարական որոշումների վրա: Այս ողջ գործընթացի հիմնական առանցքը, հիմքը հասարակության և պետության միջև առկա կոպիտ պատնեշների վերացումն են, իշխանության և բնակչության միջև համագործակցության ապահովումը: Այսինքն՝ կամուրջներ՝ պատերի փոխարեն: Արդիականացման հեռահար նպատակը սոցիալական ոլորտի զարգացումն է և հասարակության առջև ծառայած օրակարգային հարցերի լուծումը: Այս գործընթացը ՔՀ-ն ուղղորդում է դեպի պետություն՝ նրան գործընկեր դիտելով և նեցուկ լինելով, օրակարգային անընդհատ համագործակցությունն ունենալով նրա հետ: Ռեսուրսներից մեկը, որը միավորում է պետության և ՔՀ ինստիտուտները, օրենքն է՝ մշակված մարդու և քաղաքացու իրավունքների հիման վրա: Որքան էլ նշվի, թե ՔՀ ինքնուրույն ոլորտ է, միևնույն է, իր գործունեությունը ծավալելիս պետք է հետևի այն օրենսդրությանը, որն իր համար մշակում է օրենսդիրը: Ահա այստեղ է դրսևորվում քաղաքական

իշխանությունների քաղաքական կամքը և կայացած ՔՀ համագործակցության կապը «ելքի» գործառույթում: Իրավական պետությունում իշխանությունը «ելքի» ժամանակ ցանկանում է տեսնել ՔՀ այնպիսի ինստիտուտներ, որոնք ունակ կլինեն մասնակցություն ունենալու քաղաքական արդիականացմանը և նպաստել երկրում ժողովրդավարության ամրապնդմանը¹¹³:

Եթե 20-րդ դարի վերջին և 21-րդ դարասկզբին դեմոկրատական երկրներում ՔՀ և պետության փոխհարաբերություններն առավել խոսուն ներկայացնելու համար օգտագործվում էին «իրավական պետություն» և «քաղաքացիական հասարակություն» հասկացությունները, ապա մեր օրերում ավելի արդիական են «սոցիալական իրավական պետություն» և «իրավական քաղաքացիական հասարակություն» տերմինները: Օ.Է. Լեյստը նշում է, որ «քաղաքացիական հասարակություն» և «իրավական քաղաքացիական հասարակություն» հասկացությունները պետք է տարանջատել. վերջինս ՔՀ զարգացման վերջնական արդյունքն է¹¹⁴: Այսինքն, եթե ժամանակակից հասարակությունն իր բնույթով քաղաքացիական է, ուրեմն երկրամբ պետք է լինի նաև իրավական:

Օրենքի և իրավունքի գերակայությունը հիմք է դառնում իրավական պետության համար, որը ՔՀ դիտարկում է որպես գործընկեր, նեցուկ, հակակշիռ: Ի վերջո, իրավական պետության առկայությունը կփոխի այն պատկերացումը, թե քաղաքացին միշտ պատասխանատու է պետության առաջ, իսկ պետությունը քաղաքացու առաջ՝ երբեք: ՔՀ-ում հասարակության բոլոր անդամներն ազատ ու իրավահավասար սուբյեկտներ են, ունեն բնական և անօտարելի իրավունքներ ու ազատություններ: ՔՀ ենթադրում է պետության առկայությունն որպես իր գոյության և գործառնություն երաշխիք: Չնայած որոշ տեսաբաններ (Լոքբ, Սպեյս, Փեյն) շեշտում են այն միտքը, թե հասարակությունն ավելի հին «մարմին է», քան պետությունը, սակայն եթե չլիներ վերջինը, չէին լինի ոչ միայն ՔՀ, այլ և առհասարական դրամասին գաղափարը: Դեմոկրատական քաղաքական համակարգի պայմաններում ՔՀ «համագործակցում է»

¹¹³ Տե՛ս Աбакумов С. А., Гражданское общество и власть: противники или партнеры?, М., Галерея, 2005, էջ 32:

¹¹⁴ Տե՛ս Дробязко С. Г., նշվ. աշխ., էջ 386-388:

իշխանության բոլոր կառույցներում ձևավորված հատուկ մարմինների հետ՝ ՔՀ ինստիտուտների միջոցով հասարակության հետ կամուրջ ստեղծելու նպատակով: Ամբողջատիրական և մենատիրական ռեժիմի դեպքում այն մնում է պասիվ կամ ակտիվ ընդդիմություն: Այս երկրներում ՔՀ գաղափարայնացված է և ձևավորվում, գործում է ի նպաստ իշխող ռեժիմի: Այսպիսի համակարգերում քաղաքացիների ակտիվության աստիճանի թույլատրելիության սահմանը ուղղակիորեն որոշվում է նրանց կարգավիճակով՝ հիերարխիայում զբաղեցրած դիրքով՝ ոմանց թույլ տալով այն, ինչ մյուսներին արգելված է¹¹⁵: Կարճ ասած՝ ոչ դեմոկրատական ռեժիմներում պետական իշխանությունն իրականացնում է ամբողջական և լիարժեք վերահսկողություն քաղաքացիների հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Իրավական պետության մեջ ՔՀ չի ժխտում իր նպատակների իրականացման համար քաղաքական ուժերի հետ համագործակցության հնարավորությունը: ՔՀ պայքարն ու «պայքարը» ուղղված են ողջ հասարակության իրավունքների պաշտպանությանը և դրսևորվում են արհմիությունների, ՀԿ-ների, քաղաքացիական նախաձեռնությունների: Պայքարը կարող է միտված լինել բնապահպանական, գենդերային, կանանց ու երեխաների, կրթական ու երիտասարդների, առողջապահական ու սոցիալական խնդիրների՝ եթե ոչ ամբողջական, ապա գոնե մասնակի լուծմանը: ՔՀ այնտեղ է, որտեղ կահասարակական հնչեղություն ունեցող խնդիր:

ՔՀ պայքարը Վահե Ավետյանի սպանության առթիվ ամենաթողություն դեմ էր, 2008թ.-ի մարտի 1-ից հետո՝ մարդու և քաղբանտարկյալների իրավունքների պաշտպանության, Թեղուտի, Սևանի, Թռչկանի, Հրազդանի դեպքում՝ բնապահպանական խնդիրների, ուղեվարձերի բարձրացման դեպքում՝ սոցիալական վատ պայմանների դեմ, պարտադիր կենսաթոշակայինի դեպքում՝ պետական և մասնավոր հատվածի աշխատողների միջև հավասար աշխատանքային պայմանների ապահովման և երիտասարդության ցածր կենսամակարդակի դեմ, Սայաթ Նովայի 5 հասցեում՝ քաղաքի բնակիչների իրավունքների պաշտպանության, Գառնու տաճարի դեպքում՝ պատմական և ազգային

¹¹⁵ Տե՛ս Соловьев А. И., նշվ. աշխ., էջ 195:

մշակութային արժեքների պահպանության, Չանգեզուրի պղնձամուխբդենային գործարանի դեպքում՝ հանուն բնության և քաղաքացիների առողջության և այլն:

Պետությանը իշխանությամբ օժտում է ՔՅ-ն: Սակայն իր ներկայացուցիչների շահերի ու պահանջմունքների և իր ոչ քաղաքական նպատակներն իրականացնելու համար նա դիմում է պետությանը, ում ինքն է տվել իշխանություն: Պետությունը, որ քաղաքական արդիականացման կուրս ունի, ՔՅ համար կարող է դառնալ բարեգործ, գործընկեր, սակայն միաժամանակ հսկել նրա գործողությունները:

Այսպիսով, կարելի է ասել, որ պետության ներսում իշխանության քաղաքական հեղինակությունը և ՔՅ ուժը շաղկապված են և օրգանական մաս: Երկուսն էլ անհրաժեշտ են միմյանց թե՛ ձևավորման, թե՛ կայացման գործընթացում: Ուժեղ պետությանն անհրաժեշտ է ուժեղ հասարակություն, հակառակ դեպքում կառաջանա դիպեկտիկական հակասություն:

Կանտը համընդհանուր իրավական ՔՅ-ի և սոցիալական իրավական պետության ձեռքբերումը համարում էր. «մարդկության ամենամեծ հիմնախնդիրը, որի լուծումը փնտրել ստիպում է բնությունը: Միայն այս տիպի հասարակության մեջ է հնարավոր հասնել բնության բարձրագույն նպատակին՝ մարդու մեջ դրված բոլոր բարիքների զարգացմանը»¹¹⁶:

Իրավական պետության հիմնական նպատակը միջին խավի ներկայացուցիչներ «ստեղծելն է»: Նրանք են ՔՅ սոցիալական, տնտեսական և քաղաքական հիմքը: Հատկանշական է, որ Արիստոտելը, խոսելով զարգացող հասարակության մասին, նշում է, որ մեծամասնությունն պետք է կազմեն միջին ունեցվածքի տեր մարդիկ: Ծայրահեղ հարուստներին նա անվանում է սրիկաներ, ծայրահեղ աղքատներին՝ սևագործ-ստրուկներ¹¹⁷: Միայն այդ բևեռները վերացնելով է հնարավոր ստանալ ոսկե միջինը. միջին խավն է բնորոշում անհատին որպես մարդ: Ռուսոն, խոսելով միջին խավի մասին, նշում է՝ մարդը չպիտի լինի այնքան հարուստ, որ կարողանա

¹¹⁶ Տե՛ս Кант И., նշվ. աշխ., Том 6, էջ 13:

¹¹⁷ Տե՛ս Тодер И., Что такое гражданское общество // http://www.russianscientist.org/files/archive/Philos/2006_TODER_1.pdf (վերջին դիտում՝ 14.03.2016թ.):

գնել մեկ այլ մարդու, և չպետք է լինի այնքան աղքատ, որ վաճառի ինքն իրեն¹¹⁸: Արիստոտելից և Ռուսոյից դարեր անց ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնը կոնգրեսին ուղղված իր կոչումն էր. «Մենք դարձել ենք միջին խավի հզոր կայսրություն: Միջին խավի արժեքների վրա է հիմնված մեր կյանքը: Մենք պարտավոր ենք էլ ավելի մեծացնել հասարակության մեջ միջին խավի ներկայացուցիչների թիվը բոլոր հնարավոր միջոցներով»: Վերջերս ՌԴ պրեզիդենտը նշեց, որ իշխանության քաղաքականության սկզբունքը պետք է համարժեք լինի հասարակության բոլոր խավերին, խոսեց «առաձգական քաղաքականության» անհրաժեշտության և «հիմար վարչակազմի» անթույլատրելիության մասին: Փաստորեն, ՌԴ պրեզիդենտի հայտարարությունը որոշակիացրեց քաղաքական պատասխանատվության և «ունեցվածքի» նոր չափորոշիչներ տարածաշրջանների ղեկավարության և ՏԻՄ-ի ներկայացուցիչների համար: Քիչ է լինել միայն պրոֆեսիոնալ կատարող և ենթակա, կարևոր է և պետք է նաև կարողանալ աշխատել տարբեր շերտերի հետ, կարողանալ լսել ընդդիմության քննադատությունը և հաշվի նստել դրա հետ, համագործակցել՝ հասնելու և ստեղծելու բավարար պայմաններ բազմակարծության համար, հասարակական-քաղաքական քննարկումներ ձեռնարկել այն հարցերի շուրջ, որոնք հուզում են քաղաքացիներին: «Մենք չենք կարող կառուցել քաղաքական նոր իրականություն հորիզոնական հոգնած ալիքներով»¹¹⁹, -նշել է նա:

Սոցիալական իրավական պետության ձևավորման շնորհիվ կայանում է նաև իրավական քաղաքացիական հասարակությունը, որը՝ որպես սոցիալական իրավական պետության երաշխավոր, հաստատում է նրա գոյությունը: Իրավական պետությունը ոչ միայն երբեմն ընդդիմադիր կեցվածք է ընդունում ՔՅ նկատմամբ, այլ և ստեղծում է պայմաններ ՔՅ ձևավորման և գործառնության համար: Չնայած պետության կողմից հաճախակի կատարվող անհարկի սահմանափակումներին. ՔՅ-ն այն գործիքն է, որի միջոցով քաղաքացիներն ընդդիմանում են պետության անսահմանափակ իշխանության դեմ՝ իրենց իրավունքներն ու ազատությունները իրացնելու, բարոյական չափանիշներին համապատասխան ապրելու և

¹¹⁸ Տե՛ս նույն տեղը:

¹¹⁹ Տե՛ս Молокова М. А., նշվ. աշխ.:

արարելու համար¹²⁰: Այս երկու թւերի համար ընդհանուր են համարվում «պետություն», «հասարակություն» և «իրավունք» հասկացությունները: Իրավական պետությունը բնութագրվում է ոչ այնքան նպատակներով, որոնք նա դնում է իր առջև, որքան դրանք իրականացնելու միջոցներով ու մեթոդներով: Հասարակության շահերը շոշափող ոչ մի կերպ քաղաքական գործընթաց չպետք է իրականացվի առանց քաղաքացիների մասնակցության, նրանց գիտակցության ու երաշխավորության:

Ողջ քաղաքագիտական միտքը, ինչպես երբեք, միակարծիք է, որ ՔՀ և պետության ինստիտուտների միայն ներդաշնակ, արդյունավետ փոխգործակցության շնորհիվ է հնարավոր հասնել, կառուցել իսկապես իրավական, անգամ իդեալական՝ համընդհանուր բարեկեցության պետություն: Եվրոպական քաղաքակրթության զարգացումը, լիբերալիզմի սկզբունքներով կարգավորելով հասարակության քաղաքական և սոցիալական ոլորտները, հիմնականում բնորոշվում է ՔՀ և իրավական պետության ստեղծման ցանկությամբ¹²¹: Այս համագործակցությունը կարելի է անվանել սոցիալական գործընկերություն կամ հատվածների միջև սոցիալական համագործակցություն¹²²: Սա սոցիալական քաղաքականություն է, որը ոչ թե «դեկադարության հոգատարության դրսևորում է» դրա կարիքն ունեցող հասարակության հանդեպ, այլ գործողությունների համակարգ է, որն ընդունված պետության կողմից ՔՀ կամքով և պահանջով և պետք է գործի վերջինիս հետ միասին¹²³: Եթե իրավական պետությունն իրականացնում է արդյունավետ սոցիալական քաղաքականություն ուղղածիվ կապերով, ապա սոցիալապես պատասխանատու, ՔՀ բարոյական արժեքներով օժտված ներկայացուցիչները գուժահեռ

¹²⁰ Ավելի մանրամասն տե՛ս Социальная работа и гражданское общество. Коллективная монография // под ред. И. А. Григорьевой, А. А. Козлова, В. А. Самойловой. Скифия Принт, 2006:

¹²¹ Տե՛ս Политология учебник для вузов /Ирхин Ю. В., Зотов В. Д., Зотова Л. В./, М., Юристъ, 2002:

¹²² Տե՛ս Молокова М. А., նշվ. աշխ.:

¹²³ Տե՛ս Мерсиянова И. В., Якобсон Л. И., Сотрудничество государства и структур гражданского Общества в решении социальных проблем, Вопросы государственного и муниципального управления. 2011. № 2, стр. 5-24 // [http:// http://cyberleninka.ru/article/n/sotrudnichestvo-gosudarstva-i-struktur-grazhdanskogo-obschestva-v-reshenii-sotsialnyh-problem](http://cyberleninka.ru/article/n/sotrudnichestvo-gosudarstva-i-struktur-grazhdanskogo-obschestva-v-reshenii-sotsialnyh-problem) (վերջին դիտում՝ 14.03.2016թ):

իրականացնում են իրենց սոցիալական քաղաքականությունը հորիզոնական կապերի միջոցով¹²⁴:

ՔՀ հնչեցրած անհնազանդության հնարավոր ազդակները կոչ են պետության հետևողառչ համերաշխաբարությունը ներմասին: ՔՀ պետական ինստիտուտներին թույլ չի տալիս «սառչել» կամ «ուկրանալ»: Ինչպես իրավացիորեն նշում են Դ.Կոենն ու Է.Արատոն, ՔՀ գտնվում է լեզալության և լեզիտիմության միջև: ՔՀ ինստիտուտները, ընդարձակելով կենսական հարցերի և պահանջմունքների հասարակական օրակարգը, լեզիտիմացնում են հասարակության կենսագործունեության նոր ձևեր, դրդում պետությանն արձագանքելու դրանց, ընդունելու օրենքներ կամ վերանայելու դրանք, սահմանադրության մեջ փոփոխություն մտցնելու՝ ընդարձակելով լեզալության սահմանները, դրանք դարձնելով ավելի ճկուն¹²⁵:

Պետության ներսում ցանկացած գործունեություն հաջողությամբ կատարվի, հատկապես երբ այդ հարցի շրջանակները շոշափում են նրա մեծամասնության շահերը, եթե կառավարությունը արդյունավետորեն համագործակցի ՔՀ հետ: Սա հնարավորություն կտա առավել արդյունավետ և նպատակային օգտագործել առկա ռեսուրսները: Համագործակցությունը որոշակի փոխաբարություն է, ուր յուրաքանչյուր կողմ հետապնդում է իր սեփական շահերը և ընդունում, որ համագործակցությունը կարող է օգնել հասնելու դրանց իրականացմանը¹²⁶:

Պետության և ՔՀ երկխոսությունը ներառում է համագործակցության ամենատարբեր հարթակներ՝ ինչպես ազգային-պետական, այնպես էլ տարածաշրջանային: Դրանք իրականացնելու համար անընդհատ գործում են \$որմալ և ոչ \$որմալ բնույթի հատուկ կազմակերպություններ, ժամանակավոր կամ անժամկետ կառույցներ, որոնք ստեղծվում են կոնկրետ խնդրի լուծման համար, օրինակ՝ մարտի 1-ի հանձնաժողովը՝ պետության և 3-րդ հատվածի կառույցների միջև:

¹²⁴ Տե՛ս **Хоконв А. А.**, Правовое Государство и Гражданское Общество: некоторые аспекты взаимодействия, // Вестник Военного университета, 2009, N 3/19, էջ 90:

¹²⁵ Տե՛ս **Коэн Д. Л., Арато Э.**, նշվ. աշխ.:

¹²⁶ Տե՛ս **Сабельников Л. В.**, Зарубежный опыт партнерства правительства с Общественными организациями в содействии развитию внешнеторговой деятельности // Российский внешнеэкономический вестник, N 12, 2007, декабрь, էջ 10:

ՔՆ ներկայացուցիչներն ու ինստիտուտները պետության համար կարող են դառնալ ոչ միայն գործընկեր, այլև հանդես գալ որպես խորհրդատուներ անգամ պետական կարիքները որոշակից նեղ ու հարցում¹²⁷: Յետաքրքիր է նաև այս առումով ծանոթանալ Ս.Ռոգովի նկատառմանը: Նա նշում է. «Ռազմավարական այն սիքադաքսականությանը հասարակության և պետության միջև ենթադրում է հասարակական և պետական ինստիտուտների, հանրակրթական և առևտրային կառույցների նեղ, ամուր համագործակցություն՝ իրականացնելու համար երկարաժամկետ ռազմավարական զարգացման ծրագիր գլոբալ իզացիայի մարտահրավերներին լուծում և պատասխան տալու գործում»¹²⁸:

Մարդկության քաղաքակրթության զարգացման ժամանակակից փուլում վերը նշված հանգամանքները քաղաքական և ոչ քաղաքական բնագավառներում ոչ մի երկրում և ոչ մի պետության մեջ չեն ավարտվել, իսկ հակասությունները ՔՅ և պետության միջև երբեմն հանգեցնում են բախումների (հանրահավաքներ, գործադուլներ, քաղաքացիական անհնազանդություն ...):

Այսպիսով, ՔՅ և պետության փոխհարաբերությունների հարցի վերաբերյալ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները՝

1) ՔՅ կարևոր և հզոր լծակներից մեկն է «զսպման» քաղաքական գործընթացում, իսկ «հակակշռի» հարցում քաղաքական իշխանության համար ձևավորում է հակընդդեմ լուրջ հասարակական ուժ,

2) ՔՅ իր կայացման և գործունեության համար ոչ միայն պետության աջակցության կարիքն ունի օրենսդրական, իրավական կամ ֆինանսական ակտերով, այլև գործակցության հստակ մեխանիզմների առկայության դեպքում կարող է իր կառույցների միջոցով ֆինանսական աջակցություն ցույց տալ պետությանը,

3) ՔՅ պատրաստ է և կարող է համագործակցել պետական բոլոր կառույցների հետ՝ սկսած կրթությունից մինչև ռազմական ոլորտ՝ դառնալով անփոփարիսելի փորձագետներ հասարակության ներսում առկա կամ ձևավորվող տրամադրությունների, հասարակական կարծիքի վերհանման և դրանք հասցեական դարձնելու

¹²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 12:

¹²⁸ Նույն տեղում, էջ 11:

գործընթացում: Գրեթե բոլոր երկրների ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներն ակտիվ մասնակցություն ունեն և ներգրավված են պետական մարմիններին կից խորհուրդներում, հանձնաժողովներում,

4) պետությանն իշխանություն ամբօժտում է ՔՀ. այն քաղաքական իշխանության համար նաև էգիտիմության աղբյուր է,

5) Պետության և ՔՀ գործունեության հիմնական նպատակը մարդ-քաղաքացու շահերի ու պահանջմունքների բավարարումն է: Ի վերջո սա պետության գոյության տրամաբանական սկզբունքներից, հիմնական պարտավորություններից է, իսկ ՔՀ համար՝ ցանկություն ու նպատակ:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒ ՄՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

2.1. Հասարակական կազմակերպությունների սահմանումն ու կայացման իրավական

Ժամանակակից հասարակության շարժման քաղաքական կյանքում քաղաքացիների համընդհանուր շահերն ու պահանջմունքները չեն կարող իրացվել միայն պետական իշխանության ինստիտուտների կամ քաղաքական կուսակցության շարժման միջոցով: Այս գործում հսկայական դեր ունեն քաղաքացիների ամենատարբեր ինքնադեկլարվող միությունները՝ հասարակական կազմակերպությունները, միավորումները, բարեգործական միությունները, կրոնական խմբավորումները, արհեստակցական խմբերը և այլն: Դրանք հասարակական-քաղաքական գործընթացների բնականոն զարգացման անհրաժեշտ պայման են և քաղաքացիական հասարակության (այսուհետ՝ ՔՀ) զարգացման կարևոր ցուցիչ:

ՔՀ համակարգում ոչ կառավարական կազմակերպությունների տեղն ու դերը քաղաքագիտության տեսական և գործնական հիմնախնդիրներից է¹²⁹:

Այսօր արդեն ակնհայտ է, որ պետական ու հանրային կառավարման համակարգում առանց հասարակության ակտիվ մասնակցության անհնար է լուծել բազմաթիվ խնդիրներ: Լիովին պարզ է, որ անհրաժեշտություն է առաջացել որոշ լիազորություններ և գործառույթներ վերահասցեագրել ու հասարակական համակարգի կառույցներին՝ ՔՀ ինստիտուտներին: Վերջիններս առանցքային դեր են խաղում մասնակցային ժողովրդավարության, դրա հիմնարար արժեքների և օրենքի գերակայության ամրապնդման գործում, որոնք պետության և հասարակության կայուն զարգացման կարևորագույն հիմնասյուներից են: Քաղաքագիտության մեջ այս գործընթացը սահմանվում է որպես պետական ուղղաձիգ իշխանության և հասարակական հորիզոնական կապերի հակադարձ

¹²⁹ Ավելի մանրամասն տե՛ս **Paturyan Y., Gevorgyan V.**, Trust towards NGOs and volunteering in South Caucasus: civil society moving away from post-communism? // <http://www.tandfonline.com/doi/abs/10.1080/14683857.2014.904544> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), **Paturyan Y., Gevorgyan V.**, Armenian Civil Society after Twenty Years of Transition: Still Post-Communist? Yerevan 2014 // https://dspace.aau.am/xmlui/bitstream/handle/123456789/1369/Armenian_Civil_Society_after_Twenty_Years_of_Transition_Manuscript_November_2014-fin.pdf?sequence=1 (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), **Simão L.**, Non-state actors and South Caucasus security: the role of NGOs, transnational corporations and religious organisations, February 2013 // http://noref.no/var/ezflow_site/storage/original/application/ce218a7ac23b772d27855808ff9d01f1.pdf (վերջին դիտում՝ 26.06.2016թ.):

հարաբերակցություն: Յնարավոր չէ երկրում իրականացնել քաղաքական արդիականացում առանց հորիզոնական ակտիվ «ալիքների»: Այս «ալիքները» հնարավորինս ճկուն ու քիչ ռեսուրսներով իրականացնում է ՔՅ-ն իր ակտիվ ինստիտուտների՝ հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՅԿ) միջոցով: Ի դեմս ՅԿ-ների՝ աշխարհը թևակոխում է հասարակական-քաղաքական հարաբերությունների սկզբունքորեն նոր փուլ. փոխվում է երկրի քաղաքական օրակարգը, իսկ ազգային անվտանգության հիմնախնդիրը դադարում է միայն պետության հոգսը լինելուց¹³⁰:

Այսօր ողջ աշխարհում մասնագետների կողմից ընդունելի են փիլիսոփայության և իրավական մտքի նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Ալ. դե Թոքվիլի գաղափարները: Նա գտնում է, որ ամենաժողովրդավար երկիրն այն է, ուր «...մարդիկ ունակ են միացյալ ուժերով հասնելու իրենց նպատակների իրականացման բարձր մշակույթին, պատասխանատու են իրենց ընդհանուր ցանկությունների համար և հաճախակի են կիրառում կոլեկտիվ գործունեության մեթոդը»¹³¹:

Գաղափարի նյութականացմանը հասնելու համար ինչպես հետխորհրդային շատ երկրների, այնպես էլ ՅՅ-ին անհրաժեշտ է քաղաքական արդիականացում՝ քաղաքական համակարգի նորացում, քաղաքական նոր մշակույթի ձևավորում, ամրապնդում ու պրակտիկա, որն ունակ կլինի համարժեքորեն արձագանքելու այսչափ արագ փոփոխվող և զարգացող ժամանակակից հասարակության կյանքի չափորոշիչներին¹³²: Յետխորհրդային և մերձավորարևելյան քաղաքական զարգացումներով պայմանավորված՝ արդեն մեծացել են «ճկուն», «փոփոխվող», «արդիականացող», «զարգացող» ազգային պետությունների արդյունավետ գործառման հիմնախնդրի քննարկումները, որոնց նպատակն է մեծացնել պետության և քաղաքացիական հասարակության գործառույթների արդիականության կառուցակարգե-

¹³⁰ Ст' у Андреева О. С., Неправительственные организации и политические изменения в мировом сообществе, Известия Алтайского государственного университета // Политология, № 4-3, 2010, էջ 243-246:

¹³¹ Токвиль Де А., նշվ. աշխ., էջ 37:

¹³² Ст' у Молокова М. А., նշվ. աշխ.:

րը¹³³: Պետական ապարատի և հասարակության միջև այսօրիական խնդիրների լուծման համար միջևորդ են հասարակական համակարգի կառույցները, որոնցից առավել ակտիվ են հատկապես ՅԿ-ները:

ՅԿ-ների ծագումն ունի երկար պատմություն: 1863 թ.-ին ժնկում մարդու իրավունքների պաշտպանության նպատակով ստեղծվեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեն¹³⁴: 1902 թ.-ին ստեղծվեց Ֆրանսիական լիգան՝ հանուն մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության¹³⁵: 1909 թ.-ին Լոնդոնում ձևավորվեց «Ստրկության դեմ պայքարի» միությունը, որն այժմ հայտնի է «Միջազգային ինտերնացիոնալ ստրկության դեմ» անվամբ: 1942 թ.-ին Նյու Յորքում ստեղծվեց «Մարդու իրավունքների միջազգային լիգան»: Այս կազմակերպությունների հետագա կայացումը մեծապես պայմանավորված էր 2-րդ համաշխարհային պատերազմի ավարտով, ՄԱԿ-ի ստեղծմամբ և 1948 թ.-ին «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» մշակմամբ:

Եվ այսօր ժամանակակից ժողովրդավարական պետությունների հասարակական համակարգը կարելի է բաժանել 3 հիմնական հատվածների՝

- Պետական – քաղաքական իշխանության մարմինների բոլոր մակարդակները, ինչպես նաև պետական կազմակերպությունների տեսակները,

- Առևտրային կամ շահույթ հետապնդող կազմակերպությունները,

- Ոչ առևտրային կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունները:

Անցումային ժողովրդավարություններում ՔՅ կայացման մակարդակը մեծապես պայմանավորված է ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպությունների առկայությամբ: Վերջին 20-25 տարիներին նախկին ԽՄ Բոլոր հանրապետություններում, այդ

¹³³ Տե՛ս **Մարգարյան Մ.**, Ազգային պետության արդիականացման առանձնահատկությունները գլոբալ սցենարի գործընթացում (18.01.2016) [//https://mrmargaryan.wordpress.com/2016/01/18/](https://mrmargaryan.wordpress.com/2016/01/18/) (վերջին դիտում՝ 26.06.2016թ.):

¹³⁴ Տե՛ս Կարմիր խաչի միջազգային կազմակերպության պաշտոնական կայք՝ <https://www.icrc.org/en> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.):

¹³⁵ Տե՛ս **Погорельский А. В.**, История развития международного правозащитного движения, Воронежский государственный архитектурно-строительный университет // <http://www.hist.vsu.ru/cdh/Articles/part9/09-06.htm> (վերջին դիտում՝ 14.03.2016թ.):

թվում՝ ՀՀ-ում, նկատվում է ՀԿ-ների կայուն աճ, որոնք այս երկրների հասարակությունների փոխակերպման գործընթացում ունեն որոշակի դերակատարում: Այսօր մոտ 3 մլն բնակչություն ունեցող ՀՀ-ում գրանցված են շուրջ 3789 հասարակական կազմակերպություններ, 765 հիմնադրամներ, իրավաբանական անձանց 301 միություններ¹³⁶: Հաշվի առնելով մարդ-ՀԿ հարաբերակցությունը՝ ՀՀ-ում ՔՀ ինստիտուցիոնալացումը կարելի է համարել կայացած¹³⁷: Սակայն սաչի արտացոլում իրականությունը:

Ձ. Գրումը նշում է, որ ՀԿ-ների քանակական աճը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է երկրում ՔՀ կայացած համարելու համար: Գործընթացում կարևորը ոչ թե տվյալ պետության մեջ դրանց քանական ցուցանիշն է, այլ երկրի քաղաքական կառուցվածքում և հասարակական ոլորտում իրականացված ու արձանագրված որակական փոփոխությունները¹³⁸:

Ա. Իշխանյանը իրավացիորեն գտնում է, որ «1990-ական թթ.-ին ողջ ընթացքում դոնորական ֆինանսական միջոցների ներհոսքը և ՔՀ նկատմամբ ուշադրությունը Հայաստանում հանգեցրել են ՀԿ-ների քանակի աննախադեպ և սրընթաց աճի: Դոնոր կազմակերպությունները վերջերս փորձել են ընդլայնել ՔՀ սահմանում՝ ներառելու համարավելի շատ դերակատարների, քան միայն ՀԿ-ները: Գործնականում ՔՀ հաճախ հավասարեցվել է հանրային շահերի պաշտպանությամբ կամ ծառայությունների մատուցմամբ զբաղվող մասնագիտացված ՀԿ-ների, որոնք հետամուտ են նորմատիվ ազատական օրակարգի իրագործմանը: ՔՀ նման նեղացումը ստացել է ՔՀ «ՀԿ-ացում» պիտակը»¹³⁹:

Մասնագիտական գրականության մեջ և համաշխարհային պրակտիկայում տարբերակվում են ոչ առևտրային հասարակական կազմակերպություն՝ (ՀԿ), և Ոչ - կառավարական

¹³⁶ Տե՛ս «ՔՀ կայունության ցուցանիշ-Հայաստան, 2011»: USAID, CDPF, 15րդ խմբագրություն, հոկտեմբեր, 2012, էջ 2:

¹³⁷ Տե՛ս ՀՀ կառավարության պաշտոնական կայք՝ <http://www.gov.am> (վերջին դիտում՝ 20.05.2016թ.):

¹³⁸ Տե՛ս Գրյու Ժ., *Растущее многообразие международных акторов / Международные отношения: социологические подходы* // Под ред. проф. П. А. Цыганкова. - М.: Гардарики, 1998, стр. 222-239:

¹³⁹ Տե՛ս Ishkanian A., *Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia*. Routledge, 2008, էջ 8:

կազմակերպությունն՝ (ՈԿԿ), եզրույթները¹⁴⁰: Հաճախ ՔՀ բուկոր կառույցները նմանեցվում են նկատվում են որպես ՀԿ, ինչը կարելի է բացատրել ոչ կառավարական կազմակերպությունների կազմում վերջիններիս ավելի մեծ թվով, ավելի ակնառու գործունեությամբ և հասարակության մեջ ավելի լայն ճանաչվածությամբ¹⁴¹:

Փորձենք սահմանել «ՀԿ» հասկացությունը. այն շահույթ չհետապնդող, իրավագիտորեն կամ ոչ ֆորմալ հիմքով գոյություն ունեցող, մեկ կամ մի քանի անհատների (ֆիզիկական կամ իրավաբանական) կամ խմբի կողմից՝ որոշակի նպատակի կամ նպատակների իրականացման համար ստեղծված միավորում է: Տվյալ սահմանման մեջ այս կատեգորիան իրավական տերմինի կարգավիճակ չունի: Նման մոտեցումը կարող է ներառել կազմակերպությունների լայն շրջանակ, ինչպիսիք են, օրինակ, ֆոնդերը, միավորումները, բարեգործական կազմակերպությունները, հասարակական համակարգի ինստիտուտները, քաղաքացիական շարժումները, միությունները և այլն:

ՀՀ ՀԿ օրենքում «հասարակական կազմակերպություն» հասկացությունը սահմանվում է որպես «...շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություն՝ հասարակական

¹⁴⁰ Այդ մասին տե՛ս «The South Caucasus Network of Human Rights Defenders» // <http://www.caucasusnetwork.org> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), «The South Caucasus Network of Human Rights Defenders unites 30 human rights NGOs in Armenia, Azerbaijan and Georgia» // http://humanrightshouse.org/Projects/South_Caucasus_Network/index.html (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), **Sabanadze N.**, International involvement in the South Caucasus, ECMI Working Paper # 15, February 2002 // http://edoc.vifapol.de/opus/volltexte/2009/1895/pdf/working_paper_15.pdf (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), **Cornell S. E., Starr S. F., Tsereteli M.**, A Western Strategy for the South Caucasus (Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, 2015) // <https://www.silkroadstudies.org/resources/pdf/publications/1502Strategy.pdf> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), **Русецкий А.**, Правозащитное движение на Южном Кавказе // https://www.civisbook.ru/files/File/Rusezkiy_Kavkaz.pdf (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), **Гайнанов Р. Р.**, Реализация программы ЕС «восточное партнёрство» в странах Южного Кавказа. Специальность 23.00.04 – Политические проблемы международных отношений, глобального и регионального развития Диссертации на соискание учёной степени кандидата политических наук. Москва, 2014 // http://www.dipacademy.ru/upload/iblock/abb/Gaunanov_dissert.pdf (վերջին դիտում՝ 26.06.2016թ.) և ուրիշներ:

¹⁴¹ Ավելի մանրամասն տե՛ս «Հայաստան: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբի համատեղ ներկայացրած զեկույցը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին»: Համընդհանուր պարբերական դիտարկման 21-րդ նիստ, Հունիս, Մաս I: Երևան, 2014, 31 էջ, «Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները և ռիսկերը»: Երևան: Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2011, 37 էջ:

միավորման տեսակ, որտեղ իրենց շահերի ընդհանրության հիմքի վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու համար»¹⁴²:

Ոչ կառավարական կազմակերպությունը ստեղծվում է մասնավոր անձանց կամ այլ հասարակական կազմակերպությունների կողմից առանց պաշտոնական (կառավարական) ինստիտուտների մասնակցության և իրականացնում է իր գործունեությունը օրենքի հիման վրա սեփական միջոցներով: Ոչ կառավարական կազմակերպությունների կամ ՀԿ-ների ֆինանսական միջոցներն առաջանում են անդամավճարներից, ներդրումներից, նվիրատվություններից և այլ միջոցներից (մասնավոր և անհատական նվիրատվություններ, մասնավոր կամ պետական դրամաշնորհներ, վճարումներ որոշակի ծառայությունների շրջանակներում և այլն): Ոչ առևտրային կազմակերպություններն իրավունք չունեն զբաղվելու ձեռնարկատիրությամբ, բացի օրենքով սահմանված դեպքերից:

Համաշխարհային բանկը հիմք է ընդունել առաջատար գիտահետազոտական կենտրոնների մշակած սահմանումը: Ըստ դրա՝ «ԶԿ եզրույթը վերաբերում է ոչ պետական, շահույթ չհետապնդող կազմակերպություններին, որոնք մասնակցում են հանրային կյանքին, արտահայտում են իրենց անդամների և մյուսների պահանջները, շահերը՝ ընդգրկելով կազմակերպությունների լայն շրջանակ, ներառյալ ոչ կառավարական կազմակերպություններ, համայնքային խմբեր, արհմիություններ, բարեգործական և կրոնական կազմակերպություններ, մասնագիտական միությունները և հիմնադրամներ»¹⁴³:

Կ. Կոլյարը «ՀԿ» եզրույթի տակ հասկանում է մասնավոր բնույթի կազմակերպություն, որը միավորում է մասնավոր

¹⁴² Տե՛ս ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին» (ընդունվել է 04.12.2001թ.), հոդված 3 // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1295>:

¹⁴³ Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ <http://web.worldbank.org> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.):

մարդկանց, մասնավոր պահանջներ և շահեր, երբեմն նաև՝ պետական գործիչների, սակայն ոչ երբեք պետությանը¹⁴⁴:

Կարևորելով համաշխարհային փորձն ու ՅԿ-ների գործունեության ակնհայտ առավելությունները երկրի սոցիալական խնդիրների լուծման հարցում՝ անհրաժեշտ է պետության իրավական փաստաթղթերն ու օրենքները դարձնել նպաստավոր, ստեղծել ապահով օրենսդրական դաշտ, ուր առանց ավելորդ բյուրոկրատական քաջքշուկների քաղաքացիները կկարողանան ազատ հիմնել և կամավոր անդամակցել տարբեր ՅԿ-ների, որոնք իրենց գործունեությամբ կնպաստեն թե՛ տվյալ կազմակերպության և թե՛ ողջ հասարակության զարգացմանը¹⁴⁵:

ՔՅ զարթոնքը և ՅԿ-ների ակտիվ գործունեությունը ՀՀ-ում ադերսվում է 1988 թ.-ի Արցախյան շարժման հետ: Այս ընթացքում ի հայտ էին եկել մի շարք խնդիրներ, որոնց լուծումները ենթադրում էին համապատասխան փոփոխություններ օրենսդրական և իրավական-նորմատիվ մակարդակում:

2001թ. դեկտեմբերի 4-ին ընդունվեց ՅԿ-ների մասին օրենք¹⁴⁶, որը անկախության շուրջ 25 տարիների ընթացքում ենթարկվել է մի շարք լրացումների և փոփոխությունների:

ՀՀ-ում ՔՅ կառույցների գործունեության կարգավորման օրենսդրական դաշտը ձևավորվել է մարդու և քաղաքացու՝ միավորումներ կազմելու իրավունքի իրականացման ձևերի ու դրանց գործունեության արդյունավետության զարգացմանը համաքայլ: Միավորումներ և միություններ կազմելու իրավունքը իրացնելու համար հասարակության անդամները ամեն անգամ ընտրում են բազմազան և բարդ ձևաչափեր: Կառույցների կայացմանը զուգահեռ՝ տարբերվում են դրանց հետագա զարգացման կարիքները, ուստի և դրանց օրենսդրական կարգավորման խնդիրները՝ հիմքում

¹⁴⁴ Տե՛ս **Кольяр К.**, Международные организации и учреждения. М., Прогресс, 1972, էջ 472:

¹⁴⁵ Տե՛ս **Dijkzeul D., Beigbeder Y.** (eds.), Rethinking International Organizations: Pathology and Promise. Berghahn Books, 2003, **Оганесян Г.**, Роль и значение менталитета в социально-политических процессах, // История и идентичность: Южный Кавказ и другие регионы, находящиеся в переходном периоде. Статьи ученых-историков и экспертов из Азербайджана, Армении и Грузии (Ереван, Армения) / под ред. Р. Раджабова, С. Григоряна, В. Колбан. Ереван: Едит Принт, 2010, стр.180-199:

¹⁴⁶ Տե՛ս ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին» (ընդունվել է 04.12.2001թ.) // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1295>:

ու ն են ն ալ ո վ ՅՅ- ու մ դ ր ան ց ձ և ա վ ո Ր մ ան, գ ո Ր ծ առ ն ու թ յ ան և գ ո Ր ծ ու ն ե ու թ յ ան առ ան ձ և ա հ ա տ կ ու թ յ ու ն ն ե Ր ը :

Ի ն չ ա ք ս ց ան կ ա ց ա ծ ո լ ո Ր տ, ա յ ն ա ք ս Է լ ՅՅ ՅԿ ո լ ո Ր տ ղ կ ան ո ն ա կ ա Ր գ վ ու մ և հ ամ ա կ ա Ր գ վ ու մ Է ն ա Խ և առ ա ջ ՅՅ Ս ա հ մ ան ա դ Ր ու թ յ ամ Բ (1995), ա ս Կ ՅՅ Ք ա ղ ա ք ա ց ի ա կ ան օ Ր ե ն ս գ Ր ք ո վ (1998), Յ ա ս ա Ր ա կ ա կ ան կ ա գ մ ա կ ե Ր ա լ թ յ ու ն ն ե Ր ի մ ա ս ի ն (2001), Ի Ր ա վ ա ք ան ա կ ան ան ձ ան ց ա ք տ ա կ ան գ Ր ան ց մ ան մ ա ս ի ն (2001), Յ ի մ ն ա դ Ր ամ ն ե Ր ի մ ա ս ի ն (2002), Բ ա Ր ե գ ո Ր ծ ու թ յ ան մ ա ս ի ն (2002), Տ ե դ ե կ ա տ վ ու թ յ ան մ ա ս ի ն (2003), Կ ու ս ա կ ց ու թ յ ու ն ն ե Ր ի մ ա ս ի ն (2002) օ Ր ե ն ք ն ե Ր ո վ, ի ն չ ա ք ս ն ա ն ի Ր ա վ ա կ ան - ն ո Ր մ ա տ ի վ ա յ լ ա կ տ ե Ր ո վ, մ ի ջ ա գ գ ա յ ի ն և մ ի ջ կ առ ա վ ա Ր ա կ ան հ ամ ա ձ ա յ ն ա գ Ր ե Ր ո վ, ո Ր ո ն ց տ ա Ր Բ ե Ր տ ա Ր ի ն ե Ր ի ան դ ամ ա կ ց ե լ Է ՅՅ:

Ե Ր կ Ր ի Մ ա յ Ր օ Ր ե ն ք ու մ ա ս վ ու մ Է. «Յ ու Ե Ր ա ք ան չ յ ու Ր ո ք ու ն ի ա յ լ ան ձ ա ց հ ե տ մ ի ա վ ո Ր ու մ ն ե Ր կ ա գ մ ե լ ու, ա յ դ թ վ ու մ` ա Ր հ ե ս տ ա կ ց ա կ ան մ ի ու թ յ ու ն ն ե Ր ս տ ե դ ծ ե լ ու և դ ր ան ց ան դ ամ ա գ Ր վ ե լ ու ի Ր ա վ ու ն ք»¹⁴⁷, և «...մ ա Ր դ ու և ք ա ղ ա ք ա ց ու հ ի մ ն ա կ ան ի Ր ա վ ու ն ք ն ե Ր ն ու ա գ ա տ ու թ յ ու ն ն ե Ր ը կ ա Ր ո ղ Ե ն ս ա հ մ ան ա Խ ա կ վ ե լ մ ի ա յ ն օ Ր ե ն ք ո վ, Ե թ Ե դ ա ան հ Ր ա ժ Ե շ տ Է ա ք տ ա կ ան և հ ա ս ա Ր ա կ ա կ ան ան վ տ ան գ ու թ յ ան, հ ա ս ա Ր ա կ ա կ ան կ ա Ր գ ի, ա յ լ ո ց ի Ր ա վ ու ն ք ն ե Ր ի և ա գ ա տ ու թ յ ու ն ն ե Ր ի ... պ ա ջ տ պ ան ու թ յ ան հ ամ ա Ր»¹⁴⁸:

ՅՅ ՅԿ մ ա ս ի ն օ Ր ե ն ք ո վ կ ա Ր գ ա վ ո Ր վ ու մ Է ա յ լ ան ձ ան ց հ ե տ մ ի ա վ ո Ր ու մ ն ե Ր կ ա գ մ ե լ ու և դ ր ան ց ան դ ամ ա գ Ր վ ե լ ու մ ա Ր դ ու ս ա հ մ ան ա դ Ր ո Ր Ե ն ամ Ր ա գ Ր վ ա ծ ի Ր ա վ ու ն ք ը. «Յ ա յ ա ս տ ան ի Յ ան Ր ա ա ք տ ու թ յ ու ն ը, կ ա Ր և ո Ր ե լ ո վ ք ա ղ ա ք ա ց ի ա կ ան հ ա ս ա Ր ա կ ու թ յ ան գ ա Ր գ ա ց ու մ ը, ս ու յ ն օ Ր ե ն ք ո վ ն ա Կ ա տ ա կ ու ն ի ն ա Կ ա ս տ ե լ ու հ ա ս ա Ր ա կ ա կ ան կ ա գ մ ա կ ե Ր ա լ թ յ ու ն ն ե Ր ի` ո Ր ա ք ս ի Ր ա վ ա ք ան ո Ր Ե ն կ ան ո ն ա կ ա Ր գ վ ա ծ գ ո Ր ծ ու ն ե ու թ յ ու ն ձ ա վ ա լ ո ղ մ ի ա վ ո Ր ու մ ն ե Ր ի ս տ ե դ ծ մ ան ն ու գ ո Ր ծ ու ն ե ու թ յ ան ը»¹⁴⁹:

ՅՅ ՅԿ օ Ր ե ն ք ո վ կ ա Ր գ ա վ ո Ր վ ու մ Ե ն կ ա գ մ ա կ ե Ր ա լ թ յ ան ս տ ե դ ծ մ ան, գ Ր ան ց մ ան, գ ո Ր ծ ու ն ե ու թ յ ան, հ ի մ ն ա դ Ր ի

¹⁴⁷ Տ Ե՛ս ՅՅ Ս ա հ մ ան ա դ Ր ու թ յ ու ն (հ ո ղ վ ա ծ 25) // <http://www.parliament.am/parliament.php?id=constitution> (վ ե Ր ջ ի ն դ ի տ ու մ` 14.04.2016թ.):

¹⁴⁸ Տ Ե՛ս ՅՅ Ս ա հ մ ան ա դ Ր ու թ յ ու ն (հ ո ղ վ ա ծ 44) // <http://www.parliament.am/parliament.php?id=constitution> (վ ե Ր ջ ի ն դ ի տ ու մ` 14.04.2016թ.):

¹⁴⁹ Տ Ե՛ս ՅՅ օ Ր ե ն ք ը «Յ ա ս ա Ր ա կ ա կ ան կ ա գ մ ա կ ե Ր ա լ թ յ ու ն ն ե Ր ի մ ա ս ի ն» (ը ն դ ու ն վ ե լ Է 04.12.2001թ.) // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1295> (վ ե Ր ջ ի ն դ ի տ ու մ` 14.04.2016թ.):

(հիմնադիրներին), կանոնադրական և գործունեության սկզբունքների և պահաջների, լուծարման և վերականգնման հարցերը¹⁵⁰:

ՀՀ պետական բյուջեից ՀՀ-ները ֆինանսական օժանդակություն կարող են ստանալ «Նվիրատվություններ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպություններին», «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին», «Այլ ծախսեր» և «Հիմնական բաժիններ չդասվող պահուստային ֆոնդեր» հոդվածներով¹⁵¹:

2011թ. ապրիլի 14-ի հրամանագրով ՀՀ ՀԿ օրենքում փոփոխություններ անելու նախագծում որոշ ընթացակարգեր, ընդհակառակը, բյուրոկրատական քաջքուկի պատճառ կարող են դառնալ: Նշենք դրանցից մի քանիսը.

- ՀՀ ՀԿ մասին օրենքում այլ իրավակազմակերպական կառույցների հետ շփոթը բացառելու նպատակով արգելվում է ՀԿ-ների անվան մեջ «ֆոնդ», «հիմնադրամ», «կոոպերատիվ», «ընկերություն», «մասնաճյուղ», «ներկայացուցչություն», ինչպես նաև «միություն» և «ընկերակցություն» բառերի օգտագործումը¹⁵²:

ՀՀ ՀԿ օրենքում նշվում է, որ հասարակական կազմակերպություն են համարվում «ոչ կառավարական ոչ առևտրային» կառույցները¹⁵³:

- Ոչ կառավարական կազմակերպություն- հայերեն հապավում՝ ՈԿԿ, ռուսերեն՝ неправительственные организации- НПО, անգլերեն՝ nongovernmental organizations- NGO

և

¹⁵⁰ Մանրամասն տես նույն տեղում՝ հոդված 3-ի 1-ին և 2-րդ կետեր, հոդված 4-ի 1-ին և 3-րդ կետեր, հոդված 5-ի 3-րդ և 4-րդ կետեր, հոդված 6, հոդված 7, հոդված 15, հոդված 16:

¹⁵¹ Տե՛ս «ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգ /նախագիծ/» // ՀՀ Հանրային կոորդինացիոն կենտրոնի կողմից հասարակության կայացման հարցերի հանձնաժողով, Եր., 2012, էջ 34:

¹⁵² Տե՛ս նույն տեղում, էջ 16:

¹⁵³ Տե՛ս ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին» (ընդունվել է 04.12.2001թ.) // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1295> (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

- Ոչ առևտրային կազմակերպություն – հայերեն հասարակում՝ ՅԿ, ռուսերեն՝ некоммерческие организации-НКО, անգլերեն՝ Non-profit organization-NPO:

Ոչ կառավարական կազմակերպությունն ընդգրկում է այն կառույցների շարքը, որոնց ֆինանսական միջոցները գոյանում են ոչ միայն անդամավճարներից և այլ աղբյուրներից, որ նշված են ՅԿ ՅԿ օրենքի համապատասխան հոդվածում, այլև մասամբ նաև կառավարության կողմից: Սա կարող է սահմանափակել կառույցի գործունեության տիրույթը:

Ի տարբերություն ոչ-կառավարական կազմակերպության՝ շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպությունը, որ համարժեք է «հասարակական կազմակերպություն» հասկացությանը, լիովին համընկնում է արվեստի, արհեստի, բարեգործության, մշակույթի, սպորտի ոլորտներում ձևավորվող միավորումների կամ կազմակերպությունների գործունեության տրամաբանությանը:

Արևմտյան երկրներում, ԱՄՆ-ում և մի շարք միջազգային կազմակերպություններում վերը նշված բոլոր եզրույթներից առավել կիրառելի է NGO՝ «*ոչ կառավարական կազմակերպություն*» եզրը, որն առավել, քան մյուս հասկացությունները բնորոշում է քաղաքացիական մասնակցության և շահերի պաշտպանության գործիք հանդիսացող կազմակերպությունները՝ հասարակական համակարգի մյուս կառույցներից տարբերակելու համար¹⁵⁴:

Ակնհայտ է, որ ՅԿ ՅԿ օրենքում հստակ չեն տարբերակում «ոչ կառավարական ոչ առևտրային» և «հասարակական կազմակերպություն» հասկացությունները՝ միաժամանակ չմատնանշելով նաև, թե հատկապես որն է առավել գերադասելի, և որն է առավել ազույնս արտահայտում այս կառույցի գործունեության շրջանակներն ու առանձնահատկությունները:

Վերջին շրջանում մի շարք երկրների օրենսդրությունների մեջ հայտնվել են նոր իրավական ձևակերպումներ, որոնք ներառում են թե՛ երկրորդ, թե՛ երրորդ հատվածների կազմակերպություններին բնորոշ ընդհանուր գծեր. ԱՄՆ-ում, օրինակ, սահմանափակ պատասխանատվությամբ սակավաշահույթ

¹⁵⁴ Տե՛ս «Յայաստանի ՅԿ սեկտորի գնահատում. Համեմատական հետազոտություն», Եր., 2004 թ, էջ 8-9:

մի ու թյ ու ն ն եր և հասարակական բարիքի ստեղծման կոորպորացիաներ, Գերմանիայ ու մ` սահմանափակ պատասխանատվ ու թյ ամբ բարեգործական կազմակերպություններ և հասարակ ու թյ ան բարեկեց ու թյ ան կոորպորացիաներ, Մեծ Բրիտանիայ ու մ` հասարակական շահերի համակարգման կազմակերպություններ և այլ ն¹⁵⁵:

Այս ձևաչափերը հնարավորություն են ընձեռում ձևավորել ու կազմակերպություններ, որոնք գործունեություն են ծավալում սոցիալական, բնապահպանական, առողջապահական, կրթական և այլ ոլորտներում` սահմանափակ գործունեությամբ, իսկ շահույթի ստացումը համարվում է երկրորդական*:

2-րդ և 3-րդ հատվածների կառույցներից այս մի ու թյ ու ն ն երը տարբերվում են 2 հիմնական առանձնահատկություններով` բաժնետերերի բաժնետոմսերը չեն կարող հատել շահույթի 35 %-ից բարձր շեմը և պարտադիր է, թեկուզ ձևականորեն, ցույց տալ, որ դրանք գործում են ոչ միայն տեղի հասարակ ու թյ ան, այլ և լայն առումով հասարակ ու թյ ու ն ն երի շահերին ու նպատակներին համապատասխան:

Ավելացնենք, որ 34-ի անվանման ձևակերպման մեջ առաջարկվող սահմանափակումները չեն փոխում դրանց գործունեության ուղղությունն ու ոլորտը, պարզապես ստեղծում են անհարկի և լրացուցիչ բարդություններ` պայմանավորված անվանափոխությամբ և վերագրանցմամբ:

Ըստ 33 34 մասին օրենքի` «Կազմակերպությունն ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից»¹⁵⁶: 34-ի պետական գրանցման կենտրոնացված համակարգը որոշակի դժվարություններ է ստեղծում հեռավոր բնակավայրերում ձևավորվող կազմակերպությունների գրանցման, անվանափոխության, հասցեի, դեկլար կազմի փոփոխության

¹⁵⁵ Տե՛ս «Տարեկան հաշվետվություն 2013, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» // <http://transparency.am/files/pages/1416254427-0-776409.pdf> (վերջին դիտում` 14.04.2016թ.):

*2004 թ.-ին Մեծ Բրիտանիայում համապատասխան օրենսդրական դաշտի բարելավումը նմանատիպ կազմակերպությունների և հասարակական շահերը համակարգող այլ մի ու թյ ու ն ն երի համար ստեղծեց նպաստավոր պայմաններ, և ընդամենը 1 տարում դրանց թիվն ավելացավ 6000-ով:

¹⁵⁶ Տե՛ս 33 օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին» (ընդունվել է 04.12.2001թ.), հոդված 8, 2-րդ կետ // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1295> (վերջին դիտում` 14.04.2016թ.):

վերաբերյալ իրազեկման, կանոնադրական փոփոխությունների գրանցման առումով¹⁵⁷: Հարցն ավելի է ընդգծվում, երբ վերը նշված խնդիրներից որևէ մեկը ծագելու դեպքում ՀԿ ներկայացուցիչ (ներ)ը պարտավոր է ներկայանալ պետական գրանցման մարմին, օրինակ, ճամբարակից կամ Չինարիից: ՀՀ ՀԿ օրենքում նշվում են ՀԿ լուծարման հիմքերը, որոնցից մեկն էլ ՀԿ սնանկ ճանաչելն է (ՀՀ ՀԿ մասին օրենք, հոդված 20, կետ 5): Այստեղ մասնավորապես ամրագրված է. «Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահաջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե»:

Հատկանշական է, որ անկախ կազմակերպության առևտրային կամ ոչ առևտրային լինելուց՝ այն պետք է կրի նույն պարտավորությունները, նրա նկատմամբ կիրառելի են վարչական, քաղաքացիական, քրեական նույն սանկցիաները, որոնք կիրառվում են բոլոր իրավաբանական անձանց նկատմամբ¹⁵⁸:

Սա գործող օրենքի առավել լուրջ թերություններից է: Ընդ որում, չի հստակեցվում նաև, թե ինչ ընթացակարգով է կատարվելու գույքի փոխանցումը պետական բյուջե, ինչպես է պետությունն այն ընդունելու և տնօրինելու¹⁵⁹:

Կարծում ենք, որ փոխանցվող գույքը որևէ թիրախ խմբի (սոցիալապես անապահով ընտանիքներ, մանկատան երեխաներ, ծերանոցներ) մեկ այլ հասարակական կազմակերպության (սահմանամերձ գյուղերում կամ քաղաքներում) կամ բարեգործական ծրագրեր իրականացնող իրավական այս ձևաչափն ունեցող միավորմանը փոխանցելը առավել ընդունելի տարբերակ է:

¹⁵⁷ Տե՛ս «ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գարգացման ռազմավարության հայեցակարգ /նախագիծ/», էջ 17:

¹⁵⁸ Եվրոպայի Խորհուրդ, Նախարարների կոմիտե, թիվ 2006 (2) հանձնարարական, ԵԽ հանձնարարական, Հիմնական սկզբունքներ, 1-ին մաս» (ընդունվել է Նախարարների կոլոմից 2006 թ.-ի հունվարի 11-ին Նախարարների տեղակալների 952-րդ նիստի ընթացքում):

¹⁵⁹ Տե՛ս «ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գարգացման ռազմավարության հայեցակարգ /նախագիծ/»:

Մյուս խնդիրը, որն ուսումնասիրման և լրացումների կարիք ունի, ՀՀ ՀԿ-ում օրենքում մշտական հաստիքային «աշխատակիցների» և կամավորների մասին է:

Ուորտի ուսումնասիրությունները վկայում են, որ մեր երկրում գործող ՀԿ-ի մի փոքր մասն (19,1%) ունի մարդկային ներուժի հաստատուն բազա՝ ի դեմս վճարվող աշխատակիցների¹⁶⁰ (տեղեկատվությունը չափվում է կամավորների և վճարվող աշխատակիցների հարաբերակցության հիմքով): ՀԿ-ների մեծ մասը բացառապես և գերազանցապես հենվում է կամավորական ռեսուրսների վրա:

Ըստ ՀՀ ՀԿ մասին օրենքի՝ «անձը, որ կազմակերպության հիմնադիր չէ, կազմակերպության անդամ կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա»¹⁶¹ կամավորության սկզբունքով: Կամավորության ինստիտուտն ու աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենսդրական-իրավական նորմերի բացակայությունը, մասնավորապես սոցիալական ապահովության մասին պարտադիր վճարների մասին դրույթը, սահմանափակում են կամավորների ընդգրկումը ՀԿ-ներ՝ երևույթը որակելով «ունտեսապես ոչ խրախուսելի»¹⁶²:

Ցանկացած ՀԿ կորիզում մեծ թիվ են կազմում երիտասարդ մասնագետները՝ չունենալով կամ չգտնելով պետական աշխատանք: Այս մարդիկ դեյուրե համարվում են գործազուրկ, քանի որ չունեն աշխատանքային պայմանագիր, աշխատանքային գրքույկ, և չեն գործում աշխատանքային օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ նորմերը: Սակայն նրանք դե ֆակտո աշխատում են: 2-րդ թերությունն այս պարագայում աշխատանքային ստաժի բացակայությունն է՝ հետագայում այլ աշխատանքի, ավելի ուշ՝ նաև կենսաթոշակի անցնելու առումով:

¹⁶⁰Տե՛ս «CIVICUS, Քաղաքացիական հասարակության ինդեքս: Հայաստանի քաղաքացիական հասարակությունը, անցումային փուլից դեպի համախմբում: Վերլուծական զեկույց»: Եր., 2010, էջ 43:

¹⁶¹Տե՛ս ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին» (ընդունվել է 04.12.2001թ.), հոդված 6, կետ 2 // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1295> (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

¹⁶²Տե՛ս «ՀՀ-ում քաղաքացիական հասարակության և կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգ /նախագիծ/», էջ 43:

Որպես խնդրի լուծում ԶԶ ԶԿ օրենքում կարելի է ներառել կետ, որով կամրագրվի կամավորներին հավաստագիր, վկայական, աշխատանքային գրքույկ կամ անձնագիր տրամադրելու հարցը, ուր նշված կլինեն ծառայության ներքին մատուցման ժամկետը, ծրագրերի ուղղվածությունը և լրացուցիչ այլ տեղեկություններ: Գործընթացին կարևորություն տալու համար գործատուներին առաջարկում ենք թափուր աշխատատեղերի հայտարարագրերի կամ պահանջվող փաստաթղթերի մեջ որպես կարևոր կետ ընդունել նաև կամավորական աշխատանքի վերաբերյալ տեղեկություն, ինչի առկայությունը մրցութային հիմունքներով աշխատանքի ընդունվելիս կտա լուրջ առավելություններ: Սա մի կողմից կնպաստի կամավորության ինստիտուտի կայացմանը, մյուս կողմից թեկուզ ժամանակավորապես կլուծի նաև զբաղվածության խնդիր:

Կամավորության ինստիտուտի խթանումը նաև Արևելյան գործընկերության գլխավոր նպատակներից մեկն է: 2006 թ.-ի Նոյեմբերի 15-ից Եվրոպական խորհրդարանը և Եվրախորհուրդը ընդունեցին թիվ 1719/2006 որոշումը, որը նոր խթան ու սկիզբ հանդիսացավ «Երիտասարդները գործում են» (Youth in action) ծրագրի իրականացման համար (2007-2013 թթ.-ին):

ԶԿ մասին օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ կետում նշվում է, որ արդարադատության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի պատճառաբանված պահանջով ԶԿ պարտավոր է ողջամիտ ժամկետներում նրան տրամադրել ԶԿ որոշումների պատճենները կամ այլ փաստաթղթեր: «Ողջամիտ ժամկետ» հասկացությունը հարաբերական է: Կարծում ենք՝ հստակ ժամկետի (ներքին) ամրագրումն ավելի տեղին ու իրավական առումով ավելի ընդունելի կլինի:

ԶԶ ԶԿ մասին օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքում կապահովվեն՝

- ԶԿ գործունեության իրավական առավել ամուր հիմքեր,
- Երկխոսության մշակույթի զարգացում իշխանության և ԶԿ-ների միջև (երկխոսությանը մասնակից կողմերի ներկայացուցիչները հնարավորություն կստանան, ամենատարբեր ռեսուրսներ կենտրոնացնելով, լուծելու հասարակության ներսում զարգացման միտում ունեցող, լատենտ, բայց ոչ անսպասելի

հիմնախնդիրները, ինչը ոչ պատշաճ արձագանքի դեպքում կարող է պետության համար սոցիալական ճգնաժամ առաջացնել):

Կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում կան օրենքներ և օրենսդրական ակտեր, որոնք որոշ փոփոխություններից և լրացումներից հետո ՀԿ-ներին հնարավորություն կընձեռեն գործելու առավել ամուր իրավական հիմքերի վրա: Սահմանադրությամբ ստանալով իրենց շահերի, նպատակների համար ազատ միավորումներ ստեղծելու իրավունք՝ ՀՀ քաղաքացիները կարող են ուղղակի հորիզոնական կապերով իրականացնել իրենց քաղաքացիական և սահմանադրական իրավունքը: Սրան զուգահեռ՝ ՔՀ կայացման այսպիսի կարևորագույն ինստիտուտի ձևավորումը, ինչպիսին ՀԿ-ներն են, մեզ մոտ փոքր-ինչ դժվար է ընթանում: Դա ունի իր պատմական, սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական և քաղաքական պատճառները, որոնց մի մասը շատ առանձնահատուկ է, մյուսներին բնորոշ են անցումային երկրների զարգացման առանձնահատկությունները¹⁶³:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ այսօր ՀՀ-ում գործում է ոլորտն համակարգող օրենսդրական դաշտ: Սակայն իշխանության կողմից իրականացվող բարեփոխումները կամ օրենքի լրամշակումները հաճախ առաջացնում են ավելորդ բյուրոկրատական քաշքշուկներ, բարդություններ՝ գրանցման, գործունեության, ֆինանսական առումով: Այս միտումը մեզանում բնականաբար չի խթանում ՔՀ կառույցների և ինստիտուտների բնականոն զարգացումը: Իրենց հերթին, ՔՀ ինստիտուտները կառուցվածքային և գործառնական առումով ձևավորված են և կայանալու համար կարիք ունեն ճկուն օրենսդրության: Ունենալով նյութական ու կադրային ոչ քիչ ռեսուրսներ՝ նրանք «ներքևից» եկող լուրջ հայտ են ներկայացնում հասարակական-քաղաքական կյանքում ակտիվ սուբյեկտ դառնալու համար: Սրան հասնելու համար ՀԿ հատվածին մասամբ խոչընդոտում են նախ ոլորտը համակարգող օրենսդրության անկատարությունը, ՀԿ-ների ներքին ժողովրդավարության պակասը, ինստիտուցիոնալացման

¹⁶³ St' u Неправительственные организации в становлении и развитии гражданского общества: международный опыт: Сборник научных трудов / Отв. ред. Федосов В. И./ Воронеж, изд-во Воронежского гос. ун-та, 2002:

գործընթացը: ՔՅ կայացման և զարգացման համար ընտրված ռազմավարական ծրագրերի, մեթոդների, եղանակների, օրենքների, իրավական և նորմատիվ ակտերի վրա ազդող գլխավոր գործոնը երկրի իշխանությունն է: Նրանից են կախված 3-րդ հատվածի կառույցների հետ համագործակցության ցանկությունը, գործընկերային հարաբերությունների մեխանիզմների և հարթակների մշակումը: Վերջին իրադարձությունները (Վահե Ավետյանի հիշատակի համար մոմավառություն և ակցիա ընդդեմ ամենաթողություն, Թեղուտի, Թռչկանի, Սևանի, Յրազդանի դեպքում՝ բնապահպանական խնդիրների, ուղեվարձերի բարձրացման դեպքում՝ սոցիալական վատ պայմանների դեմ, պարտադիր կենսաթոշակային օրենքի դեպքում՝ պետական և մասնավոր հատվածի աշխատողների միջև հավասար աշխատանքային պայմանների ապահովման և երիտասարդության ցածր կենսամակարդակի դեմ, Սայաթ Նովայի 5 հասցեում՝ քաղաքի և բնակիչների իրավունքների պաշտպանություն, Գառնու տաճարի դեպքում՝ պատմական և ազգային մշակութային արժեքների պահպանություն, Չանգեզուրի պղնձամուլիբդենային գործարանի դեպքում՝ հանուն բնություն և քաղաքացիների պաշտպանություն և այլն) լավատես լինելու հիմքեր են տալիս նաև այս մակարդակում:

2.2. Հասարակական կազմակերպությունները որպես միջևորդ պետական կառավարման մարմինների և հասարակության միջև

Պետության և ՔՅ համագործակցության հարցը դեռևս հանդիսանում է ոլորտի ամենաքննարկվող թեմաներից է՝ չնայած այս երկու սուբյեկտների փոխհարաբերության մոդելների մասին բազմաթիվ հայեցակարգերին և հսկայական տեսական գրականությանը: Տարբեր երկրներում համագործակցության առանձնահատկությունները հաճախ հիմնված են լինում ոչ թե

հայ եցակարգային դրույթների, այլ հիմնականում արևմտյան փորձի վրա՝ ընդհանրացված փաստերով:

ՔՅ բազմաշերտ ու իր էությունը քիչ հակասական երևույթ է: Այստեղ գերակշռում է մասնավոր շահը, որը համընկնում կամ բախվում է տարբեր սուբյեկտների գործունեությանը: ՔՅ միայն դպրոցն ու եկեղեցին չէ, այն հասարակական համակարգի սուբյեկտների հանրագումար է, քաղաքացիական հարաբերությունների ամբողջությունն՝ քաղաքական ասպարեզից ու շուկայից դուրս, որը, սակայն, կարող է համակարգել միայն պետությունը: Պետությունը, ընդհակառակը, կյանքի է կոչում ընդհանուրի շահը, միավորում է անհատների գործունեությունը՝ ձգտելով հասնել համաձայնության ՔՅ տարբեր սուբյեկտների միջև: ՔՅ-ի ու պետության փոխհամագործակցությունը, սակայն շատ նեղ է. առաջինը չի կարող գոյություն ունենալ առանց երկրորդի և հակառակը: Պետության շնորհիվ մարդկային հանրույթը քաղաքակրթվում է և դառնում հասարակություն: Մի կողմից ՔՅ ձևավորման համար անհրաժեշտ է պետություն, մյուս կողմից պետությունը չի կարող գործառույթներ իրականացնել հասարակությունից դուրս:

Բնական իրավունքի դպրոցի առաջին խոշոր տեսաբան Գ.Գրոցկին նշում է, որ «ի սկզբանե մարդիկ միավորվել են պետության մեջ ոչ թե աստժո կամքով, այլ ինքնակամ համոզվելով, որ առանձին-առանձին իրենք անպաշտպան են և չեն կարող դիմագրավել թե՛ ներքին, թե՛ արտաքին մարտահրավերներին: Ահա այստեղից էլ սկիզբ է առավ քաղաքացիական իշխանությունը»¹⁶⁴: Պետությունն աճանցվում է ՔՅ-ից, սակայն նրա միակ առաքելությունը այդ նույն հասարակությանը ծառայելն է: ՔՅ ենթադրում է պետության առկայությունն՝ որպես իր գոյության և գործառնություն գլխավոր պայման, երաշխիք: Որքան էլ միանշանակ հնչի, ՔՅ կայացման աստիճանից է կախված պետության ժողովրդավարացման մակարդակը: ՔՅ կառույցների գործունեության արդյունավետությունն անխոսափելիորեն

¹⁶⁴ Տե՛ս **Влазнев В. Н.**, Гражданское общество как предмет конституционно-правового исследования: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Специальность 12.00.02 - Конституционное право; Муниципальное право. М., 2002, 25 с.

հանգեցնում է պետական իշխանության քաղաքականության համապատասխան փոփոխությունների: Սրան զուգահեռ՝ պետությունը, ունենալով հարաբերական առաջնահերթություններ նկատմամբ, կարող է լուրջ ազդեցություն ունենալ նրա գործունեության վրա: Որպես մեկ ընդհանուր համակարգի փոխհամակցված բաղկացուցիչ մասեր՝ ՔՀ ու պետությունը պայմանավորում են թաղրում են իրար: Ուժեղ պետությունը պետք է օգնի ուժեղ հասարակությունը, որը ձևավորում է նրան իր պահանջների համաձայն, քննադատում, կազմակերպում և վերահսկում նրա գործունեությունը:

Այսպիսով, պետության և ՔՀ համագործակցության հարցը ոլորտում առկա հիմնախնդիրներից է և արդիական է դարձել ՔՀ ձևավորման հետ միաժամանակ: Որքան էլ ՔՀ ներկայացուցիչները դժգոհ են պետական իշխանության վարած քաղաքականությունից, որը շատ հաճախ լուսանցքում է թողնում, անտեսում է նրանց, միևնույն է, առանց պետության առկայության գոյություն ունենալ չի կարող ոչ միայն ՔՀ, այլ նաև «դրամասին գաղափարը»¹⁶⁵: ՔՀ կարիք ունի պետության իրավական և ֆինանսական աջակցության: Ունենալ կայացած ՔՀ նշանակում է պետական կառավարման համակարգը ամրապնդել հորիզոնական կապերով: ՔՀ կառույցները, ի դեմս ՀԿ-ների, ապահովում և խթանում են հասարակական-քաղաքական գործընթացներին բնակչության մասնակցությունը՝ որոշումների ընդունման գործում ներգրավելով քաղաքացիների լայն շերտեր: Պետությունն, իր հերթին, պետք է շահագրգռված լինի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Ուստի պետք է օրենսդրության և իրավական նորմերի միջոցով երկրում ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն ՀԿ-ների ստեղծմանն ու զարգացմանը: Վերջիններս հետապնդում են սոցիալական տարբեր շերտերը միավորող նպատակներ և իրենց գործունեությամբ կարող են նպաստել նաև հասարակական տարբեր խմբերի միջև սոցիալական բևեռացման հաղթահարմանն ու համագործակցությանը:

¹⁶⁵ Տե՛ս Грудцына Л. Ю., նշվ. աշխ., էջ 194, Демократический транзит: модели развития стран Южного Кавказа / Под общ.ред. В. А. Кулик // <http://politcom.org.ua/wp-content/uploads/dt.pdf> (վերջին դիտում՝ 26.06.2016թ.), Меликян Дж., Армения и Евразийский Союз: от сотрудничества до интеграции. Аналитические записки Института Кавказа. Ереван, Февраль 2015 г. // http://c-i.am/wp-content/uploads/policy-brief-02_2015_ru.pdf (վերջին դիտում՝ 26.06.2016թ.):

Հատկանշական է տեսաբանների այն կարծիքը, որ հասարակության, առհասարակ երկրի զարգացման և առաջընթացի ապահովման հարցում ՔՀ կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Այն պետության քաղաքականության հետադարձ կապն ապահովող՝ «ազդակ-հակազդեցության» և սոցիալական գործընթացների վերահսկողության ինստիտուտ է: Այլ խոսքերով՝ ՔՀ-ն «ելքի» գործառույթներում խնդիրները լուծելու համար կարող է պետական կառավարման մարմիններին առաջարկել գաղափարներ, նախագծեր, հանրային կարևորության խնդիրներում՝ իրազեկ կադրեր¹⁶⁶:

ՔՀ և պետության փոխհարաբերությունը լի է պարբերական հակասություններով՝ պայմանավորված հանրային քաղաքականության ոլորտում քաղաքացիների մասնակցությունը խոչընդոտելով (անտեսելու) և պետական իշխանության մարմինների սուվերեն մոտեցումներով: Հակասությունը կարող է ունենալ տարբեր հետևանքներ ու դրսևորումներ՝ բանակցություններից, համագործակցության փորձերից մինչև «քաղաքացիական անհանդուրժողականություն և անհնազանդություն»: Ժամանակակից հասարակություններին բնորոշ են մի շարք ճգնաժամեր՝ կապված գլոբալ իզացման գործընթացներով, որոնցից մեկն էլ կոչվում է «պետության ճգնաժամ»¹⁶⁷: Այն արտահայտվում է քաղաքական անտարբերությամբ, քաղաքացիական անհանդուրժողականությամբ, հասարակության բևեռացմամբ և այլն: Իրավիճակը միտում ունի գնալ ու դեպի շահերի բախում և հասարակության մեջ ստեղծելու անհավասարակշիռ, վտանգավոր (երբեմն նաև՝ պայթյունավտանգ) վիճակ: Այս դեպքում պետությունը, ի դեմս իշխող քաղաքական վերնախավի, կոնֆլիկտային իրավիճակում է հայտնվում ՔՀ կառույցների հետ¹⁶⁸:

¹⁶⁶ Տե՛ս «Հանրային խորհուրդ, Փաստաթղթեր, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման նազմավարության հայեցակարգ (նախագիծ)» // <http://www.publiccouncil.am/hy/documents/item/2012/10/22/program1> (վերջին դիտում՝ 14.02.2015թ.):

¹⁶⁷ Տե՛ս «Ոչ թե իշխանության, այլ հենց պետության ճգնաժամ» (02.20.2014) // <http://henaran.am/36697.html> (վերջին դիտում՝ 10.05.2016թ.):

¹⁶⁸ Տե՛ս Яшина А. В., Гражданское общество как субъект обеспечения национальной безопасности: опыт России и США// Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение/ Вопросы теории и практики, 2012. № 11, ч. 2, էջ 218 // http://scjournal.ru/articles/issn_1997-292X_2012_11-2_53.pdf (վերջին դիտում՝ 14.03.2016թ.):

ՔՅ-պետությունն համագործակցության առանցքային հարցերից մեկն էլ այն է, թե որ կողմը պիտի գերակալի ինի, և որի ընդունած որոշումները պիտի պարտադիր լինեն մյուսի համար: Խնդիրն արդիական է նաև Հայաստանի Հանրապետության համար հատկապես վերջին 2-3 տարիներին, երբ ՔՅ կառույցները ամեն օր վստահորեն բարձրած այնուամենայնիվ են իրենց կայացման մասին: Ժամանակակից աշխարհում երրորդ հատվածին տրվում է պետական իշխանական մարմինների հնարավոր միանձնյա կառավարումը խոչընդոտող օղակի՝ զսպաշապիկի կամ, որ ավելի տեղին է, հակակշռի դեր:

Սակայն հետխորհրդային պետությունների իշխանությունները, ի դեմս ՔՅ-ի, դեռ չեն տեսնում հուսալի ու վստահելի գործընկերոջ: Նշված իրավիճակը բնորոշ է նաև Հայաստանին: Ռ. Խուրշուդյանը, ուսումնասիրելով մեր հասարակության զարգացման առանձնահատկությունները, եզրակացնում է. «Հայոց նորագույն պետականությունը ձևավորվեց և զարգանում է այնպիսի պայմաններում, որոնց առանձնահատկությունը պահանջում է ուժեղ պետության գոյություն, ինչը, բնականաբար, նախատեսում է նաև հասարակության պետությանը ստորադաս լինելու հանգամանքը»¹⁶⁹: Ասվածից հետևում է, որ իշխանություններն այսօր ստիպված են ցանկացած ոլորտի խնդիր լուծել ինքնուրույն՝ ավելացնելով և ուժեղացնելով իրենց իրավասություններն ու լիազորությունները, միաժամանակ ստանձնելով լուրջ պատասխանատվություն¹⁷⁰:

Պետության մեջ ՀԿ-ների առկայությունը խոսում է հասարակության շրջանում ձևավորվող և զարգացող քաղաքացու բարձր ինքնագիտակցության, քաղաքացիական նախաձեռնողականության մասին, ինչը թե տեղական և թե միջազգային փորձագետները գնահատում են որպես տվյալ երկրում հասարակության ժողովրդավարացման ցուցիչ¹⁷¹: Սակայն ՀԿ՝ որպես

¹⁶⁹ Տե՛ս **Խուրշուդյան Ռ.**, Արդի հասարակության զարգացման ուղիները // Հանրապետական, թիվ 6 (15), 2004, էջ 2:

¹⁷⁰ Տե՛ս **Абакумов С. А.**, նշվ. աշխ., էջ 32:

¹⁷¹ Տե՛ս **Погосян Г. А.**, Армянское общество в трансформации, Ер., Изд.-во “Лусабац”, 2003, էջ 221, «UNDP Strategy on Civil Society and Civic Engagement». UNDP, 2012, «Strategy on government - civil society cooperation in post-2015». BMZ strategy paper 5/2014, Germany, «FAO Strategy for Partnerships with Civil Society Organizations».

առանձին կառույց, կարծես ըստ արժանվույն չի կարևորվում հասարակության կողմից: Վերջին շրջանում, ի հեճուկս տարածված այն կարծիքի, թե դրանք գրանտակեր, մակաբույծ կազմակերպություններ են և առանձնապես կարևորություն չեն ներկայացնում, ՀԿ-ների դերը գնալով մեծանում է և ընդգծվում է հատկապես համակարգի ժողովրդավարացման գործընթացում: Նրանք ոչ պակաս, քան իշխանությունը շահագրգիռ են երկրի արդիականացման հարցում և այս գործընթացում վերջին դերակատարումը չունեն: ՀԿ-ներն ավելի ճկուն են, ավելի քիչ ռեսուրսներով կարող են ավելի արդյունավետ ծրագրեր իրականացնել՝ պարզապես դրանց ավելի մոտ լինելու պատճառով: Պետությունը պետք է աջակցի, ռեսուրսներ տրամադրի ՀԿ հատվածին, բայց ոչ երբեք ուղղորդի:

ՔՅ և մասնավորապես ՀԿ-ների առջև դրված գլխավոր խնդիրներից մեկն էլ հասարակության և պետական իշխանության մարմինների միջև երկխոսության դաշտի ձևավորումն է: Երկխոսության արդյունավետ իրականացման համար պարզապես անհրաժեշտ է ունենալ նպաստավոր օրենսդրական դաշտ: Ժամանակակից գրեթե բոլոր դեմոկրատական պետություններում գործում են ոչ կառավարական կազմակերպությունների ոլորտը համակարգող օրենքներ ու իրավական նորմեր: Օրենսդրական դաշտի առկայությունն անհրաժեշտություն է, քանի որ ՔՅ կառույցներն ու պետությունը պարբերաբար միմյանց դեմ են դուրս գալիս: ՔՅ-ն, ի դեմս ՀԿ-ների, պետական կառույցներին պարբերաբար «դիմում և տեղեկացնում է» իր պահանջների, նախաձեռնությունների, հասարակական տրամադրությունների և ծրագրերի մասին, որոնց իրականացման համար անհրաժեշտ է պետական աջակցություն (առաջին հերթին՝ ֆինանսական): Պետությունն իր հերթին խոչընդոտում կամ ընդառաջում է ՔՅ-ին՝ տարբեր պատճառներով մերժելով կամ ընդունելով նրանց առաջարկությունները, հատկացնելով նյութական ռեսուրսներ ՀԿ-ների ծրագրերի արդյունավետ իրականացման, դրանց զարգացման ու ակտիվ գործունեության համար: Ժողովրդավարական ռեժիմը ենթադրում է

The Food and Agriculture Organization of the United Nations (FAO), 2013, «The Future Role of Civil Society» (In collaboration with KPMG International). World Economic Forum, 2013:

սերտ համագործակցություն և պետության և ՔՀ կառույցների միջև՝ որպես քաղաքական և տնտեսական կայունության գրավական:

Գոյություն և ունեն պետություն-քաղաքացիական հասարակություն և համագործակցության մի քանի մոդելներ¹⁷²:

Ժողովրդավար պետություններում իշխանական կառույցների համակարգում (կառավարություններին կից խորհուրդներ, կոլեգիաներ) ՔՀ ինստիտուտների հետ համագործակցության նպատակով ձևավորվել և գործում են հատուկ մարմիններ, որոնց գործունեության շրջանակներն ու ձևերը տարբեր են: Դրանք ընդգրկում են ՅԿ-ների գրանցման, նրանց օժանդակություն և օգնություն տրամադրելու (խորհրդատվություններ, ֆինանսական աջակցություն), գործունեությունն ակտիվացնելու և ավելի նպատակային դարձնելու շրջանակները:

Մեծ Բրիտանիայում արդեն երկար տարիներ գործում է այսպիսի հատուկ կառույց՝ «Բարեգործական կոմիտե»¹⁷³ անվամբ: Այն գրանցում է բարեգործական ծրագրեր իրականացնող կազմակերպություններն ու ֆոնդերը, որոնք Բրիտանիայում մեծաքանակ են: Այս կազմակերպությունների գործունեության շրջանակները շատ լայն են և ընդգրկում են աղքատներին օգնություն տրամադրելուց, եկեղեցուն նեցուկ լինելուց, կրթության ոլորտի զարգացման մեջ որոշակի գործունեություն իրականացնելուց, ռասիզմի դեմ պայքարից, հասարակության բոլոր շերտերի առողջապահական խնդիրների լուծումից մինչև հատուկ կարիքներով մարդկանց աշխատանքի, կրթության հավասար պայմաններ ստեղծելը: Բացի կազմակերպությունների գործունեությունը կարգավորելուց և համակարգելուց, Բարեգործական կոմիտեն նաև մեկ այլ կարևոր գործառնությունն է՝ նյութական և ֆինանսական ռեսուրսներ տրամադրել այստեղ գրանցվող բոլոր ՅԿ-ներին:

Եվրոպայում ՔՀ կառույցների և պետական մարմինների համագործակցության համար կա ևս մեկ տարածված ձև: ՔՀ ներկայացուցիչները ներգրավված են օրենսդիր և գործադիր

¹⁷² Տե՛ս **Յոզիան Նիսյան Ք.**, Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները, Եր., «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2003, էջ 22-25:

¹⁷³ Տե՛ս Մեծ Բրիտանիայի բարեգործական կազմակերպությունների պաշտոնական կայք՝ <https://www.gov.uk/government/organisations/charity-commission> (վերջին դիտում՝ 20.05.2016թ):

մարմիններին կից տարբեր մարմիններում և խորհուրդներում: Ավելի տեղեկացված լինելով հասարակական կարծիքի մասին և այդ հարցում տիրապետելով հսկայական ինֆորմացիայի՝ 3-րդ հատվածի ներկայացուցիչները շատ հաճախ հանդես են գալիս որպես անփոխարինելի փորձագետներ և խորհրդատուներ: Տարբեր անվանումներով կազմակերպություններ գործում են նաև Ֆրանսիայում, Ավստրիայում, Ծվեդիայում, Ֆինլանդիայում, Իտալիայում, Բելգիայում, Իսպանիայում և այլ երկրներում, որոնք իրականացնում են գրեթե նույն գործառույթները¹⁷⁴: Դրանք ձևավորվում և լիազորվում են կառավարությունների կողմից, սակայն իրականացնում են հարաբերականորեն անկախ գործունեություն: Տվյալ ծառայությունը ղեկավարում է անկախ պաշտոնյան, որը հաշվետու է օրենսդիր մարմնի առաջ և պատասխանատու քաղաքացիների իրավունքների պաշտպանության համար: Մեծ Բրիտանիայում, օրինակ, քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար լիազորված պաշտոնյան առաջարկվում է վարչապետի և հաստատվում է թագուհու կողմից: Այս պաշտոնյանքան լուրջ դեր ունի և այնքան է կարևորվում պահպանողական անգլիացիների կողմից, որ նրան համեմատում են պառլամենտի գլխավոր առևդիտոր-համակարգողի կարգավիճակի հետ, ով վերահսկողություն է իրականացնում պետք ու չեղից կառավարությանը հատկացված ֆինանսական միջոցների օգտագործման գործընթացի նկատմամբ¹⁷⁵:

Ժամանակակից ընկալմամբ ԶՆՆ-ը ունի նվազ է համարել արևմտյան արժեք: Չարմանալի է, բայց ինչպես փաստում են «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության հետազոտողները, «ամերիկացիների մեծ մասը կոժվարանար մեկնաբանել, թե ինչ է ՅԿ-ն»¹⁷⁶: Խնդիրն այն է, որ այնտեղ ՅԿ-ներ չկան. պարզապես պետական և հասարակական կառույցների համագործակցությունն այնքան միանվել է, որ

¹⁷⁴ Տե՛ս Ungureanu C., Ionescu Florea N., Negru G., The role of NGOs in European governance, // The Annals of The "Ștefan cel Mare" University of Suceava. Fascicle of The Faculty of Economics and Public Administration Vol. 10, No. 2(12), 2010, էջ 284:

¹⁷⁵ Տե՛ս Полунина Г.В., նշվ. աշխ., էջ 170:

¹⁷⁶ Տե՛ս «Հայաստանի ՅԿ սեկտորի գնահատում. Համեմատական հետազոտություն», Եր., 2004, էջ 38:

դժվար է տարբերակել որտեղ է ավարտվում մեկի գործունեությունը, ու սկսվում մյուսինը:

Առկա պայմաններում, երբ ՀՀ-ն չի կարող անմասն մնալ աշխարհում տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումներից, պետական իշխանության կառույցների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև փոխհամագործակցության կայուն մեխանիզմ կարելի է ստեղծել ինչպես միջազգային փորձը, այնպես էլ Հայաստանի սոցիալ-քաղաքական առանձնահատկությունները համադրելով:

ՀՀ համարվում է ունիտար պետություն և բնականաբար մեզանում ՔՀ ձևավորման գործընթացն ունի իր զարգացման առանձնահատկությունները: Ունիտար պետության համատեքստում հետաքրքիր կլինի ծանոթալ պետություն-ՀԿ համագործակցության մոդելին՝ այսպես կոչված «ճապոնական հարթակի» օրինակով:

Իրենք՝ ճապոնացիները, այս մոդելը համարում են հաջողված և բնույթով եզակի¹⁷⁷: Համագործակցության մոդելի մեխանիզմը ՀԿ-ների նախաձեռնությամբ մեկնարկել է 2000թ. օգոստոս ամսին և ուղղված է միայն մարդասիրական օժանդակության ծրագրերի իրականացմանը: Մոդելի հիմքում ընկած է երեք հատվածների՝ պետություն-բիզնես-ՀԿ հատվածի, համագործակցությունը՝ հասարակական պահանջներն իրականացնելու հստակ կողմնորոշմամբ (strongest orientation toward public interests): Համագործակցությունը շոշափելի արդյունքներ է տալիս շատ պարզ պատճառով. միավորներից յուրաքանչյուրն ունի իր կարողությունների, հնարավորությունների և գործունեության մի ուղղություն: Գաղափարի մտահղացման հեղինակները նշում են «ճապոնական հարթակի» 2 առավելություն՝

1) այն ավելի շատ \$որմալ ինստիտուցիոնալ մեխանիզմ է, քան ոչ \$որմալ \$որում ինտերակտիվ շփման համար,

2) որպես \$որմալ ինստիտուտ՝ դրան անդամակցությունը սահմանափակ է:

¹⁷⁷ Տե՛ս **Akiyama N.**, Synergy or a Marriage of Convenience: An Emerging Japanese State-Civil Society Interaction over Humanitarian Assistance Policy // Paper, Research Fellow, Center for the Promotion of Disarmament and Nonproliferation Japan Institute of International Affairs, էջ 4 // http://www.mofa.go.jp/policy/emergency/pdfs/aid_policy_japan.pdf (վերջին դիտում՝ 14.03.2016թ):

Մոդելի ստեղծման գաղափարը ծագեց մարդասիրական օգնության ոլորտում մի քանի անհաջողություններն ունենալուց հետո, երբ ճապոնական բարեգործական ՅԿ-ները զիջում էին այլ երկրների ՅԿ-ներին գործունեության արդյունավետության, արագ արձագանքման, տեղեկատվություն ստանալու առումով¹⁷⁸: «Յարթակի» մաս կազմող ՅԿ-ների ջանքերով որոշվում են առկա խնդիրների առաջնահերթությունները: Այնուհետև հարցը բարձրացվում է «հարթակի» կառավարող խորհրդի առջև, որը բաղկացած է որևէ նախարարության (ըստ հիմնախնդրի ոլորտի) և բիզնես հատվածի ներկայացուցիչներից: Համապատասխան թույլտվություն ստանալուց հետո միայն իրականացվում է ծրագիրը¹⁷⁹:

Մարդասիրական այս կամ այն օգնության ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները գոյանում են մասնավոր հատվածի ներդրումների հաշվին: Օրինակ՝ ճապոնիայում տարեկան \$4.5 մլն հատկացվում է արտաքին գործերի նախարարությանը՝ մարդասիրական օգնություն ցուցաբերելու նպատակով¹⁸⁰: Միջոցների նպատակային ծախսը և թիրախ խմբերի ընտրությունը կատարում են տեղական ՅԿ-ները: Պետության կամ առաջին հատվածի ներկայությունը կարևոր է իրականացվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելիս: Մասնավոր կամ, ինչպես ընդունված է ասել, 2-րդ հատվածի ներկայացուցիչների մասնակցությունը չի սահմանափակվում միայն ֆինանսական ներդրումներով: Նրանք կարող են ակտիվորեն մասնակցել ընդհանուր համակարգի կառավարման գործընթացին, ՅԿ-ներին տրամադրել գույք և այլ անհրաժեշտ միջոցներ: Այսպիսով, իրականացվում է կառուցողական համագործակցություն երեք հասարակական հատվածների միջև: Դա հնարավորություն է տալիս առավելագույնս գործելու պետական և ազգային շահերին համահունչ, որից շահում են թե՛ պետությունը, թե՛ հասարակությունը: Բիզնես հատվածի ֆինանսական կարողությունները և տեխնիկական հնարավորությունները թույլ են տալիս բարձրացնել իրականացվող ծրագրի

¹⁷⁸ Տե՛ս **Վարդանյան Թ., Ավետիսյան Կ.**, Երիտասարդական հասարակական կազմակերպությունների դերը Հայաստանում, Եր., Նորավանք, 2005թ., էջ 70:
¹⁷⁹ Տե՛ս **Վարդանյան Թ., Ավետիսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 71-72:
¹⁸⁰ Տե՛ս Akiyama N., նշվ. աշխ.:

արդյունավետությունը, իսկ ՅԿ-ներում առկա ներուժը՝ մասնագիտական կարողությունները, հմտությունները, ճկունությունը, տեղեկացվածությունը, արդյունավետ կիրառվում են համապատասխան ոլորտում:

Կարծում ենք՝ նման բարձր արդյունավետությամբ մոդելը կարելի է տեղայնացնել մեզ մոտ՝ միջազգային փորձի և ազգային առանձնահատկությունների հիմքով՝ չմոռանալով որպես համագործակցության ակտիվ սուբյեկտներ ներգրավել նաև Սփյունքի ՅԿ-ները:

Տարբեր երկրներում նման կամուրջի դեր են ստանձնում տարբեր անվանումներ ունեցող կառույցներ, որոնք իրականացնում են միևնույն գործառնությունը, այն է՝ լինել հարթակ ՔԿ կառույցների և պետական իշխանության մարմինների միջև:

Նման կառույցներ գոյություն ունեն նաև ՀՀ-ում:

Այսպես, ակտիվ երկխոսություն ծավալելու և քաղաքացիական հասարակությանն օրենսդրական գործընթացում ներգրավելու նպատակով 2010թ. դեկտեմբերի 2-ին ստորագրվել է Համագործակցության հուշագիր Հանրային ցանցի և ՀՀ չորրորդ գումարման Ազգային ժողովի միջև: Այնտեղ մասնավորապես նշվում է. «Հաշվի առնելով ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների իրավաստեղծ և օրենսդրական գործունեության ընթացքում հանրային և փորձագիտական կարծիքների ու առաջարկությունների ներգրավման անհրաժեշտությունը և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովման և սոցիալական տարբեր խմբերի շահերի հնարավորինս լայն ներկայացվածության սկզբունքներով՝ վերոնշյալ հուշագրով Հայաստանի Հանրապետության չորրորդ գումարման Ազգային ժողովը (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով) և Հանրային ցանց միավորման մեջ ընդգրկված քաղաքացիական հասարակության ինստիտուտները՝ Հայաստանի Հանրապետության չորրորդ գումարման Ազգային ժողովի

գործունեության ամբողջ ժամանակահատվածի համար ամրագրել են համագործակցության իրենց պատրաստակամությունը»¹⁸¹:

2008թ.-ի մայիսին ՀՀ նորընտիր նախագահ Ս.Սարգսյանը խոսեց Հանրային խորհրդի ստեղծման մասին, որի անհրաժեշտությունը, ըստ նրա, պայմանավորված պետության առջև ծառայած մի շարք խնդիրներով, մարտահրավերներով: Հայաստանի քաղաքական իրականության մեջ այս նորամուծությունը դիտվում էր որպես երկրի կառավարումը ժողովրդավարության առավել բարձր մակարդակի հասցնելու և իշխանության և հասարակության միջև առաջացած պատնեշը վերացնելու միջոց: Մեր հասարակության համար խիստ կարևոր և արդիական այս կառույցի մասին հանրության կարծիքը, գնահատականներն ու ընկալումները ամբողջացնելու համար իրականացված հանրային քննարկումների արդյունքները հաստատեցին, որ ՀԽ ստեղծելու անհրաժեշտությունը վաղուց էր հասունացել ¹⁸²: Հաշվի առնելով ՔՀ հսկայական դերակատարումը երկրում ժողովրդավարացման ալիքի մեծացման և հասարակական-քաղաքական կյանքի արդիականացման գործընթացում՝ գաղափարն անշուշտ ողջունելի է: Կառույցն իր գործունեության ընթացքում պիտի ապահովեր հասարակության բոլոր հատվածների, մասնավորապես քաղաքական և հասարակական շահերի, ինչպես նաև էթնիկ, կրոնական և այլ փոքրամասնությունների պահանջների ու կարիքների ընդգրկումը հանրային քաղաքականության մշակման, նրանց իրավունքների և ազատությունների պաշտպանության, որոշումների կայացման գործընթացում: ՀԽ խնդիր ուներ նաև նպաստելու հասարակության արդյունավետ մասնակցությանը հանրային կառավարման տարբեր բնագավառներում: Այլ խոսքով, ՀԽ դառնալու էր մի կառույց, որի հիմնական առաքելությունը ժողովրդին ծառայելն էր, գլխավոր նպատակը՝ «հնարավորություն տալ հասարակությանը ազդել իշխանության կողմից վարվող քաղաքականության վրա, իսկ իշխանությանը՝ իր

¹⁸¹ Ազգային ժողովն ու հանրային ցանցը կհամագործակցեն. Հայաստանի Հանրապետության չորրորդ գումարման Ազգային ժողովի և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միավորում հանդիսացող Հանրային ցանցի միջև համագործակցության հուշագիր, Եր., «Լրագիր» օրաթերթ, 02 Դեկտեմբերի 2010:

¹⁸² Տե՛ս «Հանրային խորհուրդը Հայաստանում (12.08.2008թ.)», // Մարդկային զարգացման միջազգային կենտրոն՝ <http://ichd.org/?laid=2&com=module&module=static&id=383> (վերջին դիտում՝ 26.05.2016):

գործողության ներքին ուղղորդել հասարակության պահանջներին համընթաց», - նշվում է ՀԽԿԶ տոնակա կայքում¹⁸³:

2008թ.-ի հունիսի 12-ին ՀՀ-ում ձևավորվեց ՀԽ, իսկ 2009թ.-ի մայիսի 29-ին այն ամբողջացավ: Կառույցի գործունեության համար իրավական հիմք են հանդիսանում ՀՀ Նախագահի 2009 թ մարտի 11-ի ՆԿ-36-Ն¹⁸⁴ կարգադրությունը, դրանով հաստատված ՀԽ Կանոնադրությունը և ՀԽ ընդունած ժամանակավոր կանոնակարգերը¹⁸⁵: Ստեղծման օրից ի վեր ՀԽ Նախագահն է Վազգեն Մանուկյանը: Կառույցն ունի խորհրդակցական մարմնի կարգավիճակ: ՀԽ-ում հասարակական հիմունքներով աշխատում են 130 ակադեմիկոսներ, պրոֆեսորներ, դոկտորներ, 329 գիտության թեկնածուներ, հանձնաժողովների հետ համագործակցող ՀԿ ոլորտի ներկայացուցիչներից 422 ներկայացնում են մարզերը: Հատկանշական է, որ ՀԽ-ի 12 ոլորտային հանձնաժողովների անդամների 32,7%-ը կանայք են: Վերջիններս իրենց հանձնաժողովներում իրականացվող աշխատանքներին տալիս են սոցիալական շեշտադրում: Այս կառույցի շրջանակներում արդեն իսկ գործում են 66 ենթահանձնաժողովներ, իսկ հասարակական հնչեղություն ստացած հիմնախնդիրներին առավել հանգամանալից ծանոթանալու, արագ, արդյունավետ արձագանքներ և նպատակով շատ հաճախ ձևավորվում են նաև աշխատանքային խմբեր¹⁸⁶:

ՀԽ-ի ձևավորման հիմնական նպատակներից է երկրում ձևավորել և ամրապնդել ներքաղաքական համախմբվածությունը և ՔՀ կառույցների անկաշկանդ գործունեությունը՝ հիմքում դնելով հասարակության բոլոր շերտերի պահանջների և ցանկությունների բազմազանությունը, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիների, հասարակական միավորումների շահերը, պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում, պետական և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ծառայած խնդիրներին

¹⁸³ Տե՛ս ՀՀ Հանրային խորհրդի պաշտոնական կայք՝ <http://www.publiccouncil.am/hy> (վերջին դիտում՝ 20.05.2016թ.):

¹⁸⁴ Տե՛ս ՀՀ Նախագահի կարգադրությունը «Հանրային խորհրդի կանոնադրությունը հաստատելու և Հանրային խորհրդի անդամներ նշանակելու մասին» // <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=50190> (վերջին դիտում՝ 10.05.2016):

¹⁸⁵ Տե՛ս ՀՀ Հանրային խորհուրդ, իրավական ակտեր // <http://www.publiccouncil.am/hy/legal-acts/> (վերջին դիտում՝ 20.05.2016թ.):

¹⁸⁶ Ավելի մանրամասն տես՝ ՀՀ Հանրային խորհրդի պաշտոնական կայք՝ <http://www.publiccouncil.am/hy> (վերջին դիտում՝ 20.05.2016թ.):

վերհանումն ու հասցեագրումը, ՔՀ կայացմանը նպաստող ավանդույթները, ՀՀ քաղաքացիների, հասարակական միավորումների օրինական շահերի, իրավունքների և ազատության ու նեների պաշտպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնությունների իրականացման աջակցությունը և այլն:

Հիմնական խնդիրներն են՝

- Մեղմել և վերացնել իշխանության և ժողովրդի միջև առկա անջրպետը՝ դառնալով կամուրջ հասարակության և պետության միջև,
- Վերացնել հոռետեսության, իներտության և անտարբերության մթնոլորտը՝ ձևավորելով հավատի և վստահության միջավայր,
- Ապահովել երկխոսություն երկրի ներսում գործող քաղաքական ուժերի, խմբերի, իշխանության և ընդդիմության միջև,
- Օրգանական կապ ստեղծել հանրության, կառավարության, ԱԺ և ՀՀ նախագահի միջև,
- Օրակարգային դարձնել երիտասարդության հիմնախնդիրները,
- Երաշխավորել հանրության միջև ծնվող յուրաքանչյուր հարցադրման և մտքի քննարկումը,
- Ապահովել հասարակության բոլոր շերտերի շահերը ներկայացնող գործունե, արդյունավետ մեխանիզմներ, այդ թվում՝ ուղիղ հեռախոսակապի և այլ միջոցներով,
- Բարձրացնել ՀԿ-ի դերը երկրի կառավարման գործընթացում¹⁸⁷:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Հայաստանում պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող քաղաքականության մշակման, որոշումների կայացման գործընթացներին ՔՀԿ-ների մասնակցության ինստիտուցիան աջակցման ճանապարհին շրջադարձային քայլ էր Հանրային խորհրդի ձևավորումը, որի 12 ոլորտային հանձնաժողովներին անդամագրվեցին պետական գրանցում ունեցող 1200 ՔՀԿ-ների 2000-ից ավելի ներկայացուցիչներ: Ի դեպ, ի սկզբանե

¹⁸⁷ Տե՛ս «Հանրային խորհուրդը՝ որպես քաղաքացիական հասարակության բաղկացուցիչ» (30.06.2010) // <http://armmedia.am/arm/news/1794/hanrayin-khorhurdy-orpes-qaxaqaciakan-hasarakutyanyan-baxkacucich.html> (վերջին դիտում՝ 26.06.2016):

ՔՅԿ ներկայացուցիչների մեծ մասի կարծիքով, ՅԽՈԼԸ հիմնականում պետք է ընդգրկված լինեին ՅԿ ներկայացուցիչներ: Վերջիններս չեն ձգտում իշխանության և ամենամոտն են ժողովրդին: Կար նաև հակընդդեմ կարծիք, ըստ որի՝ ՅԿ-ի ներկայացուցիչներին ՅԽՈԼԸ ընդգրկելն անիմաստ է, քանի որ ՅՅՈԼԸ այսօր գործում են հազարավոր ՅԿ-ներ, որոնց մեծ մասը «դատարկ է», չգործող¹⁸⁸:

Որպես երկխոսության հարթակ՝ ՅԽ հնարավորություն և ստացավ ակտիվ մասնակցություն և նենեալ և նաև Ազգային ժողովի և Կառավարության աշխատանքներին՝ հստակ ներկայացնելով ինչպես սեփական դիրքորոշումը, այնպես էլ հանրային կարծիքը: Այս ամենով, սակայն, ՅԽ չի դադարում ապաքաղաքական մարմին լինելուց: ՅԽ նախագահ Վ. Մանուկյանը նշում է, որ ՅԽ-ն ո՛չ կառավարությանը կարող է փոխարինել, ո՛չ ԱԺ-ին, ոչ էլ անգամ հասարակական կազմակերպություններին, «...մենք կարող ենք միայն գործընկեր ու դաշնակից լինել»: Ըստ նրա՝ ՅԽ գտնվում է իշխանությունների և հասարակության միջև: Կառույցին անդամակցում են հազարից ավելի ՅԿ-ների ներկայացուցիչներ և մասնակիցը դառնում հասարակական համակարգում տեղի ունեցող բոլոր գործընթացներին, մյուս կողմից՝ կապված է նաև իշխանությունների հետ ոչ թե նրանց քաղաքականությունը իրականացնելու համար, այլ որպեսզի «նրանց տեղեկացնի, թե հասարակության մեջ ինչ գործընթացներ կան և ինչպես կարելի է լուծել դրանք», - ավելացնում է ՅԽ նախագահ Վ. Մանուկյանը:

Ցանկացած խնդիր, որ մինչ օրս լուծում է ստացել այս ոլորտում, տարբեր կողմերի գումարային ջանքերի շնորհիվ է: ՔՅ և պետական հատվածի դերակատարների միջև կապը և ուղղակի հաղորդակցությունն անհրաժեշտություն են: «Այս հանգամանքը կարևոր դեր է խաղում քաղաքականության մշակման և

¹⁸⁸ Տե՛ս «Յանրային խորհուրդը Յայաստանում (12.08.2008թ.)», // Մարդկային զարգացման միջազգային կենտրոն՝ <http://ichd.org/?laid=2&com=module&module=static&id=383> (վերջին դիտում՝ 26.05.2016):

կառավարությանը միշտ հաշվետու պահելու գործընթացում»¹⁸⁹, ընդգծում է ԵՄ պատվիրակության ղեկավար Տրայան Յրիսթեան՝ անդրադառնալով ՀՀ-ում ՀԽԳործունեությանը:

Մասնավորապես, ՀՀ-ում կիրառվող պարտադիր կուտակային վճարումների մասին օրենքը հասարակական լուրջ դժգոհության ալիք բարձրացրեց հատկապես օրենքի շրջանակներում թիրախային խումբ դարձած պետական աշխատանք ունեցող երիտասարդների շրջանում: Քաղաքացիական անհնազանդությանը ունենալու և անխաճեռնությանը ունենալու հաջորդում էին իրար: Օրենքի կիրառումից դժգոհ հասարակական ակտիվիստներն իրենց շարժումն անվանեցին «Դեմ եմ»: Եվ այսպես, 2014 թ.-ի հունսիսի 23-ին «Դեմ եմ»-ի և անխաճեռնության ներկայացուցիչներին ընդունեց ՀԽ նախագահ Վ.Մանուկյանը: Նրանք առաջարկեցին ձևավորել աշխատանքային փորձագիտական խումբ՝ օրենքի թերություններն ու հակասահմանադրական դրույթները մատնանշելու համար կամ իրականացնելու հանրային քննարկումներ վիճահարույց օրինագծի վերաբերյալ, ինչը բխում է նաև ՀԽ կանոնադրությանից: Ի պատասխան հնչեցրած առաջարկությանը՝ ՀԽ նախագահը հաջորդ օրը կազմակերպեց աշխատանքային խորհրդակցությանը, որին մասնակցում էին ՀԽ նախագահը, անդամները, ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության պետի տեղակալը, ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսության վարչության պետը, ՀՀ ԿԳՆ հանրակրթության վարչության պետը, ինչպես նաև «Դեմ եմ»-ի ներկայացուցիչներ, մանկավարժներ:

Հայտնի իրողությունն է, որ որևէ երկրում ժողովրդավարության հաստատությանը ունենալու գարգացման համար կարևոր ձեռքերումներից են տարբեր տեսակետներ և դիրքորոշումներ ունեցող ՀԿ-ի և ՔՀ այլ կառույցների կայացումը և գործունեությունը: Երբ 2014-ի օգոստոսին ՀՀ-ում ՌԴ դեսպան Ի.Վոլինկինը «Новый ковчег» ռուսալեզու պարբերականին տված հարցազրույցում նշել էր, թե պետք է «նոր մեթոդներ կիրառել հայ-ռուսական հարաբերություններում սեպ խրելու ցանկություն և

¹⁸⁹ Տե՛ս «ԵՄ-ն կարևորում է քաղաքացիական հասարակության դերը Հայաստանում» (29.09.2012թ.), // <http://eunewsletter.am/hy/eu-strengthens-the-role-of-civil-society-in-armenia> (վերջին դիտում՝ 10.05.2016թ.):

ու նեցող ոչ կառավարական կազմակերպությունները չեզոքացնել ու համար»¹⁹⁰, դրան անմիջապես արձագանքեց ՅԽ: Ի դեպ նշենք, որ ՅԽ տարբեր հանձնաժողովներում ընդգրկված հազարից ավելի ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ դժգոհություն ու անհամաձայնություն էին հայտնել խնդրի առնչությամբ՝ այն համարելով «անընդունելի և ոչ կոռեկտ»¹⁹¹: Իր տարածած հայտարարության մեջ ՅԽ համապատասխան հանձնաժողովը նշել էր, թե առաջիկայում ևս հետևողական է լինելու երկրում բազմակարծության, խոսքի ազատության պաշտպանության և ժողովրդավարական հաստատության ներքին զարգացման հարցերում¹⁹²:

ՅԽ գործունեության համար հիմքում ընկած են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ՀՀ քաղաքացիների ազատ կամքով հասարակական կառույցներ և միավորումներ ստեղծելու իրավունքները, ինչպես նաև ՉԼՄ-ի ներկայացուցիչների հետ համատեղ աշխատանքը՝ ըստ ոլորտը համակարգող օրենսդրության: ՅԽ իրավունք ունի իրականացնելու հանրային հնչեղություն ու նեցող խնդիրներին առնչվող խորհրդակցություններ, նոր ընդունվող կամ արդեն գործող օրենքների մասին քննարկումներ, տալ փորձագիտական եզրակցություն իրավական և նորմատիվ ակտերի վերաբերյալ՝ աշխատանքներում ընդգրկելով նաև ՀԿ ոլորտի ներկայացուցիչների, ՉԼՄ անդամների, հասարակական ակտիվիստ:

ՅԽ բաց կառույց է, և միայն վերջին 1 տարում 12 հանձնաժողովների ներկայացուցիչներից շատերը իրենց մասնագիտական, փորձագիտական լուծումներն ու առաջարկություններն են ներկայացրել Սևանա լճի, Չվարթնոց օդանավակայանի, Այրարի հարստացման, ՏՏՏ ոլորտի, ՀՀ-ում սահմանադրական փոփոխությունների, ՀՀ-ում ՔՀ զարգացման ռազմավարության, ֆիզ-արձակուրդի և հղիության պետական վճարների, Էլ Էներգիայի թանկացման, կրթության 12-ամյա պարտադիր համակարգի անցնելու, ՀՀ-ում ազատագրվածների կենցաղային

¹⁹⁰ Տե՛ս «Российско-армянские отношения находятся на беспрецедентно высоком уровне», Новый ковчег, N 8, май 1-15 (238), М., 2014 // <http://noev-kovcheg.ru/mag/2014-08/4466.html> (վերջին դիտում՝ 08.03.2016թ.):

¹⁹¹ Տե՛ս «ՀՀ Հանրային խորհրդի արձագանքը ՀՀ-ում ՌԴ դեսպան Ի.Վոլինկինի հայտարարության վերաբերյալ» (13.05.2014), // <http://www.publiccouncil.am/hy/press-releases/item/2014/05/13/216> (վերջին դիտում՝ 08.03.2016թ.):

պայմանների բարելավման և այլ հարցերի շուրջ: Այլ խնդիր է, թե իշխանությունը որքանով է պատրաստվելու նրանց առաջարկներն ու դրանք ընդգրկելու քաղաքական օրակարգ:

Ինչպես վերը նշվեց, ՅԽ 12 հանձնաժողովներին անդամակցում են հազարից ավելի ՅԿ ներկայացուցիչներ: 2014 թ.-ի դեկտեմբերի դրությամբ Քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի հետ համագործակցում էին թվով 163 ՅԿ-ներ և ՊՈԱԿ-ներ:

Յաշվի առնելով ուսումնասիրվող թեմայի՝ «ՅԿ-ները ՅՅ-ում քաղհասարակության զարգացման գործընթացում» առանցքային կապը ՅԽ աշխատանքի տրամաբանության հետ՝ ներկայացնենք դրա հետ համագործակցող ՅԿ-ների գործունեության առանձնահատկությունները (նշենք, որ ՅԽ տվյալ հանձնաժողովի նախագահի կողմից 2013թ.-ին մշակվել է քաղաքացիական հասարակության վերաբերյալ հայեցակարգ)¹⁹³: Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ չափանիշներով՝ ՅԿ ամբողջական անվանումը, ներկայացուցչի անուն-ազգանուն-հայրանունը, պաշտոնական կայքի առկայությունը, հետադարձ կապը (հեռախոս, հասցե), կայքի ավտոմատ թարգմանությունը տարբեր լեզուներով (բացի հայերենից), իրականացված ծրագրերի մասին հակիրճ տեղեկություն, ֆինանսական հաշվետվություն ներկայացում և այլ կամ լրացուցիչ տեղեկություն (ՅԿ-ի գործունեության վերաբերյալ որևէ տեղեկություն էլեկտրոնային կամ տպագիր մամուլում) բաժինները:

Այսպիսով, ՅԽ նշված հանձնաժողովին անդամագրված 163 հասարակական կառույցներից բոլորն ունեն և տրամադրել են կազմակերպության ամբողջական անվանումը (ՅԿ-ների գծապատկերը կցվում է): Պաշտոնական կայքէջ ունեն 53 ՅԿ, որոնցից 2-ի կայքերը նորացման փուլում են, այսինքն՝ որևէ տեղեկություն տեղադրված չէ: 21 ՅԿ-ներ իրենց պաշտոնական էջերում հանգամանալից ներկայացրել են պաշտոնական գրանցումից մինչ օրս իրականացրած գրեթե բոլոր ծրագրերը՝ համապատասխան թեմաներով,

¹⁹³Տե՛ս «ՅՅ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգ /նախագիծ/» // ՅՅ Յանրային խորհուրդ, քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողով, Եր., 2012:

հակիրճ կամ հանգամայն ից տեղեկատվության մաս: Կայքերի մեծ մասում կարելի է նաև գտնել բազմաթիվ լուսանկարներ, առդիո կամ վիդեո տեղեկություններ՝ իրականացված ծրագրերի մասին: Բոլորովին այլ է մոտեցումը, երբ խոսքը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններին: Իրենց պաշտոնական կայքերում 160 ՀՀ-ներից հաշվետվություններ են տեղադրել միայն 21-ը: Որոշ դեպքերում դրանք ոչ թե լայն հանրության համար էին, այլ PDF տարբերակով տեղադրված էին azdarar.am կայքում: Կայքերի մեխանիկական թարգմանության հնարավորություններն՝

- միայն հայերեն - 13 ՀՀ,
- 2 լեզվով՝ հիմնականում հայերեն և անգլերեն - 14 ՀՀ,
- 3 լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն - 10 ՀՀ:

Ի դեպ, այս բաժնում չեն ներառվել այն ՀՀ-ները, որոնք որպես պաշտոնական կայք կիրառում են միայն սոցցանցերի գրանցումները: «Յետադարձ կապ» չափորոշչով ապահովված է 46 ՀՀ, ընդ որում՝ ֆիքսված կամ բջջային հեռախոսահամարները գրանցելու համար ստիպված ենք եղել օգտվել «Սփյուն» (SPYUR.am) տեղեկատվական կայքից:

Վերջին՝ «Այլ» բաժնում, ուր տեղադրվել է ՀՀ-ի գործունեության ակտիվության ընդհանուր դիտարկումներ էլեկտրոնային և տպագիր մամուլից՝ համապատասխան էլիասցեներով ու աղբյուրներին հղում անելով, ստացվել է հետևյալ պատկերը. ակտիվ հասարակա-քաղաքական գործունեություն են ծավալում 97 ՀՀ: Դրանց որոշ մասը ակտիվություն է ցուցաբերում հատկապես համապետական ընտրությունների ժամանակ՝ հայտարարելով, թե սատարում են այս կամ այն թեկնածուին կամ քաղաքական ուժին: Նույն սկզբունքով են առաջորդվում նաև մարզերում գործող որոշ ՀՀ-ներ: Այսինքն՝ կարևոր է նաև այն, թե ՔՀ ինստիտուտները որքան են համարժեք արտացոլում բնակչության բոլոր շերտերի պահանջմունքները:

Ամբողջացնելով ընդհանուր տպավորությունը և առանցքում դնելով ծրագրերի իրականացման և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ տեղեկությունը, կարելի է արձանագրել, որ շատ ՀՀ-ներ ձևավորվելուց հետո կարողանում են իրականացնել 1-2 դրամաշնորհային ծրագիր և սահմանափակվել դրանով:

Ակտիվ գործող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվություններից ակնհայտ է դառնում, որ իրենց առաքելություններում մեջ կայուն դիրքորոշում ու հեղինակություն ունեն միջազգային դոնորներից օգտվող ՀԿ-ները: Դառապել քան հստակ է անգամ պաշտոնական կայքերից:

«Դրսից ֆինանսավորվող» և «ներսում գործող» ՀԿ-ների հարցը ուժորտի կնճռոտ խնդիրներից է: Որպես հավելում նշենք ՅԽ նախագահի դիտարկումներն այս հարցի առնչությամբ:

ՀՀ-ում քաղաքացիական հասարակության զարգացման պատճառները, ըստ Վ.Մանուկյանի, նախևառաջ պայմանավորված են Հայաստանի տարեցտարի՝ առավել խորը ներգրավմամբ միջազգային կառույցներում: Այսինքն՝ ՀԿ-ները հիմնականում սնվում են ոչ թե ներքին, այլ արտաքին աղբյուրներից, ինչն էլ պարունակում է որոշակի մարտահրավերներ: Մասնավորապես այն, որ ՀԿ-ներում ներգրավված անհատները դրամաշնորհների շրջանակներում ծրագրեր իրականացնելիս իրենց մտավոր ներուժը կենտրոնացնում են այն խնդիրների լուծմանը, որոնք հրատապ են համարվում ոչ թե հասարակության, այլ միջազգային դոնոր կազմակերպությունների համար: Սամեզ համար շահեկան է, քանի որ հայ հասարակությունը կանգնած է բազմաթիվ խնդիրների լուծման՝ ազգային ներուժի կենտրոնացման անհրաժեշտության առջև: Եթե ստեղծված իրադրությունը մոտենանք այս տեսակետից, հստակ կդառնա, որ հասարակական հատվածում ներգրավված ազգային ներուժը ոչ նպատակահարմար է օգտագործվում¹⁹⁴: Երկրորդը, ըստ Վ. Մանուկյանի, հասարակության, մասնավորապես երիտասարդության առավել զարգացած լինելու հանգամանքն է, և երրորդը՝ ներկա իշխանությունների կողմից հանդուրժողականության որոշակի դրսևորումը¹⁹⁵:

Հասարակությունը մեծ ուշադրությամբ հետևում է հանրության և պետական մարմինների միջև հետադարձ կապի ապահովման՝ ՅԽ գործառույթին: Խիստ կարևորվում է նաև ՅԽ

¹⁹⁴Տե՛ս **Վարդանյան Թ.**, ՀՀ հասարակական համակարգի հիմնախնդիրներն արդի փուլում, Եր., Նորավանք, 2004, էջ 17:
¹⁹⁵Տե՛ս **Մանուկյան Վ.**, Հայաստանում քաղաքացիական հասարակությունը զարգացում է ասարում (27.12.2012)
// <http://vazgenmanukyan.am/index.php?id=1627&menu1=175&menu2=175> (վերջին դիտում՝ 10.05.2016):

հաշվետվողականության ապահովման խնդիրը՝ չնայած պաշտոնական կայքի առկայությանը: Կարծում ենք՝ հասարակության համար ՅԽ գործունեությունն առավել թափանցիկ դարձնելու կամ ավելի մեծ ծածկույթ ընդգրկելու համար կարելի է նրան դամնեթին որոշակի ժամանակացույցով՝ տրամադրել հեռուստաէթեր, որի ընթացքում կլուսաբանվեն ոչ միայն արդեն կատարված, այլև կատարվող և կատարվելիք աշխատանքները, անմիջական կապի (հեռախոս, օնլայն հարցադրումներ) միջոցով հնարավոր կլինի պատասխանել քաղաքացիների հարցերին կամ հասցեագրել դրանք, լսել նրանց կողմից բարձրացվող խնդիրները: Այս մեխանիզմի կիրառմամբ անտեսված չեն լինի նաև մարզերը:

Այսպիսով, կարելի է նշել, որ քաղաքացիական հասարակության և պետական կառավարման մարմինների կառուցողական և գործընկերային համագործակցությունը երկուստեք ձեռնտու է, որից կշահեն հասարակության բոլոր կամ գրեթե բոլոր շերտերը:

Հանրային խորհրդի չորս տարիների գործունեությունը, նրա մասնակցությունը բազմաթիվ օրենսդրական նախաձեռնությունների, հայեցակարգերի քննարկմանն ու լրամշակմանը, հանրային հնչեղությունն ունեցող հարցերի վերաբերյալ շահագրգիռ լսումների կազմակերպումն ու լուծումների առաջարկումը, քաղաքացիների դիմումներում բարձրացված հարցերին արձագանքները վկայում են այդ կառույցի անհրաժեշտության և հզորացման մասին¹⁹⁶:

2.3. Հասարակական կազմակերպությունների կառուցվածքային-գործառնական առանձնահատկությունները

Ժողովրդավարական քաղաքական համակարգերի և պետական կառավարման ձևերի ժամանակակից ընկալումներն ու պատկերացումները սերտորեն առնչվում են ՔՀ հասկացության և

¹⁹⁶Տե՛ս «ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգ /նախագիծ/», էջ 25:

դրա գաղափարաբանության հետ: Քաղաքացիական հասարակության մասին դատողություններն ու ուսումնասիրությունները մեզանում հրատապ դարձան վերջին 20-25 տարիների ընթացքում, որոնք պատմականորեն համընկնում են հտրհրդային Միության փլուզման և նրա կազմում գտնված պետությունների անկախացման գործընթացի հետ:

ՔՅ զարգացման և կայացման համար ընտրված ռազմավարական ծրագրերի, օրենքների, իրավական և նորմատիվ ակտերի վրա ազդող գլխավոր գործոնը քաղաքական իշխանությունն է, որից կախված է ՔՅ հատվածի հետ գործընկերային հարաբերությունների մշակումը¹⁹⁷: Թեպետ հետխորհրդային գրեթե բոլոր երկրներում, այդ թվում նաև ՅՅ-ում, սահմանվել են ՔՅ հատվածի գործունեության իրավական չափանիշները, սակայն ՔՅ-ի և իշխանությունների միջև գործընկերության բարենպաստ պայմանների ստեղծումը դժվար գործընթաց է: Ժողովրդավարացման էական նվաճումներ արձանագրել են հետխորհրդային այն երկրները, որոնք խրախուսել և ֆինանսավորել են հասարակական կազմակերպությունների կայացումը (Լիտվա, Լատվիա, Էստոնիա, Յունգարիա): Պատկերը բոլորովին այլ է ԱՊՅ այն երկրներում, ուր իշխանություններն ընդունել են կրավորական դիրքորոշում ՅԿ-ների գործունեության ու արժևորման գործում¹⁹⁸:

Յարյունամյակներ շարունակ չունենալով պետություն և պետականության ինստիտուտներ՝ հայ հասարակությունը ձևավորել, զարգացրել է հասարակական տարբեր ինստիտուտներ: Որոշակի վերապահումներով քաղաքացիական ինքնակառավարման հաստատությունների շարքը կարելի է դասել նաև պետականության բացակայության պայմաններում ավանդական ազգային կուսակցությունների գործունեությունը: ՅԿ-ների գործունեության զարգացման գործում կարևոր է տեղայնացնել ոչ

¹⁹⁷ Տե՛ս **Александр А. С.**, Цивилиархические основы демократизации политического режима в Армении // «Центральная Азия и Кавказ». Журнал социально-политических исследований. Том 14, вып. 3, 2011, էջ 132-145, **Ալեքսանյան Ա. Ս.**, Կանանց քաղաքացիավարական ներկայացվածության հիմնախնդիրները ՅՅ-ում // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 144.6, 2014, № 3, էջ 36-46:
¹⁹⁸ Տե՛ս **Հովհաննիսյան Ջ.**, Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները, Եր., «Նորավանք» ԳԿՅ, 2003, էջ 22:

միայն արևմտյան փորձն ու մոդելները, այլ և հաշվի առնել ազգային ավանդույթներն ու Սփյուռքի ներուժը:

20-րդ դարի երկրորդ կեսը միջազգային և ազգային մակարդակներում նոր ակտորների՝ հասարակական և միջազգային կազմակերպությունների զարգացման ու գործունեության համար ունեցավ մեծ նշանակություն: ՀԿ-ները, որոնք կամավորության սկզբունքով ձևավորված ազատ քաղաքացիների միավորումներ են, բոլոր ժողովրդավար երկրներում, այդ թվում նաև Հայաստանում ձևավորում են քաղաքացիական հասարակության հիմքը: Դրանք ոչ կառավարական, պետությունից հարաբերականորեն անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություններ են, որոնց անդամները միավորվում են ընդհանուր նպատակների, շահերի և քաղաքացիական արժեքների շուրջ՝ նպատակ ունենալով լուծել ոչ միայն սեփական անդամների, այլ և հասարակության առջև ծառայած սոցիալ-մշակութային, կրթական, գենդերային, բնապահպանական որոշ հիմնախնդիրներ, որոնք չեն հակասում կազմակերպության կանոնադրությանը:

ՀԿ-ները ՔՀ ձևավորման անհրաժեշտ պայմաններից են, վճռորոշ դեր ունեն ժողովրդավարության հաստատման և քաղաքական երկխոսության մշակույթի ձևավորման գործընթացում: 2012 թ. պաշտոնական տվյալների համաձայն՝ ՀՀ-ում գրանցված էին տարբեր ուղղվածության 3789 քաղաքացիական հասարակության կառույցներ (ՔՀԿ), որոնցից 1200-ից ավելին ՉԼՄ-ներ էին, 765-ը՝ հիմնադրամներ, 301-ը՝ իրավաբանական անձանց միություններ, 1500-ից ավելին՝ հասարակական կազմակերպություններ¹⁹⁹: 2014 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ-ում գրանցված էին 4066 ՀԿ-ներ, 902 հիմնադրամ և 296 իրավաբանական անձանց միություն²⁰⁰:

ՀԿ-ների պաշտոնական գրանցման և ակտիվ գործունեության առումով Հայաստանը տարածաշրջանում փոքր-ինչ զիջում է միայն Վրաստանին: Այս իրողությունն ունի իր օբյեկտիվ հիմքերը: Առաջին ու կարևոր պատճառն Արցախի չլուծված հիմնախնդիրն է, ինչի հետևանքով միջազգային դոնոր կազմակերպությունները

¹⁹⁹ Տե՛ս «ՔՀԿ կայունության ցուցանիշ. Հայաստան: USAID, CDPF: 15-րդ խմբագրություն», Եր., 2012, հունիս, էջ 2:

²⁰⁰ Տե՛ս «ՔՀԿ կայունության ցուցանիշ. Հայաստան, ՔՀՀ/ԱՄՆ ՄԶԳ», Եր., 2014, հունիս:

հիմնականում գերադասում են գրասենյակներ հիմնել Վրաստանում, այլ ոչ ՅՅ-ում:

Երկրորդ պատճառը, որը պակաս կարևոր է, Վրաստանի նախկին նախագահ Մ. Սահակաշվիլի ու իրականացրած բարեփոխումներն էին: ՅՅ-ում ՅԿ-ների ձևավորումը մեծապես կախված էր 1988 թ.-ի ավերիչ երկրաշարժի և Բաքվի, Սումգայիթի ողբերգական դեպքերի հետ, որոնց անմիջապես արձագանքեց միջազգային հանրությունը: Այս ընթացքում միջազգային կազմակերպությունները գրասենյակներ հիմնեցին Յայաստանում՝ իրականացնելով բարեգործական առաքելություն: Չուգահեռաբար ձևավորվեցին նաև տեղական ՅԿ-ներ, որոնք ֆինանսավորվում էին հիմնականում Սփյուռքից ու ՄԱԿ-ից: Յետագայում ՅԿ-ների գործունեության թիրախը կուտակված սոցիալական խնդիրների հաղթահարումն էր, քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական ինստիտուտների կայացումը, մարդու իրավունքների պաշտպանությունը²⁰¹:

ԽՍՀՄ նախկին պետությունների տարածքում փոփոխությունները հասարակության կյանքի բոլոր ոլորտներում ստեղծեցին նոր իրականություն: որում, սակայն, ինքնուրույն ու կայացած ՅԿ հատված ստեղծելու խնդիր օրակարգում չկար: Իսկ սարսափին, մշակութային՝ նկարիչների ու երաժիշտների, կանանց ու երիտասարդների կազմակերպությունները կորցնում էին իրենց բնականոն գործունեության ռիթմն ու ուղղությունները: Այս կազմակերպությունները ոչնչանալուց փրկելու և դրանք տարբեր խմբերի շահերը պաշտպանող ինքնուրույն կազմակերպությունների վերածելու հարցը հետխորհրդային հասարակագետները կարևոր չհամարեցին: Միանգամայն նոր տիպի ոչ կառավարական կազմակերպությունների գրանցման դանդաղ գործընթաց տեղի էր ունենում հասարակության բոլոր շերտերում՝ արևմտյան քաղաքական մշակույթի ընկալումների շրջանակներում երրորդ հատվածի դերի և տեղի վերաբերյալ անտեղյակության պայմաններում²⁰²:

²⁰¹ Տե՛ս «Յայաստանի ՅԿ սեկտորի գնահատում. Յամեմատական հետազոտություն», Եր., 2004, էջ 11:

²⁰² Տե՛ս **Մկրտչյան Ա.**, Արևմտյան մոդելի երրորդ սեկտորի հարմարման գործընթացները հետխորհրդային հասարակություններում, Եր., «21-րդ դար», թիվ 3 (55), 2014, էջ 108:

Նշված իրողություններն ու հանգամանքները հաշվի առնելով՝ ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում երրորդ հատվածի և դրա ամենաազդեցիկ ինստիտուտների՝ ՀԿ-ների ձևավորումը, գործունեությունն ու կառուցվածքը պետք է տարբերվեն ոչ միայն արևմտյան երկրների փորձից, այլև տարածաշրջանի մյուս պետություններից: Մասնավորապես՝

1. Հայաստանում գրանցված ՀԿ-ներից, հիմնադրամներից և իրավաբանական անձանց միություններից փորձագետների գնահատմամբ միայն 15 - 20 % է գործում²⁰³: Շատ կազմակերպություններ գոյություն ունեն միայն թղթի վրա, քանի որ բազմաթիվ ՀԿ-ներ մեկ-երկու ծրագրի ավարտից հետո փաստացի դադարեցնում են իրենց գործունեությունը: Գրանցված ՀԿ-ների մոտ կեսը տեղակայված է Երևանում, իսկ մյուս կեսը գրեթե հավասարապես բաշխված է մարզերի միջև: Գյուղական ՀԿ-ների քանակը Հայաստանում շատ փոքր է, իսկ մարզային ՔՀԿ-ների մեծ մասը տեղակայված է մարզկենտրոններում: ՀՀ-ում ՀԿ-ները առավել հաճախ աշխատում են համայնքային զարգացման, սոցիալական ծառայությունների, բարեգործության, երիտասարդության հիմնաֆնդիրների և կրթության ոլորտներում: Պաշտոնապես գրանցված ՀԿ-ների ավելի քան մեկ երրորդն իր գործունեությունը ծավալում է ամբողջ հանրապետությունում²⁰⁴:
2. Ժամանակակից ընկալումներով ՀԿ-ների ստեղծման տարեթիվն ընդունելով 1988 թ.՝ կարելի է ուշագրավ դիտարկումներ անել ՀՀ-ում գործող կազմակերպությունների անվանումների վերաբերյալ: Մասնավորապես, եթե 1988 թ. դրանք հանրությանը հայտնի էին «Հայ օգնության ֆոնդ» (ՀՕՖ, 1988 թ.), «Առաքելություն և Հայաստան» (1988թ.), «Կորլ դ Վիժն Հայաստան» (1988), «UOU-Քինդերդորֆ ինտերնացիոնալ» (1989, այնուհետև՝ UOU-Մանկական գյուղեր), «Save the children» (1993), «Ազնավորը

²⁰³ Տե՛ս **Մարգարյան Տ., Հակոբյան Ա.**, ՔՀԿ-ների ներգրավվածությունը քաղաքականության մշակման և իրականացման մոնիթորինգի գործում. կարիքներ և կարողություններ (Հայաստան), Եր., 2015, էջ 5:

²⁰⁴ Տե՛ս նույն տեղը:

Յայաստանին»²⁰⁵ անուններով, ապա ազգային զարթոնքը և անկախացումը ստեղծեցին հայ ինքնուրույն և մշակույթի պահպանմանն ուղղված «Շեն», «Սասնա տուն», «Ակունք», «Ոստան», «Յայրենիք Յայոց», «Օրրան», «Զանգակատուն» և նմանատիպ այլ անվանումներով ՅԿ-ներ: Ընդամենը 10 տարի անց՝ 2000-ական թթ., ՅԿ-ներն սկսեցին ընտրել այնպիսի անվանումներ, որոնք հնարավորինս կարտահայտեն ժամանակի հասարակական, քաղաքական, սոցիալ-մշակութային և քաղաքացիական պահանջները՝ «Եվրոպական ինտեգրացիա», «Սիվիլիթաս», «Կանանց ռեսուրս կենտրոն», «Խաղաղության երկխոսություն», «Քաղաքացիական հասարակության զարգացման և եվրոպական ինտեգրման կոմպասյան երիտասարդության կենտրոն», «Մարդը կարիքի մեջ է», «Կանայք հանուն զարգացման», «Ազատ հասարակության ինստիտուտ», «Քաղաքակրթությունների երկխոսության ազգային կենտրոն» և այլն: Յատկանշական է, որ այս համատեքստում որքան ավելի հնչեղ են անվանումները, այնքան ավելի մեծ են միջազգային դոնորների կողմից հատկացվող դրամաշնորհներ ստանալու հնարավորությունները:

3. ՅՅ-ում ՅԿ-ները շարունակում են ձևավորվել՝

- Յասարակական հնչեղությունն ունեցող որևէ խնդրի շուրջ՝ արտահայտելու հասարակության որոշակի շերտի շահերն ու պահանջմունքները: Դրանք ի սկզբանե կարող են ձևավորվել նախոչ ֆորմալ, ապա վերածվել ֆորմալ խմբի,
- դառնալով որևէ միջազգային կազմակերպության ներկայացուցիչ (MAN IN NEED, ARMENIAN CIVITAS, ՅԵԼ սինքրան ասոցիացիա, «Արագիլ», «Նվիրիր կյանք» և այլն),
- պետության կողմից («Յայաստանի երիտասարդական հիմնադրամ», «Բազե» և այլն): Գրականության մեջ նման կազմակերպություններին պայմանականորեն անվանում են «գրպանային» ՅԿ-ներ կամ Գոնգոներ,

²⁰⁵Տե՛ս «Յայկական հանրագիտարան, Գիրք 2, Բարեգործական կազմակերպություններ» // <http://www.encyclopedia.am/pages.php?bId=2&hId=1012> (վերջին դիտում՝ 20.05.2016):

- քաղաքական կուսակցության անդամի կողմից, որոնք հայ տնի են որպես թանգոներ անվամբ,
 - բիզնես ոլորտի կամ հասարակության 2-րդ հատվածի կողմից, որոնք հայ տնի են որպես բոնգոներ անվամբ,
 - Դրամաշնորհ ստանալու նպատակով²⁰⁶:
 - Պայմանականորեն այս 5 խմբին կարելի է ավելացնել նաև հետևյալները՝
 - Ընդդիմության կողմից ձևավորվող ՅԿ-ներ,
 - Ակտիվ քաղաքացիների կողմից ձևավորված ՅԿ-ներ, որոնք հետագայում քաղաքական դերակատար դառնալու նկրտումներ ունեն,
 - ՅԿ-ներ, որոնք ստեղծվում են դրսի ուժերի կամ շահագրգիռ խմբերի կողմից,
 - Կրոնական գաղափարախոսության իրականացնող խմբեր, որոնք իրավական կարգավիճակով պաշտոնապես համարվում են ՅԿ-ներ*:
4. ՅԿ-ում գործող ՅԿ-ներից շատերը չունեն կայուն ու մշտական ֆինանսական ռեսուրսներ, հիմնական գրասենյակ, իսկ շատերն էլ իրենց ակտիվ գործունեությանը պարբերաբար գովազդելու համար չեն իջնում տպագիր ու էլեկտրոնային մամուլի էջերից: Չսկանալի է, որ խոսքը հիմնականում վերաբերում է միջազգային կազմակերպությունների հետսերտհամագործակցող ՅԿ-ներին և դրանց տեղական գրասենյակներին: Չնայած ոչ քիչ ռեսուրսներին՝ այս ՅԿ-ները չունեն գործունեության անկախություն և ստիպված են իրականացնել դոնորի ծրագրերը: Այլ խոսքով, նրանք պարզապես միջնորդ են ոչ թե իշխանության և հասարակության միջև, ինչը ՅԿ-ների առաջնային գործառնությունն է որպես գործունեության տրամաբանությունը, այլ միջնորդ դոնորի և ՅԿ-ի միջև: Նման կազմակերպությունները մասնագիտական գրականության մեջ հայ տնի են «ցանցային կազմակերպություններ» անվամբ: Անկախ գործունեության և տեղակայման վայրից՝ միասնական են նրանց ծրագրերը, նպատակները, ուղերձները և անգամ աշխարհի տարբեր

²⁰⁶ Տե՛ս **Վարդանյան Թ., Ավետիսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 10:

* Վերջին 4 խմբերը կարող են չհամընկնել որևէ մեկի կամ կազմակերպության տեսակետներին՝ հետ, որովհետև դրանք հետազոտողի դիտարկումների արդյունքներն են:

երկրներում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ գնահատականները, դիրքորոշումներն ու վերաբերմունքը:

2004թ. «Նորավանք» գիտակրթական կենտրոնի իրականացրած վերլուծությանը կարելի է գտնել ասվածի ապացույցը: Մասնավորապես 1999 թ. ՌԴ-ում ազգային անվտանգության կողմից ձերբակալվեց ՌԱԱ, Կանադայի և ԱՄՆ-ի ինստիտուտների ռազմատնտեսական ոլորտի մասնագետ Իգոր Սուտյագինը²⁰⁷ (հիշեցնենք, որ նա արտասահմանյան այցերից մեկի ժամանակ պետական գաղտնիք էր տրամադրել ամերիկյան լրտեսական գործակալներին): Այս իրադարձությանը արձագանքեցին ողջ միջազգային հանրությանը,²⁰⁸ եվրոպական և ամերիկյան, այդ թվում՝ նաև ռուսական իրավապաշտպան ՅԿ-ները²⁰⁹: Նրանք ՌԴ իշխանությանը մեղադրում էին անմեղ մարդուն կալանավորելու և քաղաքացու հիմնարար ազատություններն ու իրավունքները ոտնահարելու, մի շարք կոնվենցիաների և հռչակագրերի դրույթներն անտեսելու մեջ: Իրենց օտարերկրյա գործընկերներից հետջմնացին նաև մեր իրավապաշտպան ՅԿ-ներն ու միջազգային կազմակերպությունների տեղական գրասենյակները. մասնավորապես՝ ՅԵԼՍԻՆԿյան ասոցիացիայի անդամները կոչ էին անում ազատ արձակել Սուտյագինին: ՅՅ-ում անգամ նախաձեռնվեց ստորագրահավաք: Բոլորովին խնդիր չունենալով քննադատելու վերջիններիս դիրքորոշումն ու նախաձեռնություններն այս հարցում՝ բերենք ևս մեկ օրինակ:

2014 թ. ՌԴ-ում ձերբակալվեց հայ ազգի գործարար ու բարերար Լևոն Յայրապետյանը: Բազմաթիվ միջազգային կառույցների, այդ թվում և ռուսական ՅԿ-ներից շատերի գնահատականով դա քաղաքական պատվեր էր, և ըստ նրանց՝ Յայրապետյանը ապօրինի էր պահվում բանտախցում: Որպես փաստարկ հղում էր տարվում նաև ՌԴ կառավարության կողմից հաստատված հիվանդությանը ցանկին,

²⁰⁷ Տե՛ս «Worse Than a War: “Disappearances” in Chechnya—a Crime Against Humanity A Human Rights Watch Briefing Paper, March 2005» // <https://www.hrw.org/legacy/backgrounder/eca/chechnya0305/chechnya0305.pdf> (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

²⁰⁸ Տե՛ս «News about Igor Sutyagin, including commentary and archival articles published in The New York Times», 17.08.2010 // http://topics.nytimes.com/top/reference/timestopics/people/s/igor_v_sutyagin/index.html, «Igor Sutyagin is odd man out in spy swap deal» // <http://www.theguardian.com/world/2010/aug/17/igor-sutyagin-spy-swap> (վերջին դիտում՝ 10.05.2016թ.):

²⁰⁹ Տե՛ս «Вступило в силу решение Стасбурга, вступившегося за российского ученого Сутягина», 12.01.2012 // <http://www.newsru.com/russia/12jan2012/sut.html> (վերջին դիտում՝ 10.05.2016):

որոնցից առնվազն մեկի դեպքում չէր կարելի մարդուն, անկախ նրա կատարած հանցանքից, պահել բանտում: Դեպքը լայն քննարկում ստացավ տեղական և միջազգային ՉԼՄ-ներում: Հայաստանյան որևէ իրավապաշտպան ՀԿ ոչ մի կոչ չարեց, որևէ ստորագրահավաք չնախաձեռնեց և զերծ մնաց գնահատականներ տալուց: Հանուն արդարության նշենք, որ քաղաքացիական հասարակության որոշ ակտիվիստների կողմից իրականացվեց ակցիա, որի մասնակիցները, հասնելով ՌԴ դեսպանատուն, նամակ հանձնեցին դեսպանին: Շեշտենք, որ ակցիան կազմակերպեցին ոչ թե ՀՀ-ում իրավապաշտպան ՀԿ-ները, այլ ակտիվ քաղաքացիները: Նշված երկու օրինակների միջոցով փորձեցինք ներկայացնել ցանցային կազմակերպությունների և դոնորի սցենարով աշխատող տեղական ՀԿ-ների գործունեության առանձնահատկությունները:

Ըստիս, այսօրինակ դեպքերը կարող են հասարակության մեջ կարծիք ձևավորել, թե ՀԿ-ները «գրանտակերներ» են²¹⁰ և կառավարվում են դրսից հեռակառավարման վահանակի միջոցով՝ դառնալով այլ երկրների ներքին գործերին խառնվելու գործիքներ:

5. ՀՀ-ում պաշտոնապես գրանցված ՀԿ-ների ճնշող մեծ մասը գոյություն ունի միայն «դեյուրե»: Հաճախ պաշտոնապես գրանցված որոշ ՀԿ-ների հասցեներ փնտրելիս կամ հեռախոսահամարը հավաքելիս պարզվում է, որ հարցվողը տեղյակ չէ իր անունով գրանցված կազմակերպության և առավել ևս դրա գործունեության մասին: Անհասկանալի է, թե ինչու են գրանցել ՀԿ-ն, ինչու պատահական մարդու անունով: Շատ են նաև այն դեպքերը, երբ փաստացի չգործող ՀԿ-ները չեն լուծարվում, շարունակում են գոյություն ունենալ «թղթի վրա»: Նշենք, որ ՀՀ ՀԿ գործող օրենքով հստակեցված չէ, թե ինչպես պետք է տնօրինվի լուծարված ՀԿ-ի գույքը:

Այս առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կարելի է եզրակացնել, որ պաշտոնապես գրանցված ՀԿ-ների թվի բարձր

²¹⁰ Տե՛ս «ԱՄՆ ՄԶԳ ներկայացուցիչ. Չավեշտալի է, որ շատերը քննադատում են ՀԿ-ներին որպես գրանտակերների», 16.09.2014 // <http://www.panorama.am/am/news/2014/09/16/report/207585> (վերջին դիտում՝ 20.05.2016):

ցուցանիշը բուժորոշվին չի խոսում ՀՀ-ում ՔՀ կայացվածության մասին:

6. Ակտիվ գործող ՀԿ-ների ղեկավարների և անդամների մեծ մասն ունի կայուն քաղաքացիական դիրքորոշում, բարձր ինքնագիտակցություն, իրավասիրության զգացում և մտավոր ներուժ: Առավել ցածր մակարդակում է գտնվում նրանց կողմից ղեկավարվող ՀԿ-ների ինստիտուտի ուսուցողական զարգացումը:

Տիրապետելով օտար լեզուների և ունենալով համակարգչային իմացության բարձր հմտություններ՝ նրանք ամուր կապեր ունեն ոչ միայն տեղական մյուս ՔՀ-ների և ՀԿ-ների, այլ և իշխանության տարբեր օղակների ներկայացուցիչների հետ (օրինակ՝ «Սոցիոմետր», «Գելափ», «Կովկաս», «Սիվիլ իթաս», «Եվրոպական ինտեգրացիա», «Համալսարանական կրթության կանայք», «Կրթություն և առանց սահմանների» և այլն): Նրանք ցուցաբերում են հանրային մասնակցության, պատրաստակամության և քաղաքացիական նախաձեռնողականության բարձր մակարդակ: Այս ամենով հանդերձ, սակայն, ոչ բոլորն են պատրաստ իրենց ռեսուրսները տրամադրել հասարակական խնդիրների լուծմանը և պահանջմունքների բավարարմանը: Այս իրողությունը շատ հաճախ դրամաշնորհ տրամադրող կազմակերպության սեփական շահերի հետևանք է, որը ոչ միշտ է համընկնում մեր հասարակության առջև ծառայած խնդիրներին ու դրանց լուծման առաջնահերթությանը. հաճախ կարող են սխալ ընտրվել թիրախ խումբն ու լուծում պահանջող խնդիրները, իսկ ծախսված ռեսուրսները՝ դառնալ անարդյունավետ ու ոչ շոշափելի: Օրինակ՝ 2014 թ. «Համահայկական ծնողական կոմիտե» նախաձեռնող խմբի կողմից հանրությանը ներկայացվեց մի տեսանյութ, որտեղ 15-16-ամյա հայ աղջիկն Ազատության հրապարակում մասնակցում էր \$լեշմոբի՝ կազմակերպված «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի կողմից: Աղջիկը նստած տեղից վեր է կենում, դեն նետում տիկնիկները, ապա կտրում երկար վարսերը, մտիտով բեղեր նկարում դեմքին, դնում գլխարկն ու իր հետևից տանում նույն գործողությունը կրկնող այլ աղջիկների: Այս ակցիան բուն քննարկումների տեղիք տվեց, սակայն իրենց ծրագրի կարևորությունը հիմնավորելու համար «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի բերած փաստարկները որևէ քննադատության չէին

դիմանում: Այս դրամաշնորհը, որի չափը ոչ մի կերպ չհաջողվեց իմանալ, հայ հասարակության համար ոչ մի խնդիր չլուծեց, ավելին՝ գումարեց նորերը: Սակայն, մյուս կողմից, գուցե հենց դա էր դրամաշնորհի հատկացնող կազմակերպության ծրագիրը կամ նպատակը:

Միջազգային կազմակերպությունները հաճախ հրաժարվում են \$ինանսավորել ազգային շահեր քարոզող ՀԿ-ների ծրագրերը: Իհարկե 67 մեծ ցանկության դեպքում կարելի է համատեղել ազգայինն ու արևմտյանը կամ գտնել այն ռացիոնալ հատիկը, որի շուրջ կարելի է մանևրել:

7. ՀՀ հասարակական համակարգում վերջերս կարելի է նկատել ևս մեկ առանձնահատկություն. խոսքը նորաստեղծ երիտասարդական կազմակերպությունների մասին է: Այս ՀԿ-ները ամեն կերպ փորձում են մոտ գտնվել իշխանություններին՝ մի կողմից՝ որպես ՀԿ պետությունից հատկացվող դրամաշնորհներից օգտվելու, մյուս կողմից՝ ստեղծված կապերն օգտագործելով՝ նրանց շարքերում ընդգրկվելու համար («Սյունյաց արծիվներ», «Հայաստանի երիտասարդական հիմնադրամ», «Բազե», «Կրթությունն առանց սահմանների» և այլն):

Ասվածից կարող ենք եզրակացնել, որ ակտիվ երիտասարդների մի խումբ իշխանամերձ կամ իշխանական օղակներում հայտնվելու համար ստեղծում է ՀԿ-ներ: Հասարակական ոլորտում որոշ ուշագրավ միջոցառումներ իրականացնելուց հետո՝ ծառատուևկ, կամավորական աշխատանքներ, ընդդիմության հասցեին քննադատող ելույթներ, այս երիտասարդները իշխանության ոլորտում հայտնվելու խնդիրն են լուծում:

8. ՀՀ-ում ՀԿ-ների գործունեության ու գործառնության մշտադիտարկումները թույլ են տալիս դրանք դասակարգել ըստ ակտիվության աստիճանի՝ ա) գրեթե չգործող կամ պասիվ, բ) բավարար ակտիվ կամ ակտիվ, գ) առավել ակտիվ կամ հանրաճանաչ: Բազմաթիվ զեկուլյցների («ՀՀ հասարակական սեկտորի գնահատում», «ԶՀԿ կայունության ցուցանիշ. Հայաստան» և այլն) համաձայն՝ ՀԿ-ների մեծ մասը դեռևս գտնվում է գործունեության զարգացման փուլում: Ծատ ՀԿ-ների ղեկավար խորհուրդը փաստորեն չի կատարում իր գործառնայթները, ռազմավարական պլանավորումը պատշաճ կերպով

չի իրականացնում, ֆինանսական կայունության և կարողությունների պակաս կա. այս բոլոր խնդիրները ՅԿ-ների զարգացումը խոչընդոտող լուրջ բացեր են:

Գրեթե չգործող կամ պասիվ գործող ՅԿ-ները չունեն գրասենյակ, գույք, հիմնական աշխատակազմ: Ուշագրավ է, որ այսպիսի կազմակերպությունները հիմնականում գտնվում են մարզերում: Պայմանականորեն այս խմբին կարելի է դասել նաև նոր ստեղծվող ՅԿ-ները, որոնք դեռևս չեն հասցրել որևէ ծրագրով ինչ-որ չափով ճանաչված դառնալ հասարակության մեջ²¹¹:

Ակտիվ կամ բավարար չափով ակտիվ ՅԿ-ները, ի տարբերություն նախորդ խմբում դասակարգվածների, ունեն սեփական գրասենյակներ, հասցե, պաշտոնական էլեկտրոնային կայք, անհրաժեշտ թվով անդամներ²¹²: Դրանք բավականին հայտնի են հասարակությանը, ինչև ուղիղ համեմատական է նրանց իրականացրած ծրագրերի բերած որոշակի օգուտին: Բոլորովին այլ է պատկերը ակտիվ գործող ՅԿ-ների դեպքում: Նրանց անունը քաջ հայտնի է հասարակությանը ՉԼՄ-ների՝ առավել հաճախ լուսաբանումների շնորհիվ: Իրականացված ծրագրերի արդյունավետությունը բարձր է, իսկ դրանց մասին ողջ տեղեկությանը կարելի է ծանոթանալ համացանցային էլկայքերում: Այս ՅԿ-ների ակտիվ գործունեությունը մեծ մասամբ պայմանավորված է շոշափելի ֆինանսական ռեսուրսներով: Դրանց նախագահները սովորաբար ճանաչված մարդիկ են ոչ միայն ՅՅ-ում, այլ և տարածաշրջանում և արտասահմանում:

9. Մեզ անում ՅԿ-ների գործունեության արդյունավետության ու ակտիվության մասին կարելի է տեղեկանալ տեղական կամ միջազգային կազմակերպությունների ղեկույցներից, Յանրային խորհրդի ու ՄԻՊ-ի տարեկան հաշվետվություններից և այլն:

ՅՅ-ում գործող կազմակերպությունների գործունեության ուղղությունները կարելի է առանձնացնել ըստ ոլորտների՝ կրթական, բնապահպանական, իրավապաշտպան, երիտասարդության, կանանց հիմնախնդիրներով և այլն: Ծատ հաճախ միևնույն խնդիրներով զբաղվող ՅԿ-ները տեղեկություն չունեն միմյանց

²¹¹ Տե՛ս **Վարդանյան Թ.**, նշվ. աշխ, էջ 25:

²¹² Տե՛ս նույն տեղը, էջ 22:

գոյ ու թյան մասին, սակայն շատ հարցեր կարելի է լուծել համատեղ ջանքերով՝ գումարելով ռեսուրսները, անձնական կապերը, փորձն ու գիտելիքները, հմտություններն ու թիմային աշխատանքը: Սավկայում է, որ 34-ները ճիշտ չեն պատկերացնում իրենց տեղն ու դերը, հասարակական խնդիրների մասին տեղեկացված են ոչ թե սեփական ուսումնասիրություններից, այլ ուրիշ աղբյուրներից: Այս ամենի պատճառով հասարակությունն ինքը չի ճանաչում և, որ ավելի վատ է, չի վստահում 34-ներին՝ նրանց համարելով իշխանական կառույցների կցորդներ կամ արտասահմանյան կազմակերպությունների գործակալներ: Նշենք, որ հասարակական կարծիքի ուսումնասիրությունների տարբեր մշտադիտարկումները ցույց են տվել, որ այսօր մեր հասարակության համար առավել գերադասելի է ունենալ հզոր քաղաքական իշխանություն, քան կայացած 34 հատված²¹³:

10. Շատ հաճախ մեզանում՝ հատկապես երիտասարդների շրջանում, 34-ները ծառայում են որպես դրսում հայտնվելու «ցատկահարթակ»: 33-ում 34-ները ոչ միայն սնվում են օտարերկրյա դոնորներից, այլ և սերտորեն համագործակցում են նրանց հետ՝ իրականացնելով փոխանակման տարբեր ծրագրեր:

Այսպիսի ծրագրերը ենթադրում են շոշափելի ֆինանսական ռեսուրսներ և արտերկրում աշխատանք ձեռք բերելու հեռանկար: 34 անդամները հնարավորություն են ունենում ստանալ ու ֆինանսական միջոցներ՝ բարելավելով իրենց նյութական վիճակը՝ մինչև պետական աշխատանք գտնելը: Առաջին հայացքից այս գործընթացը կարելի է դրական համարել: Բացասական է, սակայն, այն, որ նախ՝ աշխատանքային տարիները չեն համարվում ստաժ, և երկրորդ՝ արտասահման մեկնողների շատ քիչ տոկոսն է վերադառնում²¹⁴:

11. 33-ում 34-ները մասնավոր հատվածից ֆինանսական կամ այլ օգնություն գրեթե չեն ստանում: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է նախ կարևորել ՔՀ դերը ժողովրդավարության ամրապնդման մեջ՝ նույն սկզբունքով շեշտադրելով ՔՀ կայացման

²¹³ Այդ մասին տե՛ս **Խուրշուդյան Ռ.**, Արդի հասարակության զարգացման ուղիները // «Հանրապետական», թիվ 6 (15), 2004:

²¹⁴ Տե՛ս **Վարդանյան Ռ., Ավետիսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 24:

գործընթացում ՅԿ-ների դերը: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՍՊ), որը բիզնես հատվածի օրակարգի անբաժան մասն է ամբողջ աշխարհում, դեռևս նոր զարգացող հայեցակարգ է Յայաստանում: Առևտրային հատվածի որոշ ներկայացուցիչներ երբեմն ԿՍՊ գաղափարը շփոթում են բարեգործության հետ²¹⁵, իսկ այն ձեռնարկությունները, որոնք որդեգրել են ԿՍՊ քաղաքականություն, ՔՅԿ-ներին չեն դիտում որպես լիարժեք գործընկերներ: Խոշոր ընկերությունները առավել հաճախ նախընտրում են սոցիալական և բարեգործական ծրագրեր իրականացնել՝ առանց ՔՅԿ-ներին որպես միջնորդ կազմակերպություն ընդգրկելու: Ընկերությունները կարծում են, որ շատ ՔՅԿ-ներ պատրաստ չեն բիզնես ոլորտի հետ հաղորդակցվելու և ավելի շատ մտածում են ֆինանսավորում հայթայթելու, քան առաքելություն իրականացնելու մասին²¹⁶:

Ինչպես պետության հետ համագործակցության դեպքում, այնպես էլ այստեղ ՔՅԿ-ների հանդեպ վստահության պակասը համագործակցության հիմնական խոչընդոտներից է: Յամաձայն ՔՅԿ-ներին տրված գնահատականի՝ մասնավոր հատվածի հետ համագործակցությունը ամենաթույլն է մյուս բոլոր դերակատարների հետ համեմատ՝ 10-ից 3,91 միավոր, որտեղ 10-ը համագործակցության ամենաբարձր մակարդակն է²¹⁷:

Վերջին 10 տարիներին հայաստանյան որոշ ՅԿ-ներ այս խնդիրը լուծելու համար արդեն այսօր քայլեր են ձեռնարկում կրթության ոլորտում՝ ոչ ֆորմալ կրթության մեջ ներառելով նաև ԿՍՊ-ի և գործարար էթիկայի վերաբերյալ բաղադրիչներ: «Երկրորդ սեկտորը պետք է ճիշտ գնահատի իրադրությունը և հասկանա, որ 3-րդ սեկտորի զարգացումը շահեկան է նաև իրեն»²¹⁸, -նշում է Գ. Պողոսյանը:

²¹⁵Տե՛ս **Թադևոսյան Մ., Զակոբյան Լ.**, Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն. Գործունեության նոր շրջանակ, // «Քառու նթերփարթ ինթերնեյշնլ», CIVICUS, Քաղաքացիական մասնակցության համաշխարհային միավորում: Եր., 2010:

²¹⁶ Տե՛ս «ՔՅԿ կայունության ցուցանիշ 2013. Յայաստան, ՔԶՅԿ/ԱՄՆ ՄԶԳ», Եր., հունիս, 2014:

²¹⁷ Տե՛ս «ՍՈՑԻՈՍԵՏԻ» անկախ սոցիոլոգիական կենտրոնի իրականացրած ուսումնասիրությունը («Եվրոպական ինտեգրացիա» ՅԿ-ի հետ համատեղ), Եր., 2014, էջ 39:

²¹⁸ Տե՛ս **Погосян Г.А.**, նշվ. աշխ., էջ 231:

Այս օրվա իրավիճակը բացառում է, որ 2-րդ հատվածը շահագրգռված կլինի համագործակցության եզրեր ունենալ ու 34-ների հետ: 34-ներն իրենք շատ հաճախ իրատեսություն չեն գնահատում իրենց ուժերը և չեն գիտակցում իրենց դերը՝ ինչն էլ պիտի մասնավոր հատվածն ու պետական մարմինները գնահատեն իրենց: Սա հասարակության մեջ կարծրատիպ է ձևավորում, թե 34-ներն ստանում են դրամաշնորհներ, գումարը ծախում, իսկ ժողովուրդը մնում է իր խնդիրների հետ միայնակ: Թեև այս օրվա ՌԴ-ն հեռու է 34 հատված-պետություն արդյունավետ համագործակցության օրինակ լինելուց, սակայն նախագահ Վ. Պուտինի ակնարկն այս առումով թույլ է տալիս դրական կանխատեսումներ անել նաև ԵԱՏՄ-ին անդամակցող երկրների համար. «Աշխարհը գլոբալացվում է: Սա իրողություն է, և ժողովրդավարական արժեքների ձգտող ոչ մի երկիր չի կարող խոսել զարգացման մասին՝ անտեսելով ՔՅ-ն: Առանց հասուն ՔՅ-ի մարդկանց հրատապ խնդիրների արդյունավետ լուծումն անհնար է»²¹⁹: Նա միաժամանակ նաև մտավախություն ունի՝ կապված որոշ 34-ների գործունեության հետ. «...մի շարք 34-ների համար գերակա խնդիր է միջազգային հեղինակավոր հիմնադրամներից ֆինանսներ ստանալը, մյուսների համար՝ կասկածելի խմբերի ու առևտրային շահերին ծառայելը այն դեպքում, երբ պետության և քաղաքացիների առջև ծառայած սուր խնդիրները նրանց կողմից մնում են անտեսված»²²⁰:

12. Գաղտնիք չէ, որ 34-ները նաև ժամանակավոր զբաղվածության խնդիր են լուծում: Սա առաջին հայացքից դրական է և անգամ ողջունելի: Կարևորելով դրականը՝ նշենք նաև որոշ բացասական կողմեր: Ընդգրկվելով տարբեր 34 շարքերում, որոշ դեպքերում նաև ոչ քիչ գումարներ վաստակելով՝ քաղաքացին սկսում է 34-ն համարել իր հիմնական աշխատավայրը: Սա մի կողմից շահագրգռում է 34 անդամին առավել լավ իրացնել իր ներուժն ու հնարավորությունները, սակայն մյուս կողմից խախտվում է թե՛ 34-ների, թե՛ հասարակական գործունեության տրամաբանությունն ու բովանդակությունը: 34-ում ընդգրկված մարդիկ իրականացնում են տարբեր ծրագրեր, որոնց մեծ մասը՝ դրսի դրամաշնորհի շրջանակներում և նրանց պատվերով:

²¹⁹ Տե՛ս «Послание Президента РФ Федеральному Собранию. Полный текст», 26.05.2004 // <http://pravaya.ru/expertopinion/116/594> (վերջին դիտում՝ 10.05.2016):

²²⁰ Տե՛ս նույն տեղը:

Մի կողմից կրկին արժևորվում են դրսի շահերն ու պահանջները, որոնք միշտ չէ, որ կարող են համընկնել մեր հասարակության խնդիրների հետ և առավել ևս բխել ազգային շահերից: Եվ երկրորդ՝ չունենալով այլ աշխատանք՝ քաղաքացին իր ողջ մտավոր, հաճախ նաև ֆիզիկական ներուժը ներդնում է ծրագրում՝ գումարների դիմաց: Համատարած գործազրկության պայմաններում քաղաքացուն քիչ է մտահոգում, թե ծրագիրն ինչ չափով կամ ինչ ազդեցություն կունենա հասարակության վրա, արդյո՞ք այդ տարիները կգրանցվեն աշխատանքային գրքույկում, թե՞ ոչ:

13. Միջազգային և տեղական տարբեր կազմակերպությունների ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում ՀԿ-ները հաճախ անձնավորվում են տվյալ կազմակերպության ղեկավարի կամ նախագահի հետ²²¹: Այս հանրային ընկալումը մեզանում բավական տարածված է նաև քաղաքական կուսակցությունների առումով: Սակայն այս մոտեցումը չի սահմանափակվում միայն հանրային ընկալմամբ: Այն առավել ակնհայտ է ՀԿ ներսում իրականացվող գործնական քաղաքականությամբ, մասնավորապես որոշումներ ընդունելիս, հասարակական միջոցառումներին ներկայանալիս: 2010 թ. «Կովկաս» ՀԿ-ի կողմից իրականացված հետազոտությունները փաստում են, որ ՀՀ ՔՀԿ-ների, ՀԿ-ների անդամների՝ իրենց կազմակերպություններում որոշումներ ընդունելու գործընթացների վրա ազդելու ցուցանիշը, սեփական գնահատականներով, բավականին ցածր է. «Համապատասխանաբար՝ 2,1 և 2,0 միավոր՝ 5 հնարավորից»²²²:

2013 թ. ՀՀ ՀԿ քաղաքացիական հարցերի կայացման հանձնաժողովը մշակեց «ՀՀ-ում ՔՀ կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգը»: Բազմաթիվ խնդիրների և բացթողումների հնարավոր լուծումների շարքում կարելի է գտնել նաև ըստ էության կենսունակ առաջարկություններ: Առաջիկայում ՀԿ-ների կազմակերպչական

²²¹ Տե՛ս «ՔՀԿ կայունության ցուցանիշ. Հայաստան, USAID, CDPF, 19-րդ խմբագրություն», Եր., 2012, հունիս, էջ 3-4:

²²² Տե՛ս «Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները: Չեկոյց սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերաբերյալ»: UNFPA, «Կովկաս» հասարակագիտական հետազոտություններ, Եր., 2011, էջ 64:

կարողությունների և հմտությունների զարգացման հիմնական ուղղություններից մեկն էլ պետք է լինի ներքին ժողովրդավարության և մասնակցային մեխանիզմներին կենսական նշանակություն հաղորդելը և սեփական անդամների համար ևս հաշվետվողականության և թափանցիկ աշխատելաճի մակարդակի բարձրացումը²²³:

14. Միջազգային կազմակերպություններից և այլ դոնորներից դրամաշնորհ ստացող ՀԿ-ները պառտած հաշվետվություններ և հանգամանալից գեկոյցներ են ներկայացնում իրենց իրականացրած ծրագրերի և ֆինանսական միջոցները ծախսելու վերաբերյալ: Հատկանշական է, որ ՀԿ-ների մասին ՀՀ օրենքում նշվում է, որ գործող կազմակերպությունը պարտավոր է առնվազն երկու տարին մեկ անգամ ՀԿ-ի գործունեության, գույքի օգտագործման, իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել ընդհանուր ժողովին²²⁴: Օրենքում չի հստակեցվում, թե այդ հրապարակայնությունն ապահովելու համար առավել ընդունելի և իրավաբանորեն ճիշտ ձևը որն է: Բացակայում է նաև հաշվետվությունների համար մշակված և կիրառվող ընդունելի ձևանմուշը:

ՀԿ-ների էլեկտրոնային պաշտոնական էջերի և azdarar.am կայքի թռուցիկ ուսումնասիրությունից անգամ երևում է, որ տեղական կազմակերպությունները առանձնապես ոգևորված չեն հաշվետվություն ներկայացնելու՝ հատկապես «դեպի վար» հրապարակայնությունն ապահովելու համար: ՀԿ-ները պարբերաբար և հանգամալից հաշվետվություններ են ներկայացնում դեպի «վեր»՝ դոնորներին և պետական մարմիններին, բայց թերևս ում են կամ դժկամ են հասարակության, շահառուների, իսկ որոշ դեպքերում՝ նաև սեփական անդամների նկատմամբ:

15. ՀԿ-ների առաջնային հիմնախնդիրներից է ֆինանսական կենսունակության ու կայունության ապահովման մեխանիզմների

²²³ Տե՛ս «ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգ /նախագիծ/,» էջ 23:

²²⁴ Տե՛ս ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին» (ընդունվել է 04.12.2001թ.) // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1295> (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

ծնավորումը²²⁵: Ըստ պաշտոնական տվյալների՝ վերջին երեք տարիների ընթացքում ՀՀ-ում գործող ՀԿ-ների 75 %-ը որպես ֆինանսավորման հիմնական աղբյուր նշել է միջազգային կազմակերպությունները, 14 %-ը՝ պետական մարմինները, 11%-ը՝ նվիրատվություններն ու անդամավճարները²²⁶:

Խնդիրը տեղական ՀԿ-ներին մշտապես կողմնորոշում է դեպի արտաքին կառույցների դրամաշնորհներ: Այս իրողությունը միշտ արդիական է եղել ՀԿ-ների համար՝ սկսած 1988-ական թթ. մինչ օրս²²⁷: ՀԿ-ների կենսունակության և գործունեության իրականացման համար ֆինանսավորման հիմնական հույսը Հայաստանում դեռևս մնում են դրսի դրամաշնորհները: Շոշափելի արդյունքներով ծրագրերի մեծ մասն իրականացվում է դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհների հաշվին և միջոցով: Դրամաշնորհներ տրամադրում է նաև պետությունը: Սակայն այս գործընթացն աչքի է ընկնում խիստ կառավարելի քաղաքականությամբ, թափանցիկ ընթացակարգերի բացակայությամբ, տրամադրվող դրամաշնորհների և իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկության դժվար մատչելիությամբ և միայն «յուրայիններին» տրամադրելու «մարտավարությամբ»²²⁸:

16. ՀՀ-ում չի գործում ՀԿ-ների տվյալների ամբողջական շտեմարան: Գործնականում գրեթե անհնար է այս կազմակերպությունների գործունեության ուղղությունների վերաբերյալ որևէ տեղեկություն գտնել: Անհրաժեշտություն է առաջանում օգտվել ու ամենատարբեր ցաքուցրիվ աղբյուրներից: Առկա բացը քիչ թե շատ է լրացնում է Spyur.am կայքը:

ՀԿ-ՀԿ համագործակցությունն ամրապնդելու, հանրային քննարկումներին կամ լսումներին բոլոր շահագրգիռ ՀԿ-ներին մասնակից դարձնելու և ի վերջո միևնույն գործով զբաղվող ՀԿ-ներին իրար հետ «ծանոթացնելու» համար առաջարկում ենք ստեղծել առցանց շտեմարան, ուր պարտադիր տեղ կգտնեն ՀՀ-ում պաշտոնապես

²²⁵ Տե՛ս «Հայաստանի քաղաքացիական հասարակությունը: Անցումային փուլից մինչև համախմբում», Վերլուծական զեկույց», Եր., 2010, էջ 44-46:

²²⁶ Տե՛ս **Սարգսյան Ս., Հակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 7:

²²⁷ Տե՛ս «ՀՀ օրենքը Հասարակական կազմակերպությունների մասին» (հոդված 15, կետ 1, ենթակետ 6) // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1295> (վերջին ղիտում՝ 14.04.2016թ.):

²²⁸ Տե՛ս «ԹՀ կառույցների պետական ֆինանսավորման մեխանիզմները ՀՀ-ում»: Հետազոտական արդյունքների վերլուծություն: USAID, PFCS, CDPF, Եր., 2012, էջ 5-9:

գրանցված, գործող բոլոր ՀԿ-ները՝ սեփական տվյալների ամբողջական ընդգրկմամբ:

17. Ըստ պաշտոնական տվյալների՝ 2010 թ. ՀՀ-ում գրանցված էր 66 կրոնական կազմակերպություն²²⁹: Ցավոք, 2011-2015 թթ. այս առումով համապարփակ վերլուծություններ և զեկոլոյցներ չկան: Վերջինը՝ «Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում» իրականացվել է 2010 թ. ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի կողմից²³⁰: Սակայն խնդիրը գրանցված կրոնական կազմակերպությունների քանակը չէ և ոչ էլ անգամ դրանց նկատմամբ հասարակության հանդուրժողականության աստիճանը: Խնդիրն այն է, որ թերի օրենսդրության հետևանքով որոշ կրոնական կազմակերպություններ պետականորեն գրանցվում են որպես հասարակական կազմակերպություն²³¹: Սա ևս ՀՀ-ում ՀԿ կառուցվածքային գործառնական առանձնահատկություններից է և ունի թաքնված ռիսկեր թե՛ հասարակության, թե՛ ազգային անվտանգության և թե՛ ՀԿ-ների հեղինակության համար:

Ամփոփելով ՀՀ-ում ՀԿ-ների գործունեության առանձնահատկությունները, նշենք՝

1. որքան էլ զարմանալի թվա, սակայն նույնիսկ խորհրդային տարիներին ոչ կառավարական կազմակերպությունները իրենց գործունեությամբ կարողացել են հիմք դնել և հնարավորինս զարգացնել Սփյուռքի հետ կապերը: Մասնավորապես, շնորհիվ արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և սփյուռքահայության հետ կապերի կոմիտեների գործունեության՝ արտերկրի հայ էթնոսի մի ստվար զանգված կարողանում էր հաղորդակից դառնալ ազգային-մշակութային արժեքներին:
2. Ֆինանսական հոսքերի կամ միջազգային կազմակերպությունների դրամաշնորհների հետ միաժամանակ ՀՀ են ներխուժում նաև մեր հասարակությանը խորթ, երբեմն նաև վտանգավոր «արժեքներ»: Այս միտումը բացասաբար է անդրադառնում ՀԿ հատվածի վերաբերյալ

²²⁹ Տե՛ս «ՀՀ-ում գրանցված կրոնականական կազմակերպությունների ցանկ» // http://www.gov.am/u_files/file/kron/Tsutsak2-%20herakhos-new.pdf (վերջին դիտում՝ 20.05.2016թ.):

²³⁰ Տե՛ս «Կրոնական հանդուրժողականությունը ՀՀ-ում»: Եր., ՀՀԺԿ, 2014:

²³¹ Տե՛ս «Կրոնի հարցերով լիազորված պետական մարմնի գործառնականությունը խիստ սահմանափակ են», 31.05.2010 // <http://armenpress.am/arm/print/605451> (վերջին դիտում՝ 10.05.2016թ.):

հանրային ընկալման, հասարակության գնահատականի և իշխանության գործընկեր դառնալու գործընթացի վրա. Եվրոպական որոշ արժեքային համակարգերի «ներմուծումը» հայ հասարակության մեջ լուրջ մարտահրավեր է ՅՅ-ում ազգային արժեքների պահպանմանը:

3. ՅԿ-ները սնվում են ոչ թե ներքին, այլ հիմնականում արտաքին աղբյուրներից: Այս կապակցությամբ Սթիվեն Սեմփսոնը նշում է հետևյալը. «ՅԿ լիդերները արևմտյան ծրագրերի պահաջներով ձեռք են բերում հմտություններ, բայց ձեռք չեն բերում արժեքներ... Խնդիրն իրականում այն է, որ «մենք» «մեր արժեքները» դնում ենք «իրենց» վրա, այլ այն, թե ինչու են «նրանք» դա ընդունում: Այս հարցն ունի ցիկլիկ պատասխան՝ փողի դիմաց ու փողի համար»²³²: Այս իրողության մեջ կան թե՛ վտանգներ, թե՛ մարտահրավերներ, թե՛ լատենտ ռիսկեր: Սովորաբար ՅԿ-ներում ներգրավված են համեմատաբար ակտիվ ու կիրթ երիտասարդները: Նրանց մեծ մասը դրամաշնորհների միջոցով լուծում է կենսական խնդիրներ: Իսկ այս պարագայում նրանց քիչ է մտահոգում դրամաշնորհի՝ վտանգ կամ մարտահրավեր պարունակելու փաստը: Սա մեծ առումով կարող է դառնալ ազգային անվտանգության խնդիր, իսկ ավելի նեղ դիտանկյունից այս իրողությունը խախտում է ՅԿ-ի ողջ տրամաբանությունը. ՅԿ-ն վերածվում է հիմնական աշխատավայրի:
4. ՅԿ-ների գործունեությունն ավելի նկատելի, հասցեական և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ են լուրջ օրենսդրական փոփոխություններ, որոնց մասին բարձրաձայնում են հենց ՅԿ-ները: Յարկ է նշել, որ ՅՅ-ում հատկապես վերջին տարիներին սնկի պես աճող ՅԿ-ների համար խթան են հանդիսացել օրենսդրական դաշտի լրացումներն ու փոփոխությունները, ինչ պես նաև պետություն-ՅԿ հատված գործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված Յանրային խորհրդի և Քաղաքացիական ֆորումի ստեղծումը:
5. ՅԿ-ների առավել կայացած կողմը հատկապես դրանց փորձագիտական ու վերլուծական հմտություններն են, թեև այս գործոններն ավելի շատ վերաբերում են աշխատակազմի մասնագիտական

²³² Sampson S., Too much Civil Society?, Denmark, Danish Institute for Human Rights, 2004, էջ 208 -212:

կարողություններին,
կարողություններին:

քան

ՅԿ

ինստիտուցիոնալ

2.4. Հասարակական կազմակերպությունների կայացման մարտահրավերները

ՅՅ-ՈԼՄ

Հասարակության բարեկեցությունը ենթադրում է անձի և քաղաքացու պահանջմունքների ու շահերի առավելագույն բավարարման հնարավորությունների առկայություն: Ժողովրդավարության ուղին որդեգրած երկրներում իշխանություն-հասարակություն կապի ձևավորման ու երկխոսությանն է միտված պետության մեջ առկա քաղաքական և սոցիալական բազմաբնույթ ինստիտուտների ձևավորումը: Քաղաքակրթության զարգացման ներկա փուլում բարեկեցիկ կյանքի ապահովման, մարդու շահերի արտահայտման ու իրականացման առավել կատարյալ մոդելը թերևս պետք է փնտրել ՔՀ գաղափարի շրջանակներում: ՔՀ առանցքային դեր է խաղում ժողովրդավարության և օրենքի իշխանության ամրապնդման հարցում: Հնարավոր խնդիրների լուծման ամենաարդյունավետ, հասցեական և ֆինանսական քիչ ծախսեր ենթադրող ինստիտուտները ՔՀ ոլորտից են՝ ի դեմս ՅԿ-ների²³³:

Չ.Կեզլին և Գ.Ռայմոնդը 20-րդ դարի վերջն ու 21-րդ դարի սկիզբը որակել են որպես համաշխարհային պատմության արմատական փոփոխությունների սկիզբ՝ հաշվի առնելով 3-րդ հատվածի կառույցների և հատկապես ՅԿ-ների հսկայական աճը տեղական և

²³³ Տե՛ս **Հովհաննիսյան Հ.**, «Քաղաքացիական հասարակություն և քաղաքական ինստիտուտները և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը համակարգի ներդրանակ զարգացման ու անվտանգության տեսանկյունից», Իմաստասիրական անդրադարձներ, գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2004, էջ 33:

միջազգային մակարդակներով²³⁴: Պետական և հանրային քաղաքականությունների ձևավորման մեջ ՀԿ-ների դերը՝ որպես ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված գործիքակազմ, կասկած չի հարուցում:

Մեզանում ՔՀ անհրաժեշտության և կարևորության մասին սկսեցին խոսել 20-րդ դարի 90-ականներին: Խորհրդային Միության փլուզումից հետո միջազգային կազմակերպությունները ձեռնամուխ եղան ՔՀ ինստիտուտների միջոցով ժողովրդավարությունը զարգացնելու գաղափարն իրականացնելուն՝ հավատալով, որ ուժեղ ՔՀ կարող է դառնալ այն գործիքը, իսկ նրա ինստիտուտները՝ այն գործիքակազմը, որն առավել բարձր հիմքերի վրա կդնի հանրային կառավարումը, կնպաստի քաղաքական մասնակցությանը և սոցիալական վստահության մեծացմանը: Գործընթացի մեկնարկը ենթադրում էր ՀԿ աջակցություն և նրանց թվի արագ մեծացում հետխորհրդային տարածքում²³⁵:

Հետխորհրդային երկրներից շատերում, իսկ Հայաստանն այս հարցում բացառությունն է, մարդկանց հասարակական-քաղաքական կյանքում ընթացող բարեփոխումները դեռևս անհասկանալի և վերացական են ոչ միայն դրանց հեղինակների, այլև ոլորտի փորձագետների և վերլուծաբանների համար: ՔՀ-պետությունն կապի ամրապնդմանն ուղղված բարեփոխումներն ու ծրագրերը, որոնք հաջորդում են իրար այս կամ այն միջկառավարական պայմանագրերով, պարզապես մոդելներ են, որոնք առայժմ լուրջ ձեռքբերումներ են գրանցել մասնավորապես արևմտյան երկրներում: Սակայն ակնկալել, որ դրանք կունենան միևնույն արդյունքը նաև քաղաքական ցածր մշակույթ ունեցող երկրում, քիչ հավանական է: Հայաստանը, ինչպես նաև նախկին կոմունիստական այլ երկրներ, լուրջ խնդիրներ, բացթողումներ և համակարգային-հայեցակարգային թերություններ ունեն ոչ միայն քաղաքական դաշտում, այլև ողջ հասարակական համակարգում առհասարակ:

²³⁴ Տե՛ս **Волков Ю., Мостовая И.**, Социология: Учебник для вузов /Под ред. проф. В. И. Добренёва/. М., Гардарики, 1998:

²³⁵ Տե՛ս **Ishkanyan A.**, (Re)claiming the emancipator potential of civil society: a critical examination of civil society and democracy building programs in Armenia since 1991, *Armenian Review*, 51 (1-4), 2009, էջ 9-34:

Յայ աստանի ժողովրդավարացման գործընթացում ՔՅ-ն՝ ի դեմս ՅԿ-ների, լուրջ դերակատարում ունի: ՅՅ-ում անկախության տարիների ընթացքում ՔՅ հաստատության ներքին ձևավորման առումով լուրջ քայլեր են իրականացվել, սակայն շոշափելի ձեռքբերումները շատ չեն²³⁶: Սկսելով Յայ աստանում ՔՅ հատվածի զարգացման մասին իր ուսումնասիրությունները 1991թ.-ից՝ Ա. Իշխանյանը նշում է, որ գործընթացին ուղղված քաղաքականությունների և փորձերի վրա մեծապես ազդել է Սառը պատերազմի գաղափարախոսությունը: Կոմունիզմի փլուզումից հետո պետք էր «մաքրել» հասարակական դաշտը դրամացորդներից՝ իրական ժողովրդավարության հասնելու համար: ՅՅ-ում սա հանգեցրեց յուրահատուկ ՔՅ մոդելի, որն Իշխանյանը անվանում է «ՅԿ-ացում»: Իր խոսքն ավելի պատկերավոր դարձնելու համար Իշխանյանը հայաստանյան ՅԿ հատվածը համեմատում է արևմուտքին և հատկապես ԱՄՆ-ին բնորոշ սննդի հետ՝ դրանք անվանելով «գենետիկորեն մշակված» և «աճի հորմոններով սնուցված» կառույցներ: Այսպիսի իրավիճակ ապահովում են միջազգային կազմակերպությունները: Բնական պայմաններում Յայ աստանը չէր ողողվի ՅԿ-ներով: Ա.Իշխանյանի ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ մենք այսօր ունենք քիչ թե շատ ուժեղ ՅԿ դաշտ, սակայն այն չի ուժեղացնում ՔՅ: Անշուշտ, հանրային կառավարման և զարգացման ասպարեզում ՅԿ-ների դերի կարևորությունն աճում է ամբողջ աշխարհում: Սակայն այս իրավիճակն արհեստական է և չի բխում հասարակական համակարգի շահերից:

ՅՅ-ում ՔՅ պատմության վերաբերյալ կատարվում մոտեցում: Առաջինի դեպքում այն դիտարկվում է բավականին երիտասարդ հասկացություն, որի հիմքերը դրվել են 1988թ.-ին: Մյուս մոտեցումը ՔՅ դիտարկում է ավելի լայն շրջանակներում՝ որպես հասարակության ինքնակազմակերպվող և ինքնաղեկավարվող կառույցների ամբողջություն: Այն ներառում է եկեղեցին, ընտանիքը, ֆիդայական շարժումը, ավանդական կուսակցությունները, ՅՕՄ-ը, ՅՕՖ-ը, ինչպես նաև արհեստակցական

²³⁶Տե՛ս «ՅՅ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգ /նախագիծ/», էջ 1:

միավորումները: Ի դեպ, այս մոտեցումն ընդունելի է նաև մեր երկրում իրենց առաքելությունն իրականացնող մի շարք միջազգային կազմակերպությունների մասնաճյուղերի համար (ԵԱՀԿ, ՄԱԿ, ԱՄՆ ՄԶԳ): Ըստ CIVICUS-ի 2010 թ.-ի վերլուծական գեկույցի՝ Չայաստանում ՔՅ պատմությունը կարելի է համարել կարճ կամ երկար՝ կախված ընդգրկման մոտեցումից: Սակայն ժամանակակից ընկալմամբ, որի հիմքում ՔՅ-ի՝ որպես ժողովրդավարացման գործակալի համընդհանուր ընդունելությունն գտած արևմտյան մոդելն է, ՉՅ-ում այն նոր երևույթ է: Այսպիսի ՔՅ Չայաստանում տեղ գտավ միայն 1980-ական թվականների վերջում: Սակայն եթե ՔՅ դիտարկենք որպես համատեղ, համայնական կյանքի դրսևորում պետությունից դուրս, ապա հստակ կարելի է պնդել, որ այն ունի երկար պատմություն²³⁷: Այս համատեքստում բավականին հետաքրքիր զարգացում է ապրել հայ հասարակությունը և հասարակական համակարգը:

Արհմիությունների առաջացումը Եապես պայմանավորված էր հասարակության մեջ արտադրական հարաբերությունների զարգացմամբ, որոնք պաշտպանում էին աշխատողների շահերը: Աշխատավորների իրավունքները պաշտպանելու համար ստեղծվում էին արհմիություններ, որոնք գործում են պետական իշխանությունից անկախ և հետևում, որ չոտնահարվեն աշխատողների իրավունքները: Ի դեպ, ժամանակակից հասարակություններում, հատկապես Արևմուտքում, ուր դասական իմաստով կայացել է քաղաքացիական հասարակությունը, արհմիությունների դերը իրապես հսկայական է²³⁸:

Ժամանակակից արևմտյան երկրների արհմիությունների և ՔՅ այլ սոցիալական ինստիտուտների \$ոնին, որոնք երրորդ

²³⁷ Տե՛ս «Չայաստանի քաղաքացիական հասարակությունը: Անցումային փուլից դեպի համախմբում: Վերլուծական գեկույց», Եր., 2010, էջ 25:

²³⁸ Ավելի մանրամասն տե՛ս **Ալեքսանյան Ա. Ս.**, Սոցիալական գործընկերությունը քաղաքացիավարական սոցիալական պատասխանատվության համակարգում // Բանբեր Երևանի համալսարանի Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 2010, № 132.6, էջ 24-36, **Ալեքսանյան Ա. Ս.**, Սոցիալական գործընկերության հարցի շուրջ // Բանբեր Երևանի համալսարանի Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, 2010, № 132.5, էջ 5-14, **Ալեքսանյան Ա. Ս.**, Չեխոսլովակիայի արհեստակցական միությունները քաղաքացիավարական ժողովրդաշխանության գործուն // Գիտաժողովի նյութեր: Եր., ԼՂՅԿ, Մ.Մաշտոց համալսարան, 2011, էջ 20-29:

հատվածի բաղկացուցիչ մաս են, դիտարկենք հայրենական արհմիությունների նախատիպն ու կառուցվածքը:

Հայաստանում դասական իմաստով արհմիությունները ձևավորվել են դեռևս 1905-1907թթ.-ին և գոյություն են ունեցել Խորհրդային Միության ամբողջ ժամանակահատվածում: Խորհրդային կարգերի փլուզումից հետո՝ նոր քաղաքական ռեժիմի ձևավորմանը զուգընթաց, տեղի ունեցան մի շարք փոփոխություններ: Դրանք հասարակական կյանքի տարբեր ոլորտներում բարեփոխումներ կատարելու անհրաժեշտությունից բխող գործընթացներ էին, որոնք ժողովրդավարացման ուղին բռնած երկրներում ՔՀ կայացման համար պարզապես անխուսափելի են: Դրանից անմասն չմնացին նաև արհմիութենական համակարգը և գործունեությունը:

Պետականության բացակայությունը և երկար տարիներ օտար լծի տակ գոյատևելը իրենց կնիքն են թողել հայ ժողովրդի մտածելակերպի և աշխարհայացքի վրա: Սա է այն հիմնական պատճառը, որ այսօր մեր հասարակությունը շատ հաճախ ստիպված է առնչվել այնպիսի խնդիրների հետ (որոշումների ինքնուրույն ընդունում, մասնակցություն հանրային քաղաքականության մշակմանը, գենդերային հիմնախնդիրներ, ընտրություններ և այլն), որոնք բավականին տնական ժամանակահատված բացակայել են մեր կենցաղից, առօրյայից և արժեհամակարգից:

Հայ ժողովուրդը հին ժամանակներում ունեցել է հասարակային դասեր, երիտասարդական միություններ, համքարություններ և այլ կազմակերպություններ: Դրանցից հատկանշական է հայ իրականության մեջ «Թուխ մանուկներ»²³⁹ կազմակերպությունը, որ ունեցել է հստակ նպատակ՝ հասարակությանը տալ լիարժեք, առողջ, խիզախ, խելացի սերունդ²⁴⁰:

Արհեստավորները հասարակության այլ շերտերի համեմատությամբ միշտ էլ որոշակի արտոնություններ են ունեցել (նրանք իրենք էին իրացնում իրենց արտդրանքը) տարբեր երկրներում և պատմական տարբեր ժամանակահատվածներում, սակայն

²³⁹ Տե՛ս **Մնացականյան Ա. Շ.**, «Թուխ մանուկ» հոլշարձանների մասին // Պատմաբանասիրական հանդես, 2001, № 2, էջ 189-204:

²⁴⁰ Տե՛ս **Հմայակյան Ջ.**, «Թուխ մանուկների» պաշտամունքը և միջնադարյան Հայաստանի արհեստակցական միությունները, // ՀՀ ԳԱԱ Արևելագիտ. ին-տ, Հոդվ. ժող.: Մերձավոր Արևելք (III): Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, 2006, էջ 18:

կան վկայ ու թյ ու ններ, որ նրանք, այնուամենայնիվ, ֆեոդալների, իշխանների և վաշխառուների կողմից ենթարկվել են շահագործման:²⁴¹

Մի ության ներկայացուցիչներն ակտիվ դերակատարում են ունեցել բնակչության հասարակական կյանքում՝ հոգևոր-մշակութային ոլորտից մինչև երկրի պաշտպանություն: «Թուխ մանուկների» ինստիտուտը, ըստ էության, հիմք է հանդիսացել միջնադարյան Յայաստանի մեկ այլ սոցիալ-հասարակական կառույցի՝ համքարության ստեղծման համար:

Բնական է, որ անհրաժեշտություն էր առաջացել միասնական պայքար մղելու կեղեքիչների դեմ. ահա այս պայմաններում էլ ստեղծվեցին համքարությունները՝ որպես արհմիությունների նախատիպ: Ըստ աղբյուրների՝ 9-14-րդ դդ-ում Պարսկաստանում և Փոքր Ասիայի այլ երկրներում արդեն կայացած էին և գործում էին համքարական կազմակերպություններ, որոնց հետառևտրական ակտիվ հարաբերություններ են ունեցել նաև Յայաստանի արհեստավորները, և որ նույն պատմական ժամանակահատվածում Յայաստանի գլխավոր քաղաքներում՝ Դվինում, Անիում, Կարսում և այլն, նույնպես գոյություն ունեին նման կազմակերպություններ: Միջնադարյան աղբյուրներում մի շարք կարևոր տեղեկություններ են հաղորդում համքարական կազմակերպությունների և տվյալ արհեստավորական խմբերի փոխհարաբերությունների, իրավական կանոնների, սոցիալական հարաբերությունների և գործունեության մասին:

Ակադեմիկոս Յ.Մանանդյանն իր՝ միջնադարյան քաղաքներին և արհեստներին վերաբերող ուսումնասիրություններում նշում է, որ Բագրատունիներից առաջ Յայաստանում, ինչպես նաև Արևելքի քաղաքներում ձևավորվել են արհեստավորների թաղեր, դասեր և համքարական միություններ:

Ա.Յակոբովսկին, որը Արևելքի պատմության գիտակներից մեկն է, իր աշխատություններից մեկում՝ «Федеральное общество Средней Азии и его торговые связи с Восточной Европой в X-XV вв», նշում

²⁴¹ Տե՛ս **Աբրահամյան Վ.**, Արհեստները և համքարական կազմակերպությունները Յայաստանում IX-XIII դդ-ում, Եր., 1946, էջ 122:

Է.«Չազիվ թե կարելի լինի տարակուսել այն հարցում, որ Միջին Ասիայի արհեստավորները 10-րդ դարում արդեն միավորված էին համքարությանների մեջ»²⁴², այնուհետև, շարունակելով միտքը, նա նշում է՝ 10-րդ դարակազմում Լևոն Իմաստունի Էդիկտում հիշատակված է առևտրականների և արհեստավորների 22 միության և համքարություն:

14-րդ դարի պատմիչ Իբն-Բատուտան իր աշխատությունում գրում է, որ պատմական Չայաստանի տարածքում (մասնավորապես՝ Սվազում) նա հանդիպել է երիտասարդ արհեստավորների, որոնք թեպետ իրենց միությունը կազմել էին միևնույն արհեստի արտադրության հիման վրա, սակայն այնուհետև շատ հեռու են գնացել. դարձել էին հասարակական ուժ, խառնվում էին հասարակության քաղաքական կյանքին և հաճախ հանդուրժելով անարդարությունները՝ «...համառ կռիվներ էին մղում ոչ հաճելի իշխանությունների դեմ»²⁴³:

Ինչպես եվրոպական շատ երկրներում, այնպես էլ Չայաստանում, համքարությունների (ազգային յուրօրինակ արհմիություններ) առաջացումը պայմանավորված էր ֆեոդալական քաղաքի արտադրական և սոցիալական հարաբերություններով. արհեստավորական կազմակերպությունների ստեղծման անհրաժեշտությունը ուղղված էր շահագործող ֆեոդալների դեմ և նպատակ ուներ պաշտպանելու իրենց շահերը ֆեոդալների ոտնձգություններից: Չայտնի է, որ 18-19-րդ դարերում արհեստավորական կազմակերպությունները Արևմտյան Չայաստանում կոչվել են Էսնաֆություններ, իսկ Արևելյան Չայաստանում՝ համքարություններ: Սակայն նրանք իրենց գրավոր կանոնագրերի մեջ շարունակում են պահպանել «եղբայրություն» անվանումը: Այս կազմակերպություններն ունեին կանոնակարգ, ուր մանրակրկիտ նշված էին բոլոր անդամների պարտավորություններն ու իրավունքները, անդամավճարի չափը և կամավոր անդամակցության սկզբունքը:

²⁴² Տե՛ս Якубовский А., Федеральное общество Средней Азии и его торговые связи с Восточной Европой в X-XV, էջ 5:

²⁴³ Տե՛ս Աբրահամյան Վ., նշվ. աշխ., 1946, էջ 125:

Բացի կանոնակարգից, արհեստավորական միությունները ղեկավարվել են նաև ազգային ավանդույթներով և սովորույթներով. այդ մասին է վկայում 19-րդ դարի 1 կեսին պատկանող «Կանոն ոսկերիչ արհեստավորաց» փաստաթուղթը²⁴⁴, ուր կարևորվում է նաև սեփական շենք ունենալու գաղափարը, որտեղ ժամանակ առ ժամանակ պետք է ժողովներ գումարվեին²⁴⁵:

1280թ. Երզնկայի եղբայրության կանոնադրության հայտնաբերումը պատմաբան Լ. Խաչիկյանի կողմից շատ հարցերի վրա լույս սփռեց միության ներսում եղած հարաբերությունների առումով: Ուսումնասիրելով փաստաթուղթը՝ Խաչիկյանը գրում է. «Շարադրված տվյալներով, որքան էլ դրանք սուղ և ակնարկային լինեն, թվում է, թե կարելի է ապացուցված համարել, որ դեռևս 12-րդ դարում Հայաստանի քաղաքներում կային կազմակերպություններ, որոնք միավորում էին քաղաքի արհեստավորական և առևտրական շերտերին, կազմակերպում էին պայքար ընդդեմ «բռնավորների», օգնում էին տնտեսապես քայքայված ընկերոջը, զորավիգ էին լինում միմյանց քաղաքական, հասարակական և տնտեսական գործունեության բոլոր բնագավառներում: Նրանք միաժամանակ նաև կարևոր դեր էին խաղում որպես զինված ուժ»²⁴⁶:

Անհրաժեշտ է նշել արհեստավորական միությունների և համքարությունների դերը նաև քաղաքների պաշտպանության գործում: Նրանք ոչ միայն ամենախոշոր մասնակցություն են ցուցաբերում քաղաքների, պարիսպների ամրապնդման գործում, այլ նաև անհրաժեշտության դեպքում արտադրում էին պահանջվող զենքը, քաղաքապահ զորքերի հետ միասին վճռական դեր էին կատարում քաղաքների պաշտպանության գործում թե տեղական և թե մանավանդ օտար ռազմական ջոկատների պարբերական ասպատակություններից:

Համքարությունները՝ որպես ռեալ հասարակական ուժ, հակադրվում էին ֆեոդալներին և նրանց ձեռքին գործիք դարձած իշխանություններին, պայքարում էին արհեստավորների շահերի պաշտպանության համար՝ ծերերի առյանի հետ միասին կատարելով

²⁴⁴ Այս կանոնագիրը բաղկացած է 34 հոդվածից, «Լուծա» 1898, Տփղիս, գիրք Ա:

²⁴⁵ Տե՛ս **Աբրահամյան Վ.**, նշվ. աշխ., 1956, էջ 246:

²⁴⁶ Տե՛ս **Խաչիկյան Լ. Ս.**, Երզնկայում 1280 թ. կազմակերպված «եղբայրությունը», ՀՍՄՀ ԳԱ Տեղեկագիր // Հասարակական գիտություններ, № 12, 1951, էջ 73-84:

ժամանակակից արևմտյան երկրների կայացած արհմիությունների դերը:

Մեծ է եղել համքարությունների դերը նաև ժողովրդի մեջ առաջավոր գաղափարներ տարածելու գործում: Նրանք այնքան մեծ հեղինակություն էին վայելում, որ շատ հաճախ «վերևները» հարկադրված էին լինում հաշվի նստել նրանց հետ՝ իբրև ժողովրդի մեջ գործող կարող ու ժի²⁴⁷:

Նշված կազմակերպությունների գործունեության ուսումնասիրություններից կարելի է եզրակացնել, որ թե՛ համքարությունները, թե՛ էսնաֆությունները հասարակական խոշոր նշանակության սոցիալական ինստիտուտներ էին, որոնք կարևոր դեր էին խաղում ոչ միայն հասարակության տնտեսական, կենցաղային հիմնախնդիրները լուծելու գործում, այլև ձևավորում էին պայքարի մտածելակերպ, ստեղծում պատմամշակութային արժեքներ, տարածում առաջադեմ գաղափարներ: Նրանց շնորհիվ հատկապես առևտրի ծաղկումը դարձավ հասարակության առաջընթացի մեծ ազդակ կյանքի բոլոր բնագավառներում:

ժամանակակից հայրենական արհմիությունները, թեև «դեյուրե» գործում են, և դրանց անդամակցությունը կրում է կամավոր բնույթ, սակայն փաստացի դրանց գործունեությունը այնքան էլ արդյունավետ չէ: Խնդիրն այն է, որ արհմիությունները պետք է գործեն պետական իշխանություններից անկախ և պաշտպանեն աշխատողի շահերը, ինչը, ըստ էության, մեր դեպքում հաճախ տեղի չի ունենում (օրինակ «Նաիրիտ»-ի, Armavia-ի, Վանաձորի քիմիական գործարանի աշխատակիցների բողոքի ակցիաները կրում են տարերային, ոչ համակարգված բնույթ և չունեն փաստացի ղեկավար): Արհմիությունների թերի գործունեությունն ակնառու է այն դեպքում, երբ կառավարության կամ գործատուների միջև չի ձևավորվում կառուցողական երկխոսություն:

Ժողովրդավարական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ են սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչների համագործակցություն, իրավունքի գերակայություն և օրենքի

²⁴⁷ Տե՛ս **Առաքելյան Բ.**, Քաղաքները և արհեստները Յայաստանում IX-XIII դարերում, 2-րդ հատոր, Եր., Յայկական ՍՍԴ ԳԱ հրատարակչություն, 1964, էջ 202:

առջև բոլորի հավասարությունն: Այս դեպքում կապահովվի ներդաշնակ փոխհամաձայնությունն պետական իշխանության օղակների և սոցիալական ինստիտուտների միջև, ինչպես նաև հասարակության զարգացման ու առաջընթացի համար կայուն հիմք կստեղծվի:

Թե՛ ՔՅ, թե՛ ՅԿ կայացումը, թե՛ դրանց համագործակցությունը քաղաքական իշխանությունների հետ մեծապես կախված են քաղաքական մշակույթից և քաղաքական իշխանություններից, ուստի 25-ամյա ՅՅ-ում դեռևս շատ անելիքներ կան հասնելու զարգացման գագաթնակետին: Այս գործընթացում հսկայական դեր ունի նաև ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունը:

ՔՅ զարգացմանն ու ՅԿ հատվածի կայացմանն ուղղված մյուս կարևոր քայլը որակապես նոր հասարակության ձևավորումն է: Այս գործընթացի ակունքները պետք է փնտրել գտնել կրթության ոլորտում: Հանրակրթությունն ու դպրոցն առհասարակ պետության համար անփոխարինելի ինստիտուտներ են, որոնց գործունեությունը միտված է հայրենասիրությանը, ազգապահպանմանն ու պետականասիրությանը:

Քաղաքացիական կրթությունը Հայաստանում համաժողովրդական-համամարդկային արժեքների զարթոնքի երաշխիք է, որը կոչված է հանդուրժողականության, մարդու իրավունքների պաշտպանության, կոռուպցիայի դեմ պայքարի և կոնֆլիկտների խաղաղ լուծման մշակույթի արմատավորմանը: Իզոլորչե, որ քաղաքացիական կրթությունն առաջնային դեր ունի աշխարհում ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացում:

Կարևորելով քաղաքացիական կրթության դերը քաղաքացիական հասարակության և ակտիվ քաղաքացի դաստիարակելու գործում՝ հանրակրթական դպրոցի կարևորագույն խնդիրներից է դառնում դպրոցական տարիքում աշակերտների մեջ սերմանել ժողովրդավարության սկզբունքներն և արժեքները: Պետության ապագա քաղաքացիներին պետք է վաղ տարիքից սովորեցնել այնպիսի որակներ, ինչպիսիք են որոշումներ կայացնելը, համայնքի զարգացման գործընթացում իր դերն արժևորելն ու գնահատելը,

սեփական կարծիքից զատ՝ դիմացինի տեսակետը ընդունելը և հարգելը, այն է՝ հանդուրժողականություն:

Քաղաքացիական կրթության իրականացման համար հատկապես կարևորվում է հանրակրթական դպրոցը, քանզի վերջինս սովորողի համար այսօր գործնականում գիտելիքների այն «դարբնոցն» է, որտեղ նա ծանոթանում է ժողովրդավարության այբուբենին: Քաղաքացիական կրթությունն ապահովվում է որոշակի արժեքներ, սկզբունքներ, վարքի նորմեր սերմանելու ճանապարհին, որոնք էլ հետագայում նպաստում են ձեռք բերելու որոշակի մտավոր կարողություններ, մուտք գործելու հասարակական-քաղաքական ակտիվ կյանք: Անցումային շրջանում գտնվող Հայաստանի հանրակրթության բնագավառում իրականացվում են կրթական բարեփոխումների ծրագրեր, որտեղ դաստիարակությունն ու կրթությունը կարևորագույն սոցիալական հիմնախնդիր են: ՀՀ մայր օրենքում, ինչպես նաև կրթության ոլորտը կարգավորող այլ օրենքներում ամրագրված է, որ «ՀՀ-ում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»²⁴⁸, ինչպես նաև՝ «կրթությունն անձի, հասարակության, պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակամղված է գիտելիքները պահպանելուն ու նոր սերունդներին փոխանցելուն»²⁴⁹:

«Քաղաքացիական կրթությունն» տերմինն առաջին անգամ օգտագործվել է Մեծ Բրիտանիայում՝ 19-րդ դարի վերջերին, երբ երկրի գիշերօթիկ դպրոցներում սկսեցին դասավանդել «Քաղաքացիական պարտավորություններ» դասընթացը²⁵⁰: Հետագայում այս դասընթացի կարևորությունն ու անհրաժեշտությունն այնքան արժևորվեց, որ և տարածում ստացավ

²⁴⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 39 // <http://www.parliament.am/parliament.php?id=constitution> (վերջին դիտում՝ 14.04.2016թ.), ՀՀ օրենքը «Կրթության մասին» (Ընդունվել է 14.04.1999), հոդված 18-րդ հոդված // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1494&lang=arm> (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

²⁴⁹ Տե՛ս ՀՀ օրենքը «Կրթության մասին» (Ընդունվել է 14.04.1999), հոդված 3-րդ // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1494&lang=arm> (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

²⁵⁰ Տե՛ս **Фоменко С. В.**, Становление и развитие молодежной политики британского (первая треть двадцатого века), Омск, 1997, էջ 25-27:

նաև եվրոպական այլ երկրներում, շատ ավելի ուշ՝ արդեն 20-րդ դարի առաջին կեսերին նաև ողջ աշխարհում՝ բոլորովին վերջերս ընդգրկելով հետխորհրդային շատ պետություններ: Այսօր արդեն եվրոպական բոլոր երկրների կրթական հաստատություններում որպես առանձին առարկա դասավանդվում են քաղաքացիական կրթության բովանդակությանը համապատասխանող դասընթացներ կամ առարկաներ, որոնք ունեն տարբեր անվանումներ՝ «Քաղաքացիություն», «Քաղաքացիական հարաբերություններ», «Մարդ և հասարակություն», «Քաղաքական կրթություն» և այլն: Այս բոլոր առարկաները խարսխվում են քաղաքական-իրավական և բարոյագիտական գիտելիքների համակարգի վրա, այսինքն՝ գիտելիքներ քաղաքացու, քաղաքացիական դիրքորոշման, քաղաքական պատասխանատվության, քաղաքացու և հասարակության, քաղաքացու և պետության փոխհարաբերությունների մասին:

Քաղաքացիական կրթությունը սովորողին ընձեռում է ընտրության ավելի մեծ ու գործնական հնարավորություններ, ժողովրդավար ու հանդուրժող միջավայր, ուր առկա են տեսակետների բազմազանություն, մեկից ավելի ընդունելի պատասխաններ: Դրա ուշադրության կենտրոնում է ազատության և պատասխանատվության գաղափարը (լիբերալիզմի առանցքային դրույթներից մեկը)՝ պահպանել դրանց հավասարակշռումը և հասարակության առջև յուրաքանչյուր մարդու պատասխանատվության սկզբունքը²⁵¹: Քաղաքացիական կրթության առանցքային գաղափարների և ժողովրդավարության հիմնարար արժեքների՝ ազատության, հավասարության, պատասխանատվության վերաբերյալ համոզմունքները հնարավորություն են տալիս սովորողին ընդունելու անհատի ազատության ընդլայնման այն աստիճանը, որը չի խանգարում ազատ լինելու նաև մյուսներին, հետևաբար հավասար պայմաններ է ստեղծվում բոլոր քաղաքացիների համար: Դրանով մարդու ազատությունն անմիջապես կապվում է իրավահավասարության՝ օրենքի առջև բոլորի հավասարության՝ իրավական պետության հետ:

²⁵¹ Տե՛ս Քաղաքագիտություն (խմբ. **Յ. Մանուչարյան** և ուրիշներ), Եր., 2006, էջ 525-529:

Ձ. Պատրիկը, ուսումնասիրելով հետխորհրդային երկրների կրթական համակարգի առանձնահատկությունները, պարզապես պարտադիր է համարում քաղաքացիական կրթության դասավանդումը՝ հասարակության առջև ծառայած այսօրվա մի շարք խնդիրներից հետագա տարիներին խուսափելու համար²⁵²: Քաղաքացիական կրթության համակարգված և արդյունավետ մշակված ծրագիրը հնարավորություն կտա աճող սերնդին՝ պետության ապագա քաղաքացիներին, սովորելու ժողովրդավարության հիմնարար արժեքների, դրանց առանցքային էության մասին, ինչն էլ իր հերթին ժողովրդավարացման նոր ալիք կբերի երկրի ողջ հասարակական և քաղաքական համակարգում:

«Հանուն քաղաքացիական կրթության» ասոցիացիայի կողմից իրականացվող ամենամյա օլիմպիադաների արդյունքները վկայում են, որ ժողովրդավարության հիմնարար սկզբունքները գնահատում և արժևորում են հատկապես ավագ դպրոցի աշակերտները: Սա է պատճառը, որ վերջերս մի քանի երկրներում նրանք հանդես են եկել ընտրական իրավունքի տարիքային շեմը իջեցնելու նախաձեռնությամբ:

Այսօր ամբողջ աշխարհի կրթական պրակտիկայում քաղաքացիական կրթության վերաբերյալ գոյություն ունեն 3 հիմնական մոտեցումներ, որոնք կիրառվում են ժողովրդավարական կամ այդ ուղին վերջերս որդեգրած երկրներում՝ հիմքում ունենալով որոշակի չափորոշիչներ: Դրանք են ինտեգրված, համակարգային և քաղաքագիտական մոտեցումները²⁵³:

Ըստ ինտեգրված մոտեցման (այս մոտեցումը կիրառվում է նաև ՀՀ-ում)՝ քաղաքացիական կրթությունը կրթական ինքնուրույն բնագավառ չէ, այլ հասարակագիտական առարկայաշարին բնորոշ ուղղությունների հավաքական ուսուցում է, ուր քաղաքացիական կրթությունն ընկալվում է որպես սոցիալ-քաղաքական և իրավական գիտելիքների ինտեգրված դասընթաց՝ ընդհանուր սահմաններով ընդգրկելով մարդը և հասարակության գաղափարը: Այսպիսի

²⁵² Տե՛ս «Մարդ և հասարակություն»: ԿԳՆ ԿԱԻ, մեթոդական ամսագիր, Եր., 2009, N 5, էջ 74:

²⁵³ Այս մասին տե՛ս Гусаров В. И., Государство-общественное образования. Самара, Изд-во “ИТЦ”, 2006:

մոտեցման էությունը հասարակական կարգուկանոնի և վարքագծային որոշակի մոդելի ինտեգրումն է²⁵⁴:

Ըստ քաղաքագիտական մոտեցման՝ քաղաքացիական կրթության սկզբունքային և ելակետային դրույթն անհատի ձևավորումն է, որը պիտի լիարժեք համալրի քաղաքացիական հասարակությունը: Այս ուսուցման հիմնական նպատակը այն է, որ սովորողները նախապատրաստվեն ծավալելու արդյունավետ, կառուցողական գործունեությունն դեմոկրատական, իրավական պետության մեջ²⁵⁵:

Համակարգային մոտեցումը ենթադրում է, որ քաղաքացիական կրթության բովանդակությունը, ի տարբերություն մյուսների, չի կարող կրավորական կեցվածք պարունակել սովորողների մեջ հատկապես ժողովրդավարական արժեքների ըմբռնման, ընկալման գործընթացում: Ընդհակառակը՝ այն կոչված է ակտիվ և նպատակային ներգործելու սովորողների գիտակցության վրա, նրանց ուսուցանելու քննադատական մտածողություն, գնահատման, որոշումների ընդունման ինքնուրույնություն և այլն:

Հանրակրթական դպրոցում դասավանդվող բոլոր առարկաները, բացի հաստատված ծրագրերից, ունեն նաև տեսական գիտելիքների, հմտությունների ու կարողությունների և արժեքային համակարգի մակարդակներ, որոնք ամրագրված են համապատասխան առարկայական չափորոշիչներում: Քաղաքացիական կրթության պարագայում էլ պետք է կիրառվի այս մակարդակները, որոնց շնորհիվ կունենանք՝

- ա) քաղաքացիական տեսական գիտելիքներ,
- բ) քաղաքացիական կարողություններ,
- գ) քաղաքացիական կյանքին մասնակցելու հմտություններ,
- դ) քաղաքացիական որակներ:

Դրանք փոխկապակցված են և մեկ ամբողջություն են, որով էլ հնարավոր է գնահատել երկրում քաղաքացիական կրթության համագային առաջընթացը NAEP-ը²⁵⁶:

2008թ. «Քաղաքացիական կրթության խճանկար-Սիվիտաս Յայաստան» ՀԿ-ն, համագործակցելով ԱՄՆ կրթության

²⁵⁴ Տե՛ս **Морозова С. А.**, Гражданское образование в демократической России // Сб. Гражданское образование. Материалы международного проекта, 2000, էջ 340-343:

²⁵⁵ Տե՛ս **Гусаров В. И.**, նշվ. աշխ. էջ 496:

²⁵⁶ Տե՛ս «Հասարակագիտություն, Ուսուցման բովանդակություն և դասավանդման ակտիվ մեթոդներ»: Ուսումնական ձեռնարկ ուսուցիչների համար (խմբ. **Մ. Թեյլոր-Թոմս, Տ. Թովմայան**), Սիվիտաս Յայաստան, Եր., 2010, էջ 38:

դեպարտամենտի հետ, Եվրասիական վեց երկրների հետ միասին իրականացրեց «Քաղաքացի նախագիծ» («Project Citizen») ծրագիրը, որը համայնքային հիմնախնդիրների համակողմանի հետազոտություն էր: Ծրագրի տեխնոլոգիան մշակվել է 1994 թ.-ին ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգում: 2 տարի անց այն արդեն տարածվել էր ամբողջ աշխարհում՝ դառնալով համընդհանուր նախագիծ: Այդ ծրագիրն իրականացնում է սոցիոլոգիական հարցումներ, տալիս մեծ գիտելիքներ համայնքային հիմնախնդիրների, օրենսդրության և հանրային քաղաքականության մասին:

Նախագիծը մերժում է բոլոր հարմարվողական նախապաշարմունքները՝ շեշտադրելով անհատական կամ թիմային նախաձեռնողականությունը:

ԽՍՀՄ փլուզումից հետո հայ հասարակությունը հայտնվել է ազգային արժեհամակարգի վրա տարբեր քաղաքակրթությունների ազդեցության կիզակետում: ՀՀ անկախացումից հետո արևմուտքից սկսեցին արագորեն ներթափանցել ժողովրդավարության, ՔՀ և մարդու իրավունքների վերաբերյալ գաղափարները:

Ժողովրդավարացման գործընթացում ՀՀ-ում պարզապես անհրաժեշտ էին այդ արժեքները յուրացրած անձինք, որոնք հետագայում պետք է զարգացած երկրների ժողովրդավարական ձեռքբերումները համապատասխանեցնեին ազգային: Դա հնարավոր է միայն ազգային դիմագիծը պահպանելու և այն համամարդկային ու համընդհանուր արժեքներով հարստացնելու պարագայում: Միաձուլումն ու ինտեգրումն անհրաժեշտ է իրականացնել ազգային գաղափարախոսության հենքի վրա՝ ուղղահայաց կապը տարբեր սերունդների միջև ամրապնդելու, ինչպես նաև՝ քաղաքացիական հասարակություն ունենալու ճանապարհին չանտեսելով նաև սփյուռքի դերակատարությունը²⁵⁷: Քաղաքացիական կրթությունը մեծապես պայմանավորված է հատկապես ավանդույթների փոխանցմամբ և հասարակական կյանքին հասարակության մասնակցության նոր մոդելների ձևավորմամբ:

Լրամշակված կրթակարգում՝ պետական և առարկայական չափորոշիչներում, ի թիվս կարևորագույն այլ խնդիրների, որոնք

²⁵⁷ Տե՛ս **Վարդանյան Թ.**, նշվ. աշխ., էջ 24:

պետք է լուծի հանրակրթությունը, հիմնական նպատակներից մեկն էլ իր իրավունքների ու պարտականությունների լիարժեք իմացությունը, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությունը օժտված նախաձեռնող և հասարակական գործունե դիրքորոշում ունեցող, ընտրությունն կատարող և իր ձայնի իրավունքը կիրառելու ունակ²⁵⁸ շրջանավարտ ունենալն է, իսկ կրթության մասին օրենքում հանդիպում ենք «համամարդկային և ազգային արժեքների հաղորդակից, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործունե քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի ձևավորելն է»²⁵⁹ մտքին:

Կրթությունն ու քաղաքացիությունը մեր երկրի համար իրականում բազմաթիվ խնդիրների լուծման բանալի են:

Ուսումնասիրելով արևմտյան և արևելյան քաղաքակրթությունն ու ներկայի կրթական համակարգերը՝ Է. Թոֆլերը գտնում է, որ «...գիտելիքն այսօր տեղեկատվություն է՝ օժտված գործնական արժեքավորությունը և ծառայում է որոշակի արդյունքների ստացմանը: Ուստի գիտելիքների կառավարումը, որոշակի մասնագիտական գործնական փորձով պայմանավորված, շարունակական գործընթաց է, որն սկսվում է նախակրթարանից և ավարտվում մարդու մահվամբ²⁶⁰»: Արդար ու պատասխանատու, համերաշխ ու ակտիվ քաղաքացիներից բաղկացած մարդկանց հանրությունն դաստիարակելու, պետականություն կերտելու համար ամենաարդյունավետ և ծավալային առումով ողջ հանրապետությունում ծածկույթ ապահովելու համար կրթությունն իրականում շարունակում է մնալ միակ ուղին: Քաղաքացիական կրթության դերը մեծ է նաև քաղաքական սոցիալականացման գործընթացում:

²⁵⁸Տե՛ս **Սկրտչյան Մ.**, Հայաստանի հանրակրթության կրթակարգը և պետական չափորոշիչները // http://www.noravank.am/upload/pdf/105_am.pdf (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

²⁵⁹Տե՛ս ՀՀ օրենքը «Կրթության մասին», հոդված 18, 3-րդ կետ // <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1494&lang=arm> (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

²⁶⁰Տե՛ս **Մարգարյան Մ.**, Կրթության որակի կառավարման գործընթացի գնահատման հիմնախնդիրները ՀՀ-ում, (30.08.2014) // <https://mmmargaryan.wordpress.com/2014/08/30/> (վերջին դիտում՝ 26.05.2015թ.):

➤ Ամփոփելով վերոհիշյալ մոտեցումները՝ քաղաքացիական կրթությունը կարելի է սահմանել հետևյալ կերպ. **«Քաղաքացիական կրթությունը անձի ձևավորմանը միտված ուսումնական գործընթաց է, որը կոչված է նպաստելու քաղաքականության մասին գիտելիքների և սովորողի սոցիալական որակների ձևավորմանը՝ հիմքում ունենալով ժողովրդավարության հիմնարար արժեքների և ազգային գաղափարախոսության բաղադրատարրերի միածուլումը»:**

➤ Չունենալով ՔՅ հարուստ ժառանգություն՝ փոքր-ինչ դժվար է ըմբռնել դրա էությունը, դերն ու նշանակությունը, հիմնական գործառնությունները, գոյության անհրաժեշտությունը և այլն: Այս ամենը հաշվի առնելով՝ բավականին դժվար է նաև կանխատեսել, թե ՅՅ-ում ինչ հնարավոր սցենարներ են հարկավոր ՅԿ զարգացման համար. ակնառու հաջողությունների բացակայության պարագայում փոքր-ինչ դժվար է խոսել մեզանում ՅԿ-ների ուժեղ կամ թուլյլ կողմերի մասին, չնայած միտումները խոստումնալից են, քանի որ վերջին 2-3 տարիներին որոշ նախաձեռնություններ հաջողությամբ են պսակվել (Մաշտոցի պուրակ, Թռչկանի ջրվեժ, Խոսրովի արգելանոց, Չվարթոց օդանավակայան, Գառնու հեթանոսական տաճար, պարտադիր կենսաթոշակային համակարգի, ուղևորների և էլեկտրոգիայի թանկացման դեմ ակցիաներ և այլն):

ՅՅ-ում ՅԿ հատվածի զարգացման մարտահրավերներն են՝

1. ՅՅ-ում թուլյլ է կառավարություն-քաղաքացիական հասարակություն կազմակերպություններ համագործակցությունը: Խնդիրն այն է, որ ի դեմս ՅԿ-ների պետությունը չի տեսնում լուրջ գործընկերոջ: ՅԿ-ները բավարար չափով նախաձեռնող չեն: Յամաձայն ԱՄՆ ՄԶԳ ՔԿ կայունության ինդեքսի՝ ՅՅ-ում որոշ նախարարություններ ՔՅ գործունեության մասին մոտավոր կամ անորոշ պատկերացում ունեն: Ավելին, պետական պաշտոնյաները բացասական կարծիք ունեն ՅԿ-ների մասին առհասարակ: Նման վերաբերմունքը կարելի է բացատրել ժամանակ առ ժամանակ կառավարության դեմ ուղղված նրանց ակցիաներով:

2. Հասարակության կարծիքը ՅԿ-ների վերաբերյալ ևս մտահոգիչ է. նակարծում է, որ ՅԿ-ները «կրում են ձևական բնույթ և գումար աշխատելու միջոց են»: Դրանք թուլյլ են, քիչ են զարգացած և իրենց գործունեությամբ դեռևս բավարար չափով անկախ չեն:

Հանրային այսչափ ցածր ընկալելիության վրամեծ ազդեցություններն թողնում ՀԿ հատվածի գործելաճում առկա որոշ բացթողումներ, որոնք տեսանելի են նաև իրենց՝ ՀԿ-ների համար: Նրանցից յուրաքանչյուրը այս հարցի վերաբերյալ կարող է ունենալ տարբեր բացատրություններ: Սակայն գոնե այս պահի դրությամբ պետք է արձանագրել, որ սեփական գործելակերպի ու աշխատելաճի արդյունավետության բարձրացման համար ՀԿ-ները բավարարչափոփոխման ռեսուրսներ ունեն, որոնք պարզապես արդյունավետ չեն օգտագործվում:

3. Մեզանում դեռ շարունակում է արդիական մնալ ՀԿ-ների ինստիտուտալացման խնդիրը: Առհասարակ, ինստիտուտալացումը միտում ունի կայանալու, երբ հասարակության մեջ առկա են բնականոն, ներդաշնակ գործընթացներ բոլոր ոլորտներում: Այս դեպքում քաղաքական և հասարակական կառույցների զարգացումը տեղի է ունենում զուգահեռաբար: Ինչպես նշում է Թ.Պարսոնսը, յուրաքանչյուր ենթահամակարգի ինստիտուտի կայացումն պաստում է մյուս ենթահամակարգի ինստիտուտների զարգացմանը:

4. Իշխանական կառույցները ՀԿ-ները համարում են ոչ թե որչափ աշխարհում ընդունված «շահույթ չհետապնդող կազմակերպություն», այլ հակառակը՝ շահույթ հետապնդող կազմակերպություն: Ըստ ԱՄՆ ՄԶԳ գեկոլյցի՝ կառավարությունը գտնում է, որ ՀՀ-ում ՀԿ-ները հասարակությունից մեկուսացված են, չունեն անդամակցության աճի միտում, հետևաբար նաև՝ հասարակության կողմից լուրջ աջակցության հիմքեր ու հեռանկարներ: Այլ կերպ ասած՝ ՀԿ-ները չունեն սոցիալական հենարան: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ վերջին եզրահանգումն իսկապես արդարացի է:

5. Ցանկացած երկրում ՀԿ հատվածի զարգացման թիվ մեկ երաշխավորը իշխանություններն են և ՔՀ կառույցների հետ համագործակցություն սկսելու նրանց պատասխանատվությունը: Արևելք-արևմուտք քաղաքակրթությունների կիզակետում հայտնված ՀՀ-ն իր հանրային քաղաքականության մեջ կիրառում է այս երկու բևեռների քաղաքական մշակույթի տարրերը: Ուստի ՔՀ համագործակցության մեջ ևս նկատելի է իշխանության երկակի, ոչ միանշանակ վերաբերմունք ՔՀ նկատմամբ: Իսկ ՀԿ-ները չունեն

հանրային քաղաքականության վրա ազդելու կարողություններ և հմտություններ, չնայած ռազմավարական և իրավական փաստաթղթերով ամրագրված են այս գործընթացն ապահովող բոլոր հնարավորությունները: Խնդիրը այն է, որ քաղաքական իշխանությունները ՅԿ-ները ավելի շուտ ընկալում են որպես սպառնալիք, քան գործընկեր²⁶¹:

6. ՅՅ-ում ՔՅ և ՅԿ զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրերը, հայեցակարգերը, իրավական ակտերն ու օրենքները դեռևս չեն տալիս համապատասխան որակ: Այս առումով, կարծում ենք, անելիքներն ավելի շատ են, քան ձեռքբերումները: ՅՅ Յանրային խորհրդի քաղաքացիական հասարակության զարգացման հանձնաժողովի նախագահը նշում է, որ դեռևս գտնված չեն իշխանություն-ՅԿ-ների շփումների և երկարաժամկետ համագործակցության առավել արդյունավետ մեխանիզմներ, ազգային մտածողությանն ու հոգեբանությանն առավել հարիր եղանակներ:

7. Յայաստանն ու ՔՅ հանրության լայն շրջանակներում հաճախ ընկալվում են շատ խորհրդանշական ձևով՝ համապատասխանաբար ընկալվելով Երևանն ու ՅԿ-ները: Սակայն ՅՅ-ում կան նաև մարզեր, որտեղ առկա են ՅԿ-ների կողմից լուծման կարոտ շատ խնդիրներ: Մայրաքաղաքում իրականացված արդյունավետ ծրագրերի ծածկույթը դեռևս շատ քիչ է ՅԿ հատվածը կայացած համարելու համար: Կայացած ՔՅ կարող է իրական միջավայր ստեղծել ՅԿ հատվածի զարգացման համար, չնայած դա դեռևս չի փաստում ՔՅ կայացման մասին: ՅԿ-ները կարևոր, բայց ոչ եզակի, առավել ևս ՔՅ միակ բաղադրիչները չեն: Ինչպես իրավացիորեն նշում է Ա. Իշխանյանը. «ՅԿ հատվածի առկայությունն ու ակտիվ գործունեությունը անշուշտ կարևոր են պետության ներսում մի շարք սոցիալական խնդիրների լուծման գործընթացում: Այսինքն՝ մենք գործունենք ու ժեղ ՅԿ հատվածի հետ: Սակայն ունենալ ու ժեղ ՅԿ հատված չի նշանակում ունենալ նաև ու ժեղ ՔՅ»²⁶²:

²⁶¹ Տե՛ս «2011 ՔՅ կայունության ցուցանիշ-Յայաստան, 15-րդ խմբագրություն», Եր., հունիս 2012թ, էջ 9-10 // <http://www.cdpc.am/file/Armenia%206-20%20FORMATTED.pdf> (վերջին դիտում՝ 14.04.2016թ.):

²⁶² Տե՛ս *Ishkhanyan A.*, նշվ. աշխ., 2009, էջ 9-34:

8. Տարբեր հետազոտողներ տարբեր տեսանկյուններից և տարբեր մակարդակներով են գնահատում ՀՀ-ում ՀԿ դաշտի կայացվածության աստիճանը կամ միտումները: Սակայն անտեսված է մնում, թե որքանով են ՀԿ-ները արդյունավետ քաղաքացիների, այն է՝ լայն հանրության հետ հարաբերություններում, որքանով են ընկալելի, և ինչ է պետք բարելավելու սեփական գործունեությունը, ավելի մեծ հանրային ազդեցություն ունենալու և ընդունված լինելու համար²⁶³: Հանրային ցածր ընկալելիության վրա ազդում են նաև ՀԿ հատվածի գործելակերպում առկա խնդիրները: ՀԿ-ները բացեր ունեն, որոնց առկայությունը չպետք է պայմանավորել միայն սոցիալ-քաղաքական կամ պատմական գործոններով, ինչպես հաճախ արվում է:

9. ՔՀ և ՀԿ հատվածի զարգացման անմիջական պատասխանատու և ՀՀ արդարադատության նախարարությունն է, որը իր գործառնությունները իրականացնելիս պետք է հաշվի նստի ՔՀ կառույցների հետ և բարեփոխումներ իրականացնի շահառուների պահանջներն ու կարիքները հաշվի առնելով: Այսօր Արդարադատության նախարարությունն իր օրակարգում չի ընդգրկում ոչ որտեղ է բեկումնային փոփոխություններ ենթադրող ծրագրեր, իսկ իրականացված քայլերն էլ «սեղմում են» ՔՀ կառույցների, մասնավորապես ՀԿ-ների գործունեության շրջանակները՝ գրանցման, վերագրանցման հաշվետվությունների ներկայացման, և այլ ընթացակարգային հարցերում՝ առաջացնելով արհեստական խոչընդոտներ:

10. ՔՀ կայունության և զարգացման գործընթացի մյուս մարտահրավերը քաղաքական չէ, բոլորովին կապ չունի թերի օրենսդրության կամ իշխանությունների դիրքորոշումների հետ: Այն պայմանավորված է 2008թ.-ից հետո հասարակության մեջ ձևավորված սոցիալ-հոգեբանական անբարենպաստ հոգեվիճակով, հասարակական-քաղաքական գործընթացների նկատմամբ անտարբերությամբ: Ի դեպ, այս իրողությունն ապացուցելու համար բարդ ու երկարատև սոցիոլոգիական հարցումներ պետք չեն: Ընդամենը պետք է հետևել հասարակության տրամադրություններին

²⁶³Տե՛ս «Հասարակություն և հասարակական կազմակերպություններ. Փոխհարաբերությունների խնդիրներ և բարելավման ուղիներ», Եր., ԲՀՀ, 2014, էջ 2:

վերջին քաղաքական գործընթացին՝ սահմանադրական փոփոխությունների քարոզարշավներին:

ՀՀ-ում քաղաքացիական պայանում, քանի որ քաղաքացիներն անտարբեր են երկրի ապագայի, քաղաքական գործընթացների նկատմամբ: Շատ հաճախ հասարակության նման վերաբերմունքը համապատասխան գրականության մեջ համեմատվում է բնության երկու երևույթների՝ մակընթացության և տեղատվության հետ: 1988թ.-ի համընդհանուր զարթոնքից (մակընթացությունից) հետո այսօր մեզանում գերիշխող են հիասթափության, անտարբերության չափաբաժինները: Այս իրողությունը բացասաբար է անդրադառնում ոչ միայն քաղաքական, այլև հասարակական գործընթացների վրա: Հասարակության մեծ մասնունի հանապազօրյա հացի խնդիր: Այս պայմաններում խոսել քաղաքացիական հասարակության զարգացման և կայացման տեմպերի մասին, ինչ-որ տեղ ավելորդ է դառնում: Հիմնախնդրին արջի ծառայությունն է մատուցում նաև մեծացող արտագաղթը, մասնավորապես «ուղեղների» արտահոսքը:

11. ՀՀ-ում գրանցված որոշ ՀԿ-ներ իրենց գործունեությամբ և իրականացրած ծրագրերով սպառնալիք են ստեղծում ազգային արժեհամակարգի և ազգային անվտանգության համար: Խոսքն ինչ-որ չափով վերաբերում է նաև այն կրոնական կազմակերպություններին, որոնք պաշտոնապես գրանցվում են որպես ՀԿ: Լայն հանրությանը հասանելի մամուլում առավել հաճախ կարելի է տեղեկանալ որևէ ՀԿ-ի բացասական գործունեության մասին: Օրինաչափությունն այն է, որ այդ բացասական գնահատականն անմիջապես տարածվում է նաև մյուս ՀԿ-ների վրա: Թացը չորից առանձնացնելու և խնդրին լուծում տալու համար անհրաժեշտ է վերանայել ՀՀ ՀԿ օրենքում դրանց ֆինանսավորման տարբերակները՝ դրանք հնարավորինս կողմնորոշելով դեպի սեփական կառավարություն:

ՀՀ-ում ՔՀ և ՀԿ հատվածի ձեռքբերումներից են՝

1. Հանրային խորհրդի ստեղծումը, որը փաստորեն պետք է հնչեցնի հանրության ձայնը՝ համագործակցելով ՀԿ և հասարակական այլ միավորումների հետ՝ ըստ գործունեության ոլորտների: Այսօր այս կառույցի ոչ միայն գործունեությունը, այլ գոյությունն է

կասկածների տեղիք տալիս աշխատանքները թույլ լուսաբանված լինելու պատճառով: Կարծում ենք՝ Սահմանադրական փոփոխության ներդրում կարելի է ներառել նաև Հանրային խորհրդին վերաբերող հոդված՝ ընդլայնելով դրա գործունեության և լիազորության շրջանակները: Սա կնպաստի մեծ թվով ՀԿ-ների անդամակցությանն այս կառույցին՝ ապահովելով համապատասխան արդյունք:

2. Քաղաքացիների շրջանում ճանաչում են ստացել հատկապես բարեգործությունն իրականացնող ՀԿ-ները, որոնք ամենատարբեր սոցիալական ծրագրերով մեծ աջակցություն են ցուցաբերում ոչ միայն հասարակության թիրախային խմբերին, այլև պետությանը: Մեծ է նաև բնապահպանական, կրթական ծրագրեր իրականացնող ՀԿ-ների վարկանիշը: Վերջին 2-3 տարիներին առավել ակտիվություն են ցուցաբերում սննդի ոլորտի, սպառողների, վարորդների շահերի և իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ները: Սյուսոբ քիչ կգտնվեն մարդիկ, ովքեր չեն լսել «Աքիլլես», «Տաքսիստների իրավունքների պաշտպանություն», «Ազգային բնապահպանական ճակատ», «Առողջ սնունդ», «Հայ Ձմեռ պապ», «Բժիշկներ առանց սահմանների», «Կրթությունն առանց սահմանների», «Ասպարեզ», «Սիվիլիթաս», «Հայ կական խոհանոցի ավանդույթների պահպանում ու զարգացում» և այլ ՀԿ-ների մասին:

3. Մեծ է ՀԿ-ների դերը հասարակության մեջ բևեռացման միտումները նվազեցնելու հարցում: Արդյունքն ավելի ակնհայտ կլինի, երբ մարզերում նույնպես ձևավորվի հասարակական միավորումներ ստեղծելու մշակույթը: Կարծում ենք՝ դա ավելի իրական կդառնա եթե ՏԻՄ կամ մարզպետարաններին կից գործի Հանրային խորհրդի մարզային գրասենյակ կամ համակարգող խումբ: Անշուշտ, բարձրաձայնելու կարոտ հարցերն ու անելիքներն այս ոլորտում ավելի համակարգված բնույթ կստանան:

4. Հանրակրթության և հասարակության մեջ հատուկ կարիքներով մարդկանց ինտեգրումը անհնար կլինեք առանց ՔՀ-ի և ՀԿ-ների: Երկար տարիներ նման քաղաքացիների համար անմատչելի էին գրեթե բոլոր հանրակրթական դպրոցներն ու նախակրթարանները: Այսօր բոլորովին այլ է պատկերը այս ոլորտում՝ շնորհիվ «Հուլյսի կամուրջ», «Մարդը կարիքի մեջ է»,

«Ունիսոն» ՀԿ-ների, որոնց ջանքերով ՀՀ-ում իրականություն է դարձել ներառական կրթությունը: Մասնավոր հատվածի հետ համագործակցությունը տվել է ցանկալի արդյունք նաև աշխատանքների ստեղծման հարցում՝ մասնավորապես Վիվասելլ -USU-ի, աշխատանքի ԷՔՍՊՈ-ների շնորհիվ:

5. ՀՀ կառավարությանը կից մարմիններում կամ խորհրդակցական կառույցներում իրենց մշտական անդամներն ունեն ՀԿ հատվածի ներկայացուցիչները, որոնք կարողանում են այս կամ այն կերպ ազդել ընդունվող որոշումների վրա: Ճիշտ է, այս աշխատանքները դեռևս չեն տալիս ցանկալի ու շոշափելի արդյունք, բայց ավատեսլիսել ու հիմքեր, այնուամենայնիվ, կան:

6. Շնորհիվ ՀԿ հատվածի՝ այսօր ՀՀ-ում երիտասարդության մի սովոր հատված հնարավորություն է ստանում իրացնել ու իր սահմանադրական իրավունքներն ու մասնավոր-անհատական պահանջմունքները²⁶⁴:

Բազմազան է հատկապես երիտասարդական կազմակերպությունների գործունեության ոլորտը՝ Էկոլոգիականից մինչև սոցիալական հիմնախնդիրներ, ֆուտբոլից մինչև երաժշտություն, բարեգործությունից մինչև կրթական-գիտական-հետազոտական աշխատանքներ: Եթե հաշվի առնենք, որ երիտասարդները երկրի ապագան են, ապա վստահ կարող ենք նշել, որ ՀԿ հատվածի հատկապես երիտասարդական թևի զարգացմամբ մենք ամրապնդում ենք երկրում ժողովրդավարական արժեքներն ու դրանք կրող քաղաքացիների կողմից ստեղծվող միությունների հիմքերը:

7. ՀՀ-ում սկսվել է ՔՀ ձևավորման գործընթաց: «Ներքևից» եկող ազդակները փաստում են այս իրողությունը, և իշխանությունները պարտավոր են հիմնավորել իրենց ընդունած որոշումների անհրաժեշտությունն ու տրամաբանությունը: ՀՀ-ում ՔՀ և ՀԿ հատվածի ճնշման շնորհիվ ԱԺ և կառավարությունը մի շարք օրենքներում փոփոխություններ են կատարել կամ վերանայել են դրանք: Սա ամենամեծ ձեռքբերումներից է և խոսում է որակապես նոր հասարակության՝ քաղաքացիական հասարակության դանդաղ, բայց կայուն զարգացման մասին:

²⁶⁴ Ավելի մանրամասն տե՛ս «Հայ կական երիտասարդական կազմակերպությունների տեղեկատու», Եր., 3Է24, ԵԱԴ, 2006:

Նշել, թե հայաստանյան ՔՅ և ՅԿ-ները այն նույն մակարդակին են, ինչ 1988թ. -ին, ճիշտ չի լինի: Այսօր դրանց ձևավորման, գործունեության ու ակտիվ գործունեության համար ընդունվել են մի շարք օրենքներ, իրավական ակտեր, միջկառավարական պայմանագրեր ու պարտավորություններ: Այս ամենով հանդերձ՝ ճիշտ չի լինի հայտարարել, թե մենք «կառուցել ենք» ՔՅ, և ՅԿ-ներն ու ՔՅ այլ ինստիտուտները կայացած են: Վերջիններս խոցելի են և կարիք ունեն հանրային ավելի մեծ վստահության, քան այսօր: Խնդիր է, որ ոչ բոլոր ՅԿ-ներն են դա ընդունում որպես սեփական խնդիր: Ռազմավարական քայլերի մշակումը այս գործում դեռ արդիական է և անհրաժեշտ ցանկալի արդյունքի հասնելու համար: Ընդհանուր առմամբ, միտումը կարելի է դրական համարել:

ՔՅ կայացումն ու դրա միջոցով ՅԿ հատվածի առաջխաղացման կարևորագույն ուղին քաղաքացիական կրթությունն է: Այն կօգնի ունենալ որակապես նոր սերունդ: Կրթությունն ամենամեծ կապիտալն է, իսկ գիտելիքը՝ անփոխարինելի ներդրում: Կարծում ենք՝ եկել է ժամանակը վերանայել ու դարոցական պարտադիր քաղադրիչում ընդգրկված առարկայացանկն ու կարծրացած ծրագրերը:

Սկսած 80-90-ական թթ.-ից ՔՅ և ՅԿ հատվածի զարգացմանն ու կայացմանն ուղղված բազմաթիվ ծրագրերին վերաբերող մեզանում միջազգային և տեղական կազմակերպությունների զեկոլյցներում և հաշվետվություններում գնահատվում է միջին, որոշ դեպքերում՝ նույնիսկ ցածր: Հասարակական փոխհարաբերությունների դինամիկան, ինստիտուցիոնալ փոխակերպումներն ու հասարակական համակարգի 3 հատվածների՝ պետության, գործարար հատվածի, քաղաքացիական հասարակության անհամաչափ զարգացումներն անվերադարձ կլանեցին անհղ 88-ի համընդհանուր զարթոնքը²⁶⁵:

Իդեալական աշխարհում պետությունը, գործարար հատվածն ու ՔՅ հավասարակողմ եռանկյան գագաթներ են համարվում ու երաշխավորում են մարդկային զարգացմանն ուղղված կառավարման արդյունավետ համակարգի էությունը: Խորհրդային ժամանահատվածում այս երեք հատվածները պարզապես մեկտեղված

²⁶⁵ Տե՛ս «Հայաստանի քաղաքացիական հասարակությունը, անցումային փուլից դեպի համախմբում: Վերլուծական զեկոլյց», Եր., 2010, էջ 5-6:

Եին, իսկ անկախացումն ու ժողովրդավարական կառույցների ձևավորումը պետք է ապահովեին հայկական «հավասարակողմ եռանկյան հրաշքը»: Սակայն այսօր հասարակության 3 հատվածները բոլորովին հավասարակողմ չեն, իսկ պետություն-ՔՀ և բիզնես հատված-ՔՀ համագործակցությունը դասական օրինակ համարել հնարավոր չէ²⁶⁶:

Անելիքներն իսկապես շատ են, սակայն կարելի է փաստել, որ այսօրվա հայ հասարակությունը երեկվանը չէ, ասել է թե՛ մենք ձևավորել ենք քաղաքացիական հասարակությունը, իսկ զարգացումն ու կայացումը ժամանակի խնդիր են: Այսօր առավել, քան երբևէ տարբեր երկրներում համակարծիք են՝ ՀԿ-ների դերն ու նշանակությունը չպետք է թերագնահատել, ի վերջո հենց այս սուբյեկտների գործունեության շնորհիվ է, որ ողջ աշխարհում իրականանում են արմատական որակական փոփոխություններ աշխարհի քաղաքական օրակարգում:

Ոչ մի ժողովրդավար երկրում ՔՀ ավարտուն վիճակի չի հասել: Այն չեն կառուցում, չեն ստեղծում, չեն ամրագրում սահմանադրությամբ կամ օրենքներով, դրան հասնում են նպատակաուղղված քաղաքականությամբ և խնդիրները համատեղ լուծելու պատրաստակամությամբ ու գիտակցությամբ: Ի վերջո համընդհանուր բարեկեցության և իրավական պետության կայացումը ոչ միայն իշխանությունների, այլ և ՔՀ նպատակն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

| | | |
|--------------------------------|------------------------------------|--------------------------|
| Ամփոփելով կազմակերպությունների | ուսումնասիրությունները դերը ՀՀ-ում | հասարակական քաղաքացիական |
|--------------------------------|------------------------------------|--------------------------|

²⁶⁶ Տես «Քաղաքացիական հասարակություն, պետություն, բիզնես փոխհարաբերությունները» (17.04.2009) // <http://ichd.org/?laid=2&com=module&module=static&id=341> (վերջին դիտում՝ 10.05.2016թ.):

հասարակության կայացման գործընթացում՝ ցանկանում եմ ներկայացնել հետևյալ եզրակացությունները.

1. Թեև ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կառույցները 1988թ.-ից ի վեր բուն զարգացումներ են ապրում, այնուհանդերձ մի շարք առումներով ոլորտը դեռևս սաղմանային փոխակերպումների փուլում է: Սա ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Օբյեկտիվ գործոնները պայմանավորված են ոլորտը կարգավորող օրենսդրական և իրավական նորմատիվ դաշտի թերություններով, ՀԿ-ների ինստիտուցիոնալ զարգացման և ֆինանսական աջակցության աղբյուրների սահմանափակ հնարավորություններով: Սուբյեկտիվ գործոնները դրսևորվում են փորձի պակասի, սոցիալական գործընկերության կայուն ավանդույթների, հասարակական կարծիքին բնորոշ իներտության, երբեմն էլ՝ արսենտեիզմի տրամադրություններով:

2. Քաղաքացիական հասարակության հիմախնդիրների հետազոտման առումով նպատակահարմար է մասնագիտական գրականության մեջ առկա սահմանումներն ու մեկնությունները դասակարգել լայն և նեղ ըմբռնումներով:

